Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԻՊՐՈՍԻ ԹԵՄԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՊՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ (1920-1940թթ.). ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԱՃՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2021

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԷԴԳԱՐ ԳԱԳԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԻՊՐՈՍԻ ԹԵՄԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՊՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ (1920-1940թթ.). ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԱՃՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2021

ՀՏԴ 93/94։27-9
ԳՄԴ 63.3+86.37
Հ 854

Հրատարակության է երաշխավորել ՀՊՄՀ
պատմության և հասարակագիտության ֆակուլտետի
խորհուրդի կողմից

Խմբագիրներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Խ.Ստեփանյան
պ.գ.թ. Ա.Հարությունյան
Գրախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ս.Պողոսյան
պ.գ.թ., պրոֆեսոր Ա.Հարությունյան

Հովհաննիսյան Է. Գ.
Հ 854 Կիպրոսի թեմի վերակազմությունը և կիպրահայությունը (1920-1940թթ.). Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյան / Է. Գ. Հովհաննիսյան.- Եր.։ Հեղ. հրատ., 2021.- 151 էջ։

Աշխատությունը նվիրված է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Կիպրոսի թեմի վերակազմության գործընթացին։ Առանձին անդրադարձ է կատարված Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի գործունեությանն որպես Կիլիկիո կաթողիկոսական փոխանորդ և կաթողիկոս։

Աշխատությունը նախատեսված է պատմաբանների, եկեղեցու և սփյուռքի պատմության հարցերով հետաքրքրվողների համար։

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ 20TTSH-043 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում։

ՀՏԴ 93/94։27-9
ԳՄԴ 63.3+86.37

Նվիրվում է Արցախյան պատերազմների նահատակների անմար հիշատակին

ISBN *978-9939-0-3651-9* © *Հովհաննիսյան Է. Գ., , 2021*

ԱՌԱՋԱԲԱՆ

1921թ. պատմական Կիլիկիան լքելուց հետո Կիլիկիո կաթողիկոսությունը հայտնվեց ծանր վիճակում։ Անգամ դրված էր հայոց եկեղեցու նվիրապետական այդ աթոռի հետագա գոյության հարցը։ Շնորհիվ Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանի համառ ջանքերի Կիլիկիո աթոռը 1920-1930-ական թվերին վերակազմավորման կարևոր շրջան անցավ։ Այն ոչ միայն չդադարեցրեց գոյությունը, այլև 1930թ. հաստատվելով Անթիլիասում՝ ցեղասպանությունից հետո ստեղծված նոր պայմաններում շարունակեց պատմական առաքելությունը՝ դառնալով սփյուռքահայության մի ստվար զանգվածի համար կարևոր հոգևոր-կրոնական կենտրոն։

Կիլիկիան լքելուց հետո Կիլիկիո կաթողիկոսությունը կորցրել էր իր բոլոր թեմերը, բացի Հալեպի թեմից։ Կաթողիկոսության վերակազմության համար խիստ կարևոր էր նոր թեմերի ստեղծումը, հատկապես, երբ Սիրիայում և Լիբանանում հաստատված գաղթականների մեծ մասը նախկինում գտնվել էին Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության ներքո։ Մինչ Սիրիայի և Լիբանանի երուսաղեմապատկան թեմերի հանձնումը Կիլիկիո կաթողիկոսությանը, առաջին թեմը, որ համառ պայքարից հետո 1920-ական թվականների կեսերին անցավ Կիլիկիո աթոռի իրավասության ներքո՝ Կիպրոսի հայոց թեմն էր։

Կիպրոսում հայերի մասին առաջին հիշատակությունները գալիս են դեռևս 6-7-րդ դարերից՝ բյուզանդական տիրապետության շրջանից[1]։ Կիպրոսի հետ հայերի առնչությունները մեծացան Կիլիկիայի հայոց թագավորության շրջանում։ Այդ ժամանակից Կիպրոսում հաստատված հայերի թիվը սկսեց աճել։

---

[1] **Բակուրան**, *Կիպրոս կղզի, Նիկոսիա, 1903, էջ 49-50։* **Ալպոյաճեան Ա.**, *Կիպրոս կղզին, «Ամէնուն տարեցոյցը», Փարիզ, 1927, էջ 210-212։* **Ակինեան Ն.**, *Հայ Կիպրոս, «Հանդէս Ամսօրեայ», 1937, թ. 6-8, էջ 378-381։* Hadjilyra A.-M. *The Armenians of Cyprus*. Kalaysjian Foundation, 2009, p. 10.

Արդեն 12-րդ դարի վերջին՝ Գրիգոր Դ. կաթողիկոսի օրոք, առաջին անգամ հիշատակվում է Կիպրոսի թեմը[1]։ Հետագա դարերում Կիպրոսը դառնում է հայության կարևոր հոգևոր-մշակութային կենտրոններից մեկը։ Այդ հարցում կարևոր դերակատարում է ունենում հայոց եկեղեցին։

Պատմական ուսաղեմի կամ Կ.Պոլսո պատրիարքությունների հոգևոր-վարչական իտարբեր շրջաններում Կիպրոսի թեմը գտնվել է հայ եկեղեցու տարբեր նվիրապետական աթոռների ենթակայության տակ։ Կիլիկիո թագավորության շրջանում անմիջապես ենթարկվում էր Ամենայն հայոց կաթողիկոսին, հետագայում, երբ ընդհանրական կաթողիկոսությունը հաստատվեց էջմիածնում, այն հիմնականում գտնվել է Կիլիկիո կաթողիկոսության, 19-րդ դարի կեսից՝ Երրավասության ներքո[2]։

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ Կիպրոսի թեմի «վարչականօրէն կազմաւորումը» սկսում է 19-րդ դարի կեսից[3]։ Կիլիկիո Բաբկեն Ա. Աթոռակից կաթողիկոսի բնորոշմամբ. «Պէտք է դիտել, որ Կիպրոսի հայութիւնը եկեղեցական վարչական կողմէն միշտ մնաց Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռին իրաւասութեան ներքեւ ... Երուսաղէմի կամ Կ.Պոլսի պատրիարքութեանց հետ Կիպրոսի կապակցութիւնը ժամանակաւոր կարգադրութիւններ էին»[4]։ Սահակ Բ. 1924թ. ապրիլի 8-ի կոնդակում գրում էր. «Պատմական ցուցմունք եւ յիշատակարանք զանազան գրչութեանց դնին զԿիպրոս ի թիւս վիճակաց կաթողիկոսութեան Կիլիկիոյ։ Այլ թէ զիա՞րդ եւ ո՞րպէս յանցել դարում մերթ ընդ մերթ ընդ

---

[1] **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 211։ **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972,Անթիլիաս,1975,էջ 283։

[2] **Բակուրան**, նշվ. աշխ., էջ 79-81։ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, Նիկոսիա, 2010, էջ 389։ **Զէպէէան Ղ.**, Յիշատակարան կիպրահայ գաղութի, Անթիլիաս, 1955, էջ 69-70։

[3] Կիպրոսի թեմի հովուական կարգը եւ թեմական կազմաւորումը, Նիկոսիա, 2011, 24-54։

[4] **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս. Հայ գաղութը եւ Սբ.Մակար, Անթիլիաս, 1936, էջ 37-38։

իրաւասութեամբ անցեալ իցէ պատրիարքութեանց Երուսաղէմի եւ Կ.Պոլսոյ, չեղեւ հնար ստուգութեան այսմ. մինչդեռ ի վերջ կոյս ԺԸ դարու եւ ի սկիզբն ԺԹ դարու կաթողիկոսունք Կիլիկիոյ ընդ ժամանակս այցելեալ են կղզւոյն իբրեւ սեպհական վիճակի իւրեանց»[1]։

Կիլիկիայի հայաթափումից հետո մի պահ Սահակ կաթողիկոսն անգամ ցանկանում էր աթոռը հաստատել Կիպրոսում[2]։ Սակայն գաղթականների ստվար զանգվածներին ավելի մոտ կանգնելու հրամայականը Կիլիկիո աթոռի հերթական հանգրվանը դարձրեց Անթիլիասը։

1908թ. Կիպրոսի թեմը Երուսաղեմի պատրիարքությունից անցնում է Կ.Պոլսո պատրիարքության իրավասության ներքո[3]։ 1911-1914թթ. Կ.Պոլսո հայոց պատրիարքության և Կիլիկիո կաթողիկոսության միջև քննարկվում էր Կիպրոսի թեմը վերջինիս ենթակայությանը փոխանցելու հարցը[4]։ Ի դեպ, Կ.Պոլսո պատրիարքությունն ինքն էր խնդրել Կիլիկիո կաթողիկոսությանը ստանձնել հոգևոր իշխանությունը[5]։ 1914թ. հունիսի 27-ին Կ.Պոլսո Ազգային կենտրոնական վարչության խառը ժողովը, քննելով Կիպրոսի հովվության խնդիրը և ելնելով այն հանգամանքից, որ. «Կիպրոսի աշխարհագրական դիրքն մերձաւորութեամբ եւ հաղորդակցութեանց դիւրութեամբ կրնար ըստ պատշաճին հովուել տեղւոյն ժողովուրդը եւ հսկել ազգ. Հաստատութեանց բարւոք մատակարարութեան վրայ»[6], որոշում է կղզու հովվությունը հանձնել Կիլիկիո կաթողիկոսությանը՝ միաժամանակ հանձնարարելով Կիպրոսի թաղական խորհրդին այսուհետ առաջնորդվել Կիլիկիո կաթողիկոսության հրահանգներով։ Սրան հետևում է 1914թ. հուլիսի 30-ի Կ.Պոլսո

---

[1] *Կիպրոսի թեմի հովուական կարգը, էջ 205։*
[2] ***Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջեր 286, 290-291։*
[3] *Կիպրոսի թեմի հովուական կարգը, էջ 230-235։*
[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 169-171, 180-185։*
[5] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 96-97, 389-390։ **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջեր 286, 289։*
[6] ***Չէպէէեան Ղ.**, նշվ. աշխ, էջ 71։*

Ազգային կենտրոնական վարչության որոշումը Կիպրոսի թեմը Կիլիկիո կաթողիկոսությանը հանձնելու վերաբերյալ, որին համաձայնվել էր Երուսաղեմի հայոց պատրիարքությունը[1]։

Փաստորեն, Կիպրոսի թեմը կրկին Կիլիկիո աթոռին հանձնման հարցը գրեթե վճռված էր։ Սակայն, առաջին աշխարհամարտը և հաջորդած իրադարձությունները առժամանակ կանխեցին մեկնարկած գործընթացը և թույլ չտվեցին ամբողջությամբ լուծել հարցը, որն էլ առիթ հանդիսացավ 1920-ական թվերի սկզբին Կիպրոսի թեմի շուրջ ստեղծված տագնապին։ Նոր իրողությունների պայմաններում թեմն աստիճանաբար անցավ Կիլիկիո կաթողիկոսության իրավասության ներքո։ 1935թ. Կիպրոսի թեմում պատրաստված մի տեղեկագրում, որտեղ անդրադարձ է կատարվում թեմի պատկանելության հարցին, նշվում էր. «Կիպրոսը, իբր ժողովրդային հայութեան կեդրոն մը կարեւորութիւն մը կը ստանայ միայն 1921 թուականէն վերջ, երբ Կիլիկիոյ պարպումով 4000ի մօտ մնայուն Հայ բնակչութիւն մը կը հաստատուի անդ, մեծամասնօրէն կիլիկեցի եւ բնական յեղաշրջումը տեղի կունենայ, այսինքն վերջնականապէս կը կապուի Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերուն եւ ենթակայ կըլլայ Կիլիկիոյ կաթողիկոսութեան Կենդր. Իշխանութեանց տնօրինութիւններուն»[2]։ Կիպրոսի թեմը Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության անցնելուց հետո վերջինս հսկայական ջանքեր գործադրեց կղզում հաստատված գաղթականության համայնքային կյանքի կազմակերպման և հայապահպանության ուղղությամբ։

Ցավոք, մինչ օրս Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պատմության հարցերը, հատկապես ցեղասպանությունից հետո ընկած ժամանակաշրջանը, համակողմանի և համակարգված ուսումնասիրության չի ենթարկվել հայաստանյան պատ-

---

[1] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 229։ Կիպրոսի թեմի հովուական կարգը, էջ 183-184։

[2] Կիպրոսի թեմի հովուական կարգը, էջ 230-234։

մագիտության կողմից։ Կիլիկիո կաթողիկոսության Կիպրոսի թեմի 1920-1940-ականների պատմությանը նվիրված սույն աշխատանքը նպատակ ունի մասամբ լրացնելու այդ բացը։

Հետազոտելով Կիպրոսում կիլիկիահայության հաստատման, թեմի վերակառուցման և տեղի հայկական համայնքի վերակազմակերպման ընթացքը՝ պարզ է դառնում նոր ձևավորվող սփյուռքում ընթացող գործընթացների տրամաբանությունը, ցեղասպանությունից հետո հայկական համայնքների առջև ծառացած մարտահրավերները և դրանց հաղթահարման արդյունավետ ուղիները, որոնք ինչ-որ իմաստով նման և ընդհանրական էին նաև մյուս համայնքների համար։ Կիպրոսի թեմի օրինակով պարզ է դառնում նաև հայկական սփյուռքի ձևավորման այն դժվարին ու բարդ ուղին, որ հաղթահարում էին սփյուռքացման գործընթացն անցնող գաղթական զանգվածները ցեղասպանությունից հետո։

Կիպրոսի հայոց թեմի և կիպրահայության հետ կապված հարցերը անհնար է համակողմանի և ամբողջական ներկայացնել առանց անդրադառնալու հայոց եկեղեցու երախտավորներից մեկի՝ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի կյանքին ու գործունեությանը, հատկապես՝ 1920թ. հետո, երբ վերջինս ստանձնեց Կիպրոսի թեմական առաջնորդությունը, իսկ 1936թ. զուգահեռաբար մասնակցեց Կիլիկիո կաթողիկոսության անմիջական ղեկավարմանն որպես կաթողիկոսական փոխանորդ, ապա՝ կարճ ժամանակ տեղապահ և կաթողիկոս։

Աշխատության համար կարևոր նշանակություն են ունեցել մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ, որոնց թվում անփոխարինելի է, մեր համոզմամբ, Կիլիկիո կաթողիկոսության 20-րդ դարի պատմության լավագույն գիտակ Բյուզանդ Եղիայանի մեծարժեք գործը՝ «Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972»[1] խորագրով։ Կիպրոսում հայոց ներկայության և ժառանգության հետազոտ-

[1] **Եղիայան Բ.**, նշվ. աշխ., 1975։

ման համար կարևոր են Բակուրանի «Կիպրոս կղզի»[1], Արշակ Ալպոյաճյանի «Կիպրոս կղզին»[2], Բաբկեն Կյուլեսերյանի «Հայ Կիպրոս. Հայ գաղութը եւ Սբ. Մակար»[3], Ներսես Ակինյանի «Հայ Կիպրոս»[4] աշխատությունները։

Սույն ուսումնասիրությունն անհնար կլիներ իրականացնել առանց այն մեծարժեք արխիվային փաստաթղթերի ժողովածուների, որոնք վերջին տարիներին հրատարակվել են Կիլիկիո կաթողիկոսության[5], ինչպես նաև Կիպրոսի հայոց թեմի կողմից[6]։ Կիպրոսի թեմի արխիվային փաստաթղթերի ժողովածուները հրատարակվել են 1997-2014թթ. Կիպրոսի թեմի առաջնորդ Վարուժան արքեպիսկոպոս Հերկելյանի խմբագրությամբ։ Այս ժողովածուները գիտական շրջանառության մեջ են դնում հարյուրավոր պատմական արժեք ներկայացնող վավերագրեր, որոնց հասանելիությունը հետազոտողներին հնարավորություն է տալիս նոր լույսի ներքո ներկայացնել Կիլիկիո Աթոռի սփյուռքյան ժամանակաշրջանի պատմության հացերը։

Սփյուռքի պատմության հարցերին անհնար է անդրադառնալ առանց ժամանակի մամուլի ուսումնասիրման։ Անփոխարինելի նշանակություն են ունեցել Կիլիկիո կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկ», Կիպրոսի Լառնակա քաղաքում հրատարակվող «Արաքս» և այլ թերթեր ու ամսագրեր։

---

[1] ***Բակուրան*** *(Վահան Քիւրքճեան), Կիպրոս կղզի, Նիկոսիա, 1903։*

[2] ***Ալպոյաճեան Ա.****, Կիպրոս կղզին, «Ամէնուն տարեցոյցը», Փարիզ, 1927, էջ 192-239*

[3] ***Բաբգէն Ա. Կիւլէսէրեան****, Հայ Կիպրոս. Հայ գաղութը եւ Սբ. Մակար, Անթիլիաս, 1936։*

[4] ***Ակինեան Ն.****, Հայ Կիպրոս, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1937, թ.6-8։*

[5] *Թղթակցութիւն Սահակ Բ. եւ Բաբգէն Ա. Կաթողիկոսներու, Անթիլիաս, 1999։ Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէկեանի, Անթիլիաս, 2002։*

[6] *Ատանայի վկաները եւ Սուրբ Ստեփանոս վկայարանը. 1909 Լառնագա։ Նիկոսիա, 2010։ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի։ Նիկոսիա, 2010։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն։ Նիկոսիա, 2011։ Կիպրոսի թեմի հովուական կարգը եւ թեմական կազմաւորումը, Նիկոսիա, 2011։*

ԳԼՈՒԽ 1
ԿԻԼԻԿԻԱՀԱՅԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԿԻՊՐՈՍՈՒՄ ԵՎ ԹԵՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1.1. Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյան. կենսագրական գծեր

Կիլիկիան լքելուց հետո՝ նոր պայմաններում, Կիլիկիո կաթողիկոսության վերակազմության գործում կարևոր դերակատարում ունեցան այն քիչ թվով հոգևորականները, ովքեր իրենց ծառայությունը շարունակում էին Կիլիկիո աթոռի շրջանակում: Նրանց թվին էր պատկանում Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը, ով շուրջ 20 տարի առաջնորդեց Կիպրոսի թեմը, իսկ կյանքի վերջին չորս տարիները նվիրեց Կիլիկիո կաթողիկոսության անմիջական ղեկավարմանը[1]:

Պետրոս Սարաճյանը ճնվել է 1870թ. հունվարի 6-ին պատմական Սիվրիհիսար (Հուստինիանուպոլիս) քաղաքում[2]: Նախնական կրթությունը ստացել է Կ.Պոլսի Ազգային հիվանդանոցի որբանոցում, ապա՝ 1888-1891թթ. ուսանել Երուսաղեմի Ժառանգավորաց դպրոցում: Ավարտելով՝ նույն թվին ձեռնադրվել է սարկավագ լուսարարարպետ Սահակ եպիսկոպոս Խապայանի ձեռքով: Ապա մինչև 1894թ. անցնում է ուսուցչական աշխատանքի Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում[3]:

1898թ. Պետրոս Սարաճյանը ձեռնադրվում է վարդապետ, 1899-1905թթ. ստանձնում Կիպրոսի առաջնորդի պարտականությունը: 1905-1909թթ. նորից անցնում է ուսուցչական աշխատանքի Երուսաղեմի Ժառանգավորաց դպրոցում՝ դառնալով նաև վարժարանի տեսուչ[4]: 1910թ. ընդամենը մի քանի ամիս

---

[1] *Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի կաթողիկոսական փոխանորդության և կաթողիկոսական շրջանին անդրադարձել ենք 3-րդ գլխում:*

[2] *«Հասկ», 1940, թ. 6-8, էջ 90: Բաբկեն Կյուլեսերյանը Պետրոս Սարաճյանի ծննդյան ամսաթիվ է նշում հուլիսի 14-ը: Տե՛ս* ***Բաբգէն Ա. Կիւլէսէրեան****, Հայ Կիպրոս, էջ 249:*

[3] ***Բաբգէն Ա. Կիւլէսէրեան****, Հայ Կիպրոս, էջ 249:*

[4] *Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի, էջ 92:*

ստանձնեց Բեյրութի հոգևոր տեսչի պարտականությունը, իսկ 1910թ. դառնում է Հաճնի հայոց թեմի առաջնորդ։ 1914թ. մայիսին Սսում Սահակ կաթողիկոսի կողմից ձեռնադրվում է եպիսկոպոս[1], իսկ 1924թ., երբ Պետրոս սրբազանը Կիպրոսի թեմի առաջնորդն էր, նրան շնորհվեց արքության աստիճան[2]։

Թուրքական ցեղասպանական ծրագրի սկզբից հետո 1915թ. մայիսի 24-ին Պետրոս սրբազանը կաթողիկոս Սահակ Խապայանի հետ տարագրվում է Հալեպ, ապա՝ Իդլիբ[3]։ Հաջորդ տարի տեղափոխվում է Երուսաղեմ, ուր հաստատվել էր Սահակ Խապայանը նոր «Կաթողիկոս-պատրիարք Թուրքիոյ հայոց» կարգավիճակով[4]։ Երուսաղեմում Պետրոս սրբազանը մնում է մինչ 1917թ., որտեղ անդամակցել էր սինոդին։ 1918-1919թթ. կարճ ժամանակով ստանձնում է Դամասկոսի առաջնորդությունը, 1919թ. հոկտեմբերին կրկին վերադառնում Կիլիկիա[5]։ Տարագրության շրջանի մասին Սարաճյան սրբազանը գրում է. «Ամբողջ կեանքս պայքար մը եղած է, ոչ միայն պաշտօնիս բերմամբ ստիպուած եմ մաքառիլ, այլ նաեւ 1914էն ի վեր տարագրութեան ցուպ ի ձեռին չափեցի արաբական քաղաքներն ու անապատները, ամէն տեսակ զրկանքներու, անօթութեան եւ մահուան հովիտներէն անցնելով»[6]։

1919թ. նոյեմբերին Պետրոս Սարաճյանը կրկին վերադառնում է Հաճն՝ շարունակելով ղեկավարել տեղի թեմը[7]։ Սակայն, վերադարձից հետո Հաճնում մնում է մոտ երեք ամիս՝ մինչև 1920թ. փետրվարը։ Հարկ է ընդգծել, որ Հաճնից տարագրման

---

[1] *Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 255։ «Հասկ», 1940, թ. 6-8, էջ 90։ Բաբկեն Կյուլեսերյանը և Բ. Եղիայանը Սարաճյանի եպիսկոպոսական ձեռնադրման տարեթիվ նշում են 1915թ., որը սխալ է, քանի որ այդ թվականին վերջինս արդեն գտնվում էր տարագրության մեջ։* ***Բաբգէն Ա. Կիւլէսէրեան****, Հայ Կիպրոս, էջ 249-250։* ***Եղիաեան Բ.****, նշվ. աշխ., էջ 462։*

[2] *Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 125։*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 18։*

[4] *Մանրամասն տե՛ս* ***Եղիաեան Բ.****, նշվ. աշխ., էջ 57-68։*

[5] *Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 93-94։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 255-256։*

[6] *Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 255։*

[7] ***Եղիաեան Բ.****, նշվ. աշխ., էջ 462։*

շրջանում՝ 1915-1919թթ., Սարաճյան սրբազանը, ըստ էության, շարունակում էր մնալ Հաճնի հոգևոր առաջնորդը[1]։

Արևմտյան Հայաստանում հայության սպանդից հետո հերթը հասել էր Կիլիկիայի հայությանը։ Օգտվելով ֆրանսիական իշխանությունների թողտվությունից՝ թուրքերը փորձում էին ճնշել հայության դիմադրության բոլոր փորձերը Կիլիկիայում։ Հերթը Հաճնինն էր։ Հաճնցիները, հասկանալով իրավիճակը, որոշում են կազմակերպել քաղաքի ինքնապաշտպանությունը։ Ստեղծվում է Հաճնի ինքնապաշտպանության բարձրագույն ժողով՝ թեմի առաջնորդ Պետրոս եպիսկոպոս Սարաճյանի նախագահությամբ[2]։Սակայն, մինչ ռազմական գործողություններ սկսելը Պետրոս սրբազանը 1920թ. փետրվարի 22-ին իր խոսքով. «ինքնապաշտպանութեան ժողովին որոշումով» պաշարված հաճնցիներին օգնություն կազմակերպելու նպատակով ժամանում է Ադանա[3]։ Նրան ուղեկցում էին բողոքականների պատվելի Հարություն Խաչատրյանը և Ազգային վարժարանի տնօրեն Շմավոն Փոստոյանը[4]։ Հաճնում Սարաճյան սրբազանն անում է հնարավորը պաշարված հայրենակիցներին օգնելու համար, սակայն ֆրանսիական իշխանություններն որևէ գործնական աջակցություն չցուցաբերեցին[5]։

1920թ. մարտի կեսին թուրքերը սկսում են առաջին հարձակումը Հաճնի վրա[6]։ 1920թ. ապրիլի 12-ին Պետրոս Սարաճյանը «առանց զգեստի ու ճերմակեղէնի, առանց ոեւէ դրամի»[7] ժամանում է Կիպրոս իր իսկ խոսքերով. «Անկէ աւելի ազատ կեր-

---

[1] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 255։

[2] **Պօղոսեան Յ.**, Հաճընի ընդհանուր պատմութիւնը, Անթիլիաս, 2014, էջ 539։

[3] Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 23։ **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 250։

[4] **Պօղոսեան Յ.**, նշվ. աշխ., էջ 547։ **Ղազարոսյան Հ.**, Տանն Կիլիկիո Կաթողիկոս Սահակ Բ-ի ազգասիրական գործունեությունը և կիլիկիահայությունը, «Էջմիածին», 1990, մայիս-հուլիս, էջ 95։

[5] Հաճնին աջակցություն ցուցաբերելու ջանքերի մասին տե՛ս Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 54-70։ Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 23-26։

[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1394, ց. 1, գ. 64, թ. 3, 5։

[7] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 256։

պով հեռագրական դիմումներ կատարելու թէ՛ անգլիական, ֆրանսական և ամերկեան կառավարութեանց և թէ՛ Ազգ. Պատվիրակութեան Հաճնոյ օրհասական վիճակը պարզելու և անմիջական օգնութիւն խնդրելով»[1]: Ցավոք, շուրջ ութ ամիս հերոսաբար դիմադրելուց հետ հոկտեմբերի կեսին Հաճնը ընկնում է: Փրկված շուրջ 400 հաճնցի մազապուրծ հասնում է Ադանա, հետագայում այնտեղից էլ հեռանալով, հաստատվում են տարբեր երկրներում, այդ թվում՝ Կիպրոսում[2]: Հաճնում զոհվում է նաև Սարաճյան սրբազանի մայրը[3]:

Պետրոս Սարաճյանը որոշում է հաստատվել Կիպրոսում: Կղզին խորթ չէր նրա համար: Ինչպես նշվեց, շուրջ մեկուկես տասնամյակ առաջ նա մեկ անգամ արդեն առիթ ունեցել էր ղեկավարելու Կիպրոսի թեմը: Կրկին ստանձնելով նույն թեմի առաջնորդությունը՝ Պետրոս սրբազանը պաշտոնավարեց մոտ 20 տարի՝ կարևոր ներդրում ունենալով թեմի վերակազմության, տեղի ազգային իշխանության մարմինների ձևավորման և գաղթականության կրթամշակութային ու սոցիալական խնդիրների լուծման հարցում:

Պետրոս սրբազանը գործունեության ողջ ընթացքում, բացի հոգևոր ծառայությունը, կարևոր նպաստ է բերել իր ղեկավարությանը հանձնված թեմերի շենացման գործին:1899-1905թթ. Կիպրոսի թեմի, այնուհետև Հաճնի ու կրկին Կիպրոսի թեմի ղեկավարման շրջանում տեսնում ենք, որ կատարել է հսկայական աշխատանք ազգային կյանքի կազմակերպման, շինարարության ուղղությամբ: Սահակ կաթողիկոսին ուղղած նամակներից մեկում նա հիշում է շինարարական աշխատանքների մասին. «1910 դեկ. 3-1920 փետ 25 տասը տարիներ կեանքս մաշեցուցած եմ եւ շատ դժուարին պարագաներու մէջ Հաճընը կառավարած եմ», ապա շարունակում է. «Իսկ Հաճընի մէջ շինած շէնքերս Զերդ վեհափառութիւնը տեսած ու գնահատած է, աւելորդ չեմ համարիր յիշել Սահակ-Մեսրոպեան հոյակապ

---

[1] **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 250:
[2] **Պողոսեան Յ.**, նշվ. աշխ., էջ 608-611, 662-663:
[3] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 256:

վարժարանը, Սբ. Գէորգի կից տղայոց վարժարանը, Սբ. Յակովբայ եկեղեցւոյն խորանները, որբանոցի կից հիվանդանոցը եւ այլն»[1]։ Նրա առաջնորդության շրջանում բազմաթիվ նոր շինություններ կառուցվում են նաև Կիպրոսի հայոց թեմում։

[1] *Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք.Սարաճեանի,էջ 94։*

1.2.Կիլիկիայի հայ գաղթականների հաստատումը Կիպրոսում

Բեռլինի վեհաժողովի նախօրյակին՝ 1878թ. հունիսի 24-ին կնքված անգլո-թուրքական գաղտնի համաձայնագրով Կիպրոս կղզին անցավ Մեծ Բրիտանիայի ենթակայության տակ: Այսուհետ կղզին ղեկավարելու էր բրիտանական Բարձր կոմիսարը, ստեղծվել էր նաև օրենսդիր մարմին[1]: Կղզու կենտրոնը Նիկոսիան է: Արդեն 1914թ. նոյեմբերի 5-ին Մեծ Բրիտանիան պաշտոնապես Կիպրոսը հայտարարեց իր տարածքի մի մաս:

Կիպրոսի հայության թիվը մինչ ցեղասպանությունը մեծ չէր: 1879թ. մարդահամարի տվյալներով կղզում բնակվում էր ընդամենը 166 հայ[2]: Կիպրոսի հայերի թիվը անգլիական տիրապետության շրջանում աստիճանաբար սկսեց աճել: 1912թ. Կիպրոսի թաղական խորհրդի տվյալներով բնակվում էր 480-600 հայ՝ «տեղացի թէ գաղթական»[3]: Կիլիկիահայերի հոսքը դեպի Կիպրոսը սկսեց աճել Ադանայի ջարդերից սկսած: Արխիվային վավերագրերի համաձայն Ադանայի ջարդերից հետո Կիպրոսում էին հաստատվել մոտ 2000 ադանացի, սակայն նրանց մեծ մասը կարճ ժամանակ անց հետ են վերադառնում հայրենի օջախ կամ մեկնում այլ երկիր[4]: Մինչ ցեղասպանությունը կղզում հաստատված հայերը համարվում էին բնիկ[5]:

Կիլիկիայի վերջնական հայաթափումից հետո ամբողջությամբ փոխվեց պատկերը: 1921թ. նոյեմբերի 8-ից սկսում է հայ գաղթականների հոսքը դեպի Կիպրոս[6]: Հաջորդ մի քանի տարիներին գաղթականների հոսքը շարունակվեց և Կիլիկիայի ու

---

[1] ***Բակուրան***, *նշվ. աշխ., էջ 12-15:*

[2] Hadjilyra A.-M. *The Armenians of Cyprus*, p. 20. ***Ալպոյաճեան Ա.***, *նշվ. աշխ., էջ 226:*

[3] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 388:*

[4] *Ատանայի վկաները եւ Սուրբ Ստեփանոս վկայարանը, էջ 11-112: Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 51:*

[5] *Կիպրոսի բնիկ հայերը կղզում հաստատվել էին Կիլիկիայի և դրա շրջակայքի բակավայրերից 150-200 տարի առաջ:* ***Բակուրան***, *նշվ. աշխ., էջ 82:*

[6] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի, էջ 57:*

Արևմտյան Հայաստանի մի շարք այլ բնակավայրերից տեղահանված հայության մի ստվար զանգված՝ մոտ 8-10 հազար գաղթականներ, հանգրվանեցին Կիպրոս[1]։ Հայ գաղթականների հետ կղզի էին ժամանում նաև հույն գաղթականներ։ 1920-ական թթ. սկզբին քեմալականների իրականացրած ջարդերից հետո ևս Թուրքիայից հայերի և հույների մի մասը փորձում էր փրկություն գտնել Կիպրոսում[2]։ Սակայն ոչ բոլոր գաղթականները մշտապես հաստատվեցին այստեղ։ Շատերը, տարբեր պատճառներով, աստիճանաբար տեղափոխվեցին այլ երկրներ։ Այս ամենի արդյունքում Բաբկեն աթոռակից կաթողիկոսի բնորոշմամբ. «գոյացաւ կղզւոյն մէջ նոր հայութիւն մը»[3]։

1921թ. անցկացված պաշտոնական մարդահամարի տվյալներով կղզու ավելի քան 310 հազար բնակչից[4] հայերի թիվը կազմում էր 1573, որից առաքելական դավանանքի էին 1197։ Կիպրոս գաղթողների մեջ կային նաև ոչ մեծ թվով հայ կաթոլիկներ և բողոքականներ[5]։ Կիպրոսի թեմի տրամադրած վիճակագրական թվյալները կղզու հայության վերաբերյալ հիմնականում համապատասխանում են պաշտոնական մարդահամարի տվյալներին։ Պետրոս սրբազանի կողմից Սահակ կաթողիկոսին ներկայացրած տվյալների համաձայն 1922թ. սկզբին Կիպրոսում հաստատված գաղթականների թիվը հասնում էր 3500[6]։ Վերջինիս հավաստմամբ կղզում ապաստանել էին նաև մոտ 400 հույն և մոտ 20 ասորի գաղթական[7]։

---

[1] *«Արև», Կահիրե, 1930, հունվարի 27։* Hadjilyra A.-M. *The Armenians of Cyprus*, p. 15. *Հայ սփյուռք, Եր., 2003, էջ 343։ Թղթակցություն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 77։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 145-146։*

[2] *«Արև», Ալեքսանդրիա, 1922, նոյեմբերի 27, դեկտեմբերի 19։*

[3] ***Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 89։*

[4] Andrekos V. *Cypriot Emigration, 1820s-1930s.* Economic Motivations within Local and Global Migration Patterns. London, 2020, p. 103.

[5] Hadjilyra A.-M. *The Armenians of Cyprus*, 2012, p. 16.

[6] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 809, թ. 23։ Թղթակցություն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 58, 64։*

[7] *Թղթակցություն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք. Սարաճեանի, էջ 64։*

1923թ. հուլիսի 25-ին Ազգային պատվիրակությունը Պետրոս սրբազանից խնդրեց տրամադրել տվյալներ «Հայ որբերու եւ գաղթականներու մասին լիակատար վիճակագրական աշխատութեան» պատրաստման համար[1]։ Դրանք պետք է ներկայացվեին «առանց կրօնքի խտրութեան»[2]։ Այսպես, ըստ այդ փաստաթղթի, 1923թ. Կիպրոսում հաստատված էր 3648[3] հայ, որոնցից 1905՝ Նիկոսիայում, 1512՝ Լառնակայում, 83՝ Ֆամագուստայում, 94՝ Ամիանթոսում, 62՝ Լիմասոլում, 12՝ Կիրենեում։ Սրանցից բնիկներ էին ընդամենը 319-ը, իսկ 3029-ը Կիպրոսում հաստատվել էին 1921թ. հետո, իսկ 300-ը 1896թ. հետո[4]։

Ըստ 1924թ. օգոստոսին ֆրանսիական բարձր կոմիսարին Սահակ Բ. ներկայացրած վիճակացույցի՝ Կիպրոսի թեմի հայերի թիվը 4.100 էր[5]։ 1926թ. Պետրոս Սարաճյանը Կիպրոսի կառավարչի հետ հանդիպման ժամանակ հայերի թիվը նշում է 3500[6]։ Ա.Ալպոյաճյանը 1927թ. դրությամբ հիշատակում է 3640 հայի մասին[7]։ 1931թ., ըստ Կիպրոսի թեմի տվյալների, առաքելական համայնքի թիվը կազմել է 3471, որից 2035 բնակվում էր Նիկոսիայում[8]։1931թ. պաշտոնական մարդահամարի տվյալներով[9] հայերի թիվը նշվում է 3617, որից առաքելական էին 3377[10], մնացածը՝ կաթոլիկ և բողոքական էին։ Այստեղ

---

[1] *Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 177։*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 182։*

[3] *Այլ տվյալով 1923թ. հայերի թիվը հասնում է 5000-ի։ Տե՛ս Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 84։ Ըստ Ազգային պատվիրակության այլ վիճակացույցի 1923թ. ապաստանած հայերի թիվը եղել է շուրջ 2000։ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1416, թ.52, 62։*

[4] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 849, թ. 1, 8շրջ.։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 193։ Կիպրոսի թեմի հովուական կարգը, էջ 201։*

[5] ***Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 282։*

[6] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 190։*

[7] ***Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 226։*

[8] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 444։*

[9] *1931 թ. Կիպրոսի բնակչության թիվը շուրջ 347 հազար էր։ Տե՛ս* Andrekos V. *Cypriot Emigration, 1820s-1930s*, p. 103.

[10] Hadjilyra A.-M. *The Armenians of Cyprus*, 2009, p. 20-22. Hadjilyra A.-M. *The Armenians of Cyprus*, 2012, p. 16.

հերթական անգամ տեսնում ենք, որ պաշտոնական տվյալները քիչ են տարբերվում թեմի տվյալներից։ 1935թ. կղզու հայերի թիվը հասնում է 3819-ի[1]։ Մի քանի տարի անց հայերի թիվը շարունակում էր գրեթե մնալ նույնը[2]։ Դատելով պաշտոնական մարդահամարի և թեմի տվյալներից՝ հայերի թիվը կազմում էր Կիպրոսի ընդհանուր բնակչության շուրջ մեկ տոկոսը։

Կղզում հաստատված հայերը հիմնականում կիլիկեցիներ էին, սակայն կային գաղթականներ նաև Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության հայաշատ բնակավայրերից[3]։ Ըստ Պետրոս սրբազանի 1922թ. սկզբին Կիպրոսում հաստատված մոտ 3500 գաղթական հիմնականում Ադանայից, Մեսինից և Տարսոնից էին, վերջիններիս թվում կային նաև «30ի չափ սսեցիներ, 15-20 հաճընցիներ, 30-40 մարաշցիներ, 200ի չափ զանազան տեղերէ»[4]։ Հետագա տարիներին Կիպրոսում հաստատված գաղթականների մեջ կային նաև խարբերդցիներ, սեբաստիացիներ, էրզրումցիներ, սասունցիներ, զեյթունցիներ և այլն[5]։ Կիպրահայերը, ըստ Ա. Ալպոյաճյանի, Կիլիկիայի և Արևմտյան Հայաստանի շուրջ 66 քաղաքներից էին[6]։

Հարկ է նշել, որ Կիպրոսում հաստատված շատ գաղթականներ, չգտնելով կյանքի համար նպաստավոր պայմաններ, արտագաղթում են Ամերիկա և եվրոպական երկրներ, հաճախ նաև Սիրիա ու Լիբանան[7]։ Այդ տեղաշարժերի արդյունքում 1920-1930-ականներին Կիպրոսի հայկական համայնքի թիվը տատանվում էր 3500-4000-ի սահմաններում։

---

[1] Hadjilyra A.-M. *The Armenians of Cyprus*, 2009, p. 21.

[2] «Հասկ», 1944, թ. 8-10, էջ 139։ **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 90-91։

[3] **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 91։

[4] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 58, 64։

[5] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 444։ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 849, թ. 1-8։

[6] **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 226։

[7] «Արաքս», Լառնաքա, 1924, հուլիս 16, 1925, օգոստոս 25։ «Արև», 1930, հունվար 27։ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 190։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 241։

Թե՛ Կիլիկիո կաթողիկոսության և թե՛ Կիպրոսի թեմի կողմից աշխատանքներ էին տարվում կիլիկիահայության գաղթը արևմտյան երկրներ կանխելու ուղղությամբ. «Շարունակ այդ ուղղութեամբ քարոզում եմ հոս եւ ոչ միայն հարաւային Ամերիկա, այլ նոյն իսկ հիւսիսային Ամերիկա, Ֆրանսա եւ Յունաստան գացողներուն ալ հակառակ բրոբականտ ըրած եմ, սա համոզումով որ եթէ Սուրիոյ, Կիպրոսի մէջ 100 տարուան մէջ օտարանանք, յիշեալ երկրներուն մէջ 25 տարիէն արդէն ձուլուած պիտի ըլլանք»[1]: Այս տեղաշարժերով էին պայմանավորված հայերի թվի տատանումները: 1940թ. դրությամբ, օրինակ, Կիպրոսի առաքելական հայերի թիվը կազմում էր 2929 անձ կամ 715 ընտանիք[2]: Արդեն 1943թ. վերջին, Կիպրոսի թեմի տվյալներով, կղզում ապրում էր 3843 հայ[3]:

Հետագայում Մեծ հայրենադարձության տարիներին և 1960-ականներին մի քանի հարյուր կիպրահայ հայրենադարձվեց Խորհրդային Հայաստան[4]:

Կիպրոսի հայերը հիմնականում արհեստավորներ էին և առևտրականներ: 1922թ. Կիպրոս այցելած Սահակ կաթողիկոսը անդրադառնալով գաղթականներին գրում էր. «մեծ մասամբ էսնաֆ դասակարգէն են, որոնք գէշ աղէկ ցամաք հացերնին կը հանեն»[5]: Կղզում էին հաստատվել ճանաչված լուսանկարիչներ, բժիշկներ, ատամնաբուժներ, փաստաբաններ, պետական պաշտոնյաներ[6], գործարանատերեր և ագարակատերեր: Օրինակ, հետաքրքիր է, որ Կիպրոսի անգլիական կուսակալության դիվանի թուրքերենի թարգմանչի պաշտոնը միշտ հայե-

---

[1] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 262:
[2] «Հասկ», 1941, թ. 3-4, էջ 55, թ. 5-6, էջ 80:
[3] «Հասկ», 1944, թիվ 8-10, էջ 139:
[4] **Մելիքսեթյան Հ.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Եր., 1985, էջ 200-201, 299:
[5] Սահակ Բ Խապայեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Եր., 1997, էջ 390:
[6] «Արաքս», 1924, մայիս 31, հունիս 16: **Բակուրան**, նշվ. աշխ., էջ 88-90: **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 239: **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 258: Hadjilyra A.-M. *The Armenians of Cyprus*, 2009, p. 15.

րին էր տրվում, որը դժգոհության տեղիք էր տալիս կղզու թուրքերի մոտ[1]։ Չնայած կային սոցիալապես անապահով վիճակում գտնվող գաղթականներ, սակայն «Մուրացիկ գոյություն չունի»[2],- փաստում է Ա.Ալպոյաճյանը։

Հասարակ կիլիկեցիների հետ կղզում էին հաստատվում նաև հոգևորականներ, համայնքային գործիչներ, ուսուցիչներ և այլն։ Վերջիններիս թվում էր, ինչպես արդեն նշվեց, Հաճնի նախկին առաջնորդ Պետրոս եպիսկոպոս Սարաճյանը։ Նա 1920թ. փետրվարին Հաճնից մեկնել էր Ադանա ֆրանսիացիներից հաճնցիների համար օգնություն խնդրելու նպատակով։ Սակայն երբ պարզվում է, որ ֆրանսիացիները չեն պատրաստվում օգնել հաճնցիներին և տեսնելով, որ այլևս իր Ադանայում մնալը որևէ օգուտ չէր կարող բերել հաճնցիներին, «Հաճընի հայրենակցական միութեան գիտութեամբ», Պետրոս Սարաճյանը 1920թ. ապրիլի 12-ին ժամանում է Կիպրոս՝ սպասելով Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ հրահանգներին իր հետագա անելիքների հետ կապված։ Շուտով Կաթողիկոսը Պետրոս սրբազանին հրահանգում է մնալ Կիպրոսում[3]։ Վերջինս, ըստ էության, ստանձնում է տեղի հոգևոր առաջնորդությունը։ Սարաճյան սրբազանը 1920թ. հունիսին իր մտերիմներից մեկին գրած նամակում անդրադառնալով իր Կիպրոսի առաջնորդ լինելուն՝ գրում է. «Հոս տեղի առաջնորդ եմ, քիչ մը միահեծան եմ, կըսեն, թերեւս ալ այդպես է»[4]։

Ըստ Պետրոս սրբազանի, իր Կիպրոս ժամանելու գլխավոր նպատակն էր, որպեսզի այստեղից «զանազան տեղեր հեռագիրներով կացութիւնը պարզէի եւ օգնութիւն խնդրէի, ոչ թէ դրամական, այլ զինուորական»[5]։ Նա նախ և առաջ նամակներով դիմում է, իր խոսքերով «քսաներորդ դարու մարդկու-

---

[1] *«Արև», 1928, փետրվարի 2։*

[2] ***Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 226։*

[3] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 23-28, 94։*

[4] *Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 256։*

[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 63։*

թեան ներկայացուցիչներուն»՝ Փարիզ, Լոնդոն, Վաշինգտոն, Հռոմ և այլուր՝ բարձրացնելով տարագիր հայության աջակցության հարցը, սակայն, չստանալով որևէ արձագանք, հերթական անգամ բախվելով դառը իրականությանը, հիասթափված գրում է. «...մենք՝ հազար անգամ փորձուած եւ դարձեալ փորձառու չեղոքս բաներ մը կը յուսանք անոնցմէ, որոնց քով հեռաւոր կենդանիները աւելի հոգածութեան առարկայ են քան հայ կոչուած մարդկութեան թշուառ բեկորները»[1]։ Պետրոս սրբազանը նամակներ է հղում նաև Ազգային պատվիրակությանը և հայկական շրջանակներին՝ նկարագրելով կիլիկիահայության օրհասական կացությունը և փորձելով նրանց ուշադրությունը հրավիրել ստեղծված վիճակի վրա[2]։

Պետրոս սրբազանը կարևոր դերակատարում է ունենում Կիպրոսում գաղթական կիլիկեցիների խնդիրների լուծման և համայնքային կյանքի կազմակերպման ուղղությամբ։ Հատկապես գնահատելի է նրա մեծ ջանքերը Կիպրոս ժամանող գաղթականների համար անգլիական իշխանություններից կղզում հաստատվելու թույլտվություն ստանալու ուղղությամբ։ Կիպրոսի անգլիական կառավարությունը սահմանափակումներ էր դրել կղզի ժամանող հայ գաղթականների թվի վրա։ 1921թ. վերջին Պետրոս Սարաճյանը Գ.Նորատունկյանին գրած նամակում նշում է. «Կիպրական կառավարութիւնը հազար աղաչանքով հաճեցաւ միմիայն 3000 հայեր ընդունիլը արտօնել, ցարդ ունեցանք 2700 գաղթականներ, բացի հիներէն, որ անցեալ տարի եկած էին եւ հազիւ 300 անձ կը հաշուուին»[3]։

Անգլիացիները պայման էին դրել նաև, որ գաղթականների համար որևէ նպաստ, օգնություն կամ էլ գործ չպահանջվի կառավարությունից[4]։ Ընդհակառակը, անգլիական

---

[1] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 57։ Սարաճյանի նամակներն ու հեռագրերը տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, գ. 820, թ.1-8։

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 847, թ. 1-26։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 55-73։

[3] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 118։

[4] «Արև», 1922, դեկտեմբերի 19։

իշխանությունների պահանջով հայկական ազգային մարմինները ժամանող գաղթականների համար պետք է տրամադրեին երաշխավորություն, որ գաղթականները «նիւթապէս ոեւէ մէկուն նեղութիւն» չեն պատճառի [1]։ Այն տրամադրվում էր Սարաճյան սրբազանի և Նիկոսիայի թաղական խորհրդի կողմից։ Եվ հիրավի հայ գաղթականները, տեղի ազգային իշխանությունների և հայկական կառույցների, ինչպես նաև իրենց աշխատասիրության հաշվին, հոգս չդարձան տեղական իշխանությունների համար։ Այդ պատճառով էլ, թեև ոչ մեծ թվով, այնուամենայնիվ անգլիական իշխանությունները գաղթականների մուտքը կղզի արտոնում էին, ի տարբերություն հույների[2]։ Բայց այնուամենայնիվ, դրանով հանդերձ ոչ բոլոր գաղթականներին էր թույլատրվում մտնել կղզի. «Իտալական փօստի նաւով եկողները, անգլիական բեռնանաւով հասնողները կընդունուէին, իսկ յունական, ֆրանսական նաւով ժամանողները կը մերժուէին...»[3],- գրում է Պետրոս սրբազանը։

1922թ. ամռանը Կիպրոս այցելած Սահակ կաթողիկոսը հանդիպում է անգլիական կառավարչի հետ, ով վստահեցնում է, թե. «Այսուհետև կղզին բաց է ամէն հայերուն, որ **ապրելու միջոցներ ունի** *(ընդգծումը - Է.Հ.)»։ Այսինքն, անգլիական իշխանություններն ամեն կերպ խուսափում էին անապահով գաղթականներին կղզի ընդունելուց՝ մտավախություն ունենալով, որ վերջիններս կդառնան բեռ իրենց համար։ Ի հաստատումն նշվածի Սահակ կաթողիկոսը ևս հավաստիացնում է, որ. «Սակայն վերջերս կրկին փակուեցաւ բաց դուռը, թերևս այն երկիւղով, թէ մի գուցէ Փոքր Ասիոյ հայ գաղթականանք մերկ և անօթի դէպ ի Կիպրոս խուժեն» [4]։*

Չէր բացառվում, որ առկա սահմանափակումների չլինելու դեպքում գաղթականների թիվն ավելի մեծ լիներ։

---

[1] *Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 70-71, 118։*
[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 146։*
[3] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք.Սարաճեանի, էջ 58։*
[4] *Սահակ Բ Խապայեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, էջ 390։*

Փաստորեն, Կիպրոս ժամանած գաղթականները մուտքի թույլտվություն էին ստանում սահմանված պարտադիր կարանտինն անցնելուց հետո[1]։ Պետրոս սրբազանին հաջողվում է համոզել անգլիացի կուսակալին հրաժարվել փախստականի համար պահանջվող 25 անգլիական ոսկու երաշխավորությունից, որը շատ ծանր պայման էր անվճարունակ գաղթականի համար՝ փոխարենը 3 տարեկանից բարձր յուրաքանչյուր անձի համար սահմանելով ընդամենը 2 շիլինգ գումար 3 շաբաթ տևողությամբ կարանտինի, ինչպես նաև մաքս իրենց հետ բերած ապրանքի համար[2], «ինչը շատ ճնշիչ բան է մերիններուն համար եւ անտանելի»[3],- վկայում է ականատես Ստ. Ուրֆալյանը։ Այնուամենայնիվ, ունեզրկված գաղթականների համար դժվար էր այդ գումարի վճարելը, որն էլ հաճախ ստանձնում էին ազգային կառույցները։ Սակայն, որ կղզում հաստատվող կիլիկեցի գաղթականներից ոչ բոլորն էին աղքատ, նրանց մեջ կային նաև հարուստ ընտանիքների ներկայացուցիչներ։

Կիպրոսում հանգրվանած կիլիկիահայության բեկորների խնդիրները հայտնվում են նաև Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ի ուշադրության կենտրոնում։ Կաթողիկոսը պարբերաբար Պետրոս սրբազանից հետաքրքրվում էր վերջիններիս վիճակով՝ խնդրելով հայտնել հստակ վիճակագրական տվյալներ նրանց վերաբերյալ[4]։ «Քանի՞ է թիւերնին, տուն տեղ գտա՞ն, հաց չունեցողները ի՞նչ կընեն»[5],- հետաքրքրվում էր կաթողիկոսը հերթական նամակներից մեկում։ Կաթողիկոսը տեղում իրավիճակը պարզելու համար 1921թ. Կիպրոս է ուղարկում նաև Եղիշե եպիսկոպոս Կարոյանին, ով 1923թ. նշանակվում է Լառ-

---

[1] «Արև», Ալեքսանդրիա, 1922, դեկտեմբերի 19։

[2] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 57-58։ «Արև», 1922, դեկտեմբերի 19։

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 847, թ.27։

[4] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 68, 281։

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 54։

նակայի թաղական խորհրդի նախագահ[1] և այն վարում շուրջ ութ տարի՝ մինչև Լիբանանի նորակազմ թեմի առաջնորդ դառնալը։ Վերջինս ևս կարևոր աշխատանք է կատարում գաղթականների խնդիրների լուծման ուղղությամբ[2]։

Հայ գաղթականները երկար տարիներ քաղաքացիություն չունեին[3], որն ավելի էր դժվարացնում կյանքի պայմաններն ու գործունեության հնարավորությունը։ Խնդիրը լուծելու նպատակով 1926թ. դեկտեմբերին Պետրոս սրբազանը հանդիպեց Կիպրոսի նորանշանակ անգլիացի կառավարիչ Ռոնալդ Սթորսին[4] և հերթական անգամ բարձրացրեց անգլիական քաղաքացիություն և անձնագիր տրամադրելու հարցը։ Դրանից 5 տարի առաջ հարցը կրկին բարձրացվել էր և մերժվել[5]։ Նշենք, որ մինչև 1914թ. նոյեմբերի 5-ը Կիպրոսում հաստատված հայերը համարվում են անգլիական հպատակ, իսկ դրանից հետո՝ ոչ։ Խնդրի լուծման համար Պետրոս սրբազանը Սահակ կաթողիկոսին առաջարկում էր դիմել Մեծ Բրիտանիայի Գաղութային նախարարությանը, քանի որ տեղական իշխանություններին արված դիմումները դրական արձագանքի չէին արժանանում[6]։ Հայերի քաղաքացիության հարցը կարգավորվում է միայն 1920-ականների վերջին։ Կղզում 5 տարի բնակվող հայը կարող էր քաղաքացի դառնալ, եթե նրան «4 անգլիացի կը ճանչնայ եւ իր մասին լաւ վկայութիւն կու տայ»

---

[1] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 54։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 159։

[2] «Արև», 1922, դեկտեմբերի 19։

[3] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 223։

[4] Ռոնալդ Սթորսը Կիպրոսի կառավարչի պաշտոնում նշանակվել էր 1926թ. օգոստոսին՝ փոխարինելով Մելքըմ Գառնիոլային։ Սթորսը մինչ այդ պաշտոնավարել էր Պաղեստինում որպես Երուսաղեմի կառավարիչ և լավ էր ճանաչում հայերին և հայոց եկեղեցին։ Տե՛ս «Արաքս», 1926, թ. 54-55, թ. 56։

[5] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 190։

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 221։

և միաժամանակ ի վիճակի կլինի վճարել 10 անգլիական ոսկի[1]*։*

Այսպիսով, Կիլիկիայի հայաթափման արդյունքում շուրջ 3-4 հազար հայեր հաստատվեցին Կիպրոս կղզում։ Սրանով ամբողջությամբ փոխվեց կղզու հայկական համայնքի պատկերը։ Հայ գաղթականների տեղավորման և այդ ընթացքում առաջացած հիմնական խնդիրների լուծումն իրենց վրա էին վերցրել Կիպրոսի հայոց թեմն ու տեղական համայնքային կառույցները։ 1920-ական թթ. սկզբից, ըստ էության, մեկնարկում է Կիպրոսի հայկական համայնքի պատմության նոր շրջանը։

---

[1] *Տե՛ս նույն տեղում, էջ 282։*

1.3.Կիպրոսի թեմի վերակազմավորումը Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության ներքո

Կիպրոսի հայության համայնքային կյանքի կազմակերպման հարցում խիստ կարևոր էր տեղի հայոց թեմի վերակազմավորումը և ենթակայության կարգավիճակի հստակեցումը։ Ինչպես վերը նշվեց, թեմը ենթարկվել է հայոց եկեղեցու տարբեր նվիրապետական աթոռների։ Արևմտահայոց Ազգային սահմանադրության հաստատումից հետո Կիպրոսի թեմը գտնվում էր Կ.Պոլսի պատրիարքության իրավասության ներքո։ 1909թ. Ադանայի ջարդերից և 1921թ. Կիլիկիայի պարպումից հետո մի քանի հազար կիլիկիահայեր հաստատվեցին Կիպրոսում։ Վերջիններս, նախկինում գտնվելով Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր իշխանության ներքո, նոր պայմաններում ևս ցանկություն հայտնեցին պահպանել այդ կարգավիճակը։ 1920-ական թթ. սկզբին Կիպրոսի թեմի շուրջ որոշակի անորոշ վիճակ էր ստեղծվել։ Կիպրոսում հաստատված կիլիկեցիները աստիճանաբար սկսեցին բարձրաձայնել կղզու հայոց հոգևոր թեմի պատկանելության հարցը։ Կ.Պոլսի պատրիարքությունը, ըստ էության, պաշտոնապես դեմ չէր թեմի հանձմանը Կիլիկիո կաթողիկոսությանը։ Սակայն, 1920-ականների մի շարք իրադարձություններ լարված իրավիճակ ստեղծեցին Կիպրոսի թեմի շուրջ։

Կիպրոսի թեմը Կիլիկիո աթոռի իրավասության տակ դնելու հարցում կարևոր դերակատարում ունեցավ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը, ով Կիպրոսում հաստատվելուց ի վեր, ըստ էության, տեղի առաջնորդական փոխանորդն էր։ Այս շրջանում Կիլիկիո կաթողիկոսությունը չուներ բավարար թվով բարձրաստիճան հոգևորականներ։ 1923թ. ապրիլին Սահակ Բ-ն ցանկանում էր Պետրոս Սարաճյանին նշանակել Հալեպի թեմի առաջնորդ, որտեղ այդ ժամանակ խառը իրավիճակ էր առաջացել։ Սարաճյան սրբազանին հրավիրելով Սիրիա՝ կաթողիկոսը ցանկանում էր տեղում ամրապնդել Կիլիկիո աթոռի դիրքերը։ Այդ առթիվ կիպրահայ «Արաքս» պարբերականը գրում

է. «Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը Սուրիոյ ներկայ կացութիւնը նկատի առնելով առ ի դարմանս ստիպողաբար իր քով կը կանչէ Կիպրոսի առաջնորդը»[1]։ Առաջարկին սկզբում թեև սրբազանը համաձայնում է[2], սակայն հետագայում ցանկանում է ծառայությունը շարունակել Կիպրոսում[3]։

Կիպրոսի թեմի պատկանելության հարցի վերջնական լուծման խնդրում խիստ կարևոր էր կղզու ազգային իշխանությունների վերակազմավորումը նոր պայմաններում։ Կիպրոսի հայկական համայնքը գրեթե միշտ իր գործերը ղեկավարել է ընտրովի Թաղական խորհրդի միջոցով[4]։ «Կիպրոս Թաղական խորհուրդ մը ունի, որ իր վրայ առած է կիպրահայոց գործերուն վարչութիւնը»,-գրում էին Կիպրոսի թաղական խորհրդի անդամները Սահակ Բ-ին 1924թ., սակայն. «...կիպրահայ ամէն շարժում եւ ոգեւորութիւն իբր կրօնական, կրթական թէ այլ մարզերու մէջ Սարաճեան սրբազանի գործունէութեան կնիքը կը կրէ իր վրայ»[5]։ Հաստատվելով Կիպրոսում Սարաճյան սրբազանը, ըստ էության, ստանձնել էր կղզու ազգային իշխանությունների ղեկավարումը։

Պետրոս սրբազանը մի շարք քայլեր է ձեռնարկում կղզու ազգային իշխանության նոր մարմինների ձևավորման և թեմը վերջնականապես Կիլիկիո կաթողիկոսության իրավասության ներքո դնելու ուղղությամբ։ 1923թ. մարտին վերջինիս նախաձեռնությամբ և Ազգային սահմանադրությանը համաձայն «կիպրաբնակ ընդհանուր հայոց քուէով» Կիպրոսում ընտրվում են երկու մարմիններ, որոնցից մեկը Թաղային խորհուրդն էր՝ 5 անդամից բաղկացած, և Համարառու ժողովը՝ կրկին 5 անդամից բաղկացած։ Վերջինիս վերապահված էին վերահսկիչ գործառույթներ Թաղային խորհրդի գործունեու-

---

[1] *«Արաքս», 1925, նոյեմբերի 2։*
[2] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 82, 86։*
[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 83, 105-107։*
[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 397։*
[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 397։*

թյան վրա։ Այդ մարմինն էր պատրաստում նաև համայնքային բյուջեն։ Համարառու ժողովը գործել է մինչև 1927թ.։ Նույն թվականին Լառնակայում Սարաճյանի նախաձեռնությամբ կազմավորվել էր նշանակովի թաղական խորհուրդ, որի նախագահ է նշանակվում այդ ժամանակ Կիպրոսում հաստատված Եղիշե եպիսկոպոս Կարոյանը[1]։ Վերջինս Լառնակայի թաղական խորհուրդը ղեկավարում է շուրջ 8 տարի։

1924թ. մարտի 24-ին Սահակ Բ-ին հղած նամակով Պետրոս սրբազանը խնդրում է, որպեսզի կաթողիկոսը հատուկ կոնդակով հաստատի կզզու ընտրված ազգային մարմինները՝ դրանով կանխելով տարբեր ուժերի կողմից այն իրենց ձեռքը վերցնելու փորձերը։ «Համարառու ժողովը, թաղական խորհուրդը և զիս հաստատող երեք հատ կոնդակ հաճիք ղրկել, քանզի կը կարծեմ որ սոյն ժողովներու բարձրագոյն հոգեւոր իշխանութենէ ցարդ անվաւեր լինելը պիտի առարկեն եւ խնդիր յարուցանեն»[2],- գրում էր Պետրոս սրբազանը Սահակ կաթողիկոսին։ Ընտրված մարմինների կաթողիկոսական կոնդակով հաստատումը սրբազանը հիմնավորում էր նախ այն հանգամանքով, որ Կիպրոսում հաստատված գաղթականները Կիլիկիո կաթողիկոսի «տարագիր հօտի բեկորներն են» և ուստի այդ առումով իրավասությունը պատկանում է հենց վերջինիս։ Բացի այդ Պետրոս սրբազանի խոսքերով. «Կ.Պոլսոյ պատրիարքութեան անկերպարան վիճակը եւ անստոյգ ապագան արգելք կըլլան ոեւէ բանակցութեան եւ որովհետեւ ըստ Ազգային սահմանադրութեան տրամադրութեան, ոեւէ թեմի պաշտօնական մարմինք պէտք է հոգեւոր բարձրագոյն իշխանութենէն վաւերացուին, որպէսզի ի զօրու ըլլան գործելու», կոնդակներն անհարժեշտ էին նաև «...տեղական կառավարութեան մօտ ճանչցուելու անմիջական հարկին ներքեւ»[3]։

---

[1] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, 2011, էջ 159։ Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 54, 86։
[2] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք.Սարաճեանի, էջ 96։
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 97։

Նամակից պարզ է դառնում, որ Սարաճյանը ցանկանում էր, որ կաթողիկոսը հատուկ կոնդակով իրեն հաստատի իբրև «հոգեւոր հովիւ կիպրաբնակ հայոց եւ իբր ներկայացուցիչ Ձերդ վեհափառութեան»[1]։ Դրանով վերջինս ցանկանում էր լեգիտիմացնել թե՛ իր Կիպրոսի թեմի առաջնորդ լինելու պարագան և թե՛ նորընտիր ազգային իշխանության մարմինները։ Դրանով լուծվում էր երկու կարևոր հարց. նախ վերջնականապես կլուծվեր Կիպրոսի թեմի պատկանելության հարցը և երկրորդ հնարավորություն չէր տրվի այլ ուժերի, մասնավորապես կուսակցություններին, իրենց ձեռքը վերցնել կղզու ազգային իշխանությունները[2]։ Նույն նամակում սրբազանը, թվելով մատուցած ծառայություններն ու գործունեությունը, խնդրում է իրեն որպես «ի վարձատրութիւն արքութիւն շնորհել»[3]։ Արքեպիսկոպոսական աստիճանը նրան գործունեության մեջ ավելի մեծ վստահություն կներշնչեր թե՛ իր մրցակիցների և թե՛ տեղական այլ կրոնական կառույցների հետ շփումներում։

Ընդառաջելով Պետրոս սրբազանի նամակին՝ 1924թ. ապրիլի 8-ին Սահակ կաթողիկոսը հատուկ կոնդակով վավերացնում է Կիպրոսի ազգային մարմինները. «Նկատի առեալ զանորոշութիւն վիճակին պատրիարքութեան Կ.Պոլսոյ եւ կղզւոյդ եւ զօր ըստօրէական աճումն բնակչութեան եկեւորութեամբ գաղթականաց, պարտ ու պատշաճ համարեցաք առնուլ զԿիպրոս ընդ մերով հոգեւոր իրաւասութեամբ, զի վարչական եւ կրթական մատակարարութիւնը ըստ աւանդական եւ եկեղեցական օրինաց ազգիս եւ ըստ սկզբան համարատուութեամբ առաւել եւս բարգաւաճեսցի եւ առ յապա ի դժպատեհ անակնկալս ազգային ստացութիւնք յանքոյթ եւ յապահովի կացցեն մնասցեն»[4]։ Այս կարևոր պատմական փաստաթղթով Կիլիկիո կաթողիկոսությունը փորձում էր վերջնականապես հաստատել իր իրավասությունը Կիպրոսի թեմի վրա։ Սարաճյանը պատաս-

---

[1] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի, էջ 98։
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 96։
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 95։
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 100։

խան նամակում գրում է. «Կիպրոսը յետ այսու Զերդ վեհափառութեան հոգեւոր իրաւասութեան ներքեւ է»[1]։

Կոնդակի բովանդակությունը ծանուցվում է կղզու ազգային մարմիններին և ժողովրդին, որն ընդունվում է մեծ ոգևորությամբ։ «Գոնէ Կիպրոսը Կիլիկիոյ թեմ ըրինք, այդ ալ մեզ համար մխիթարութիւն է»[2],-իրենց ուրախությունը արտահայտում էին կիպրոսաբնակ կիլիկեցիները։ Պետրոս սրբազանը հանձնարարում է նաև, ինչպես որ նախկինում, այսուհետ ևս շարունակել պատարագների ժամանակ Սահակ հայրապետի անվան հիշատակումը[3]։

Սակայն կային որոշ շրջանակներ, որոնք դժգոհ էին այս ընթացքից, ինչպես նաև դեմ էին Պետրոս Սարաճյանի Կիպրոսի առաջնորդ լինելուն և փորձում էին հանդիսանալ այդ որոշման դեմ և տարբեր դիմում-բողոքներ էին հղում Սահակ Բ-ին[4]։ Սակայն դատելով վերջիններիս նամակագրությունից՝ ընդդիմադիրները փոքր խմբակ էին ներկայացնում և ժողովրդի մեջ ազդեցություն չունեին։ Սարաճյանը, անդրադառնալով վերջիններիս, գրում է. «խլուրդները գետնին տակը միայն կը գործեն»[5]։ Սակայն նրան առաջնորդ հաստատելու հարցում Սահակ Բ-ն երկմտում էր, քանզի չէր հրաժարվել վերջինիս Սիրիա հրավիրելու մտքից. «Աթոռ կը հաստատենք Սուրիոյ մէջ եւ եպիսկոպոս չունինք»[6],- գրում էր կաթողիկոսը Սարաճյանին՝ փորձելով նրան հերթական անգամ համոզել մեկնել Սիրիա և ստանձնել Հալեպի թեմի առաջնորդությունը։ Այնուամենայնիվ Պետրոս սրբազանը շուտով հաստատվում է թեմի առաջնորդ։ Նույն թվականի դեկտեմբերին Սահակ Բ-ն Պետրոս եպիսկոպոսին շնորհում է նաև արքության աստիճան[7]։

---

[1]Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 101։
[2] Տե՛ս նույն տեղում։
[3] Կիպրոսի թեմի հովուական կարգը, էջ 207-208։
[4] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 108-116, 118-119։
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 101։
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 103։
[7] Տե՛ս նույն տեղում, էջ 125։

Սակայն, Կիպրոսի թեմի հարցը միայն նշված կոնդակով իր վերջնական լուծումը չստացավ։ 1924թ. դեկտեմբերին Կիպրոս է ժամանում Կ.Պոլսո նախկին պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Եղիայանը[1]։ Պետրոս Սարաճյանը Ֆամագուստայի նավահանգստում անձամբ է դիմավորում վերջինիս և ուղեկցում Նիկոսիա։ Նշենք, որ մինչ այդ երկու հոգևորականներն անձամբ ծանոթ չեն եղել[2]։ Զավեն սրբազանը ընդգրկվել էր նորաբաց Մելքոնյան որբանոցը[3] ղեկավարող վարչական ժողովի մեջ՝ ստանձնելով սկզբում որբանոցի վերատեսչությունը Լևոն Թաշճյանի տնօրինության շրջանում՝ 1925-1926թթ., ապա նաև տնօրենի պաշտոն՝ 1926թ. սեպտեմբերից մինչ 1927թ. մարտ[4]։ Հետաքրքիր է, որ այդ վարչական մարմնի մեջ ընդգրկված չէր թեմի առաջնորդ Պետրոս Սարաճյանը[5]։ «Արաքս» թերթը մեծ ակնկալիքներով է ողջունում Զավեն սրբազանի ժամանումը՝ հույս հայտնելով, որ վերջինս կարևոր նպաստ կբերի Մելքոնյան որբանոցի կառավարման գործին՝ միաժամանակ ստանալով Սարաճյան սրբազանի «եղբայրական աջակցությունը»[6]։ Սակայն դեպքերը այլ կերպ զարգացան։ Հաստատվելով Կիպ-

---

[1] «Արաքս», 1925, հունվարի 1։ **Զաւէն արքեպս. Եղիայեան**, Պատրիարքական յուշերս. Վավերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրե, 1947, էջ 422։

[2] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 237։

[3] Մելքոնյան որբանոցը հետագայում վերածվեց ուսումնական հաստատության։ Սահակ Բ 1924թ. նոյեմբերին Պետրոս սրբազանին հղած նամակում, կարծես կանխատեսելով, նշում է, որ ճիշտ կլինի որ հետագայում որբանոցը վերածվի հայկական համալսարանի։ Տե՛ս Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 123։

[4] **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 110։ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 122-124։ Մելգոնեան կրթական հաստատութիւն (համառօտ ակնարկ), Նիկոսիա, 1957, էջ 8։

[5] 1924թ. ամռանը Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը Կ.Մելքոնյանին հարցնում է, թե ինչու ինքը չի ներառվել Մելքոնյան որբանոցի խնամակալության կազմում, վերջինս դա բացատրում է այն հանգամանքով, որ այդ շրջանում քննարկվում էր Պետրոս սրբազանին Հալեպի թեմի առաջնորդ նշանակելու հարցը։ Տե՛ս Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 171։

[6] «Արաքս», 1925, հունվարի 1։

բոսում՝ Զավեն սրբազանը հավակնություններ է ցուցաբերում ստանձնելու նաև կղզու հոգևոր առաջնորդությունը։ Վերջինիս հավակնությունները և Պետրոս սրբազանի հետ ունեցած լարված հարաբերություններն առաջ բերեցին «թեմական տագնապ մը Կիպրոսի շուրջ»[1]։

Սկզբնական շրջանում Պետրոս Սարաճյանը բավականին ակտիվ մասնակցություն ուներ Մելքոնյան որբանոցի հիմնադրման աշխատանքին։ Ավելին, բարերար Կարապետ Մելքոնյանն իր անունը կրող վարժարանի հիմնադրման, մասնավորապես շինության համար համապատասխան տարածքի հայթայթման և շինարարության հարցերում ցուցաբերած աջակցության համար նրան նվիրում է ակնակուռ լանջախաչ[2]։ Պետրոս սրբազանն իր լանջախաչը կորցրել էր Հաճնի դեպքերի ժամանակ։ Հետագայում, հատկապես երբ Զավեն սրբազանի հավակնություններով պայմանավորված լարվեցին երկու հոգևորականների հարաբերությունները, Պետրոս սրբազանն որևէ այլ առնչություն չունեցավ վարժարանի հետ կապված։

1926թ. փետրվարին Սահակ կաթողիկոսին Պետրոս սրբազանը տեղեկացնում էր, որ Զավեն սրբազանը. «...չափազանց վշտացած է եղեր, որ առանց իր գիտութեան եւ հաւանութեան Կիպրոսի թեմը Պոլսոյ պատրիարքարանի, «այսինքն ամեն. Զաւէն Ս.Պատրիարքի» ձեռքէն առնուեր է եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմ հռչակուեր է»[3]։ Ըստ վերջինիս. «Կիպրոսը յափշտակեր կամ գողացեր են Պատրիարքարանի տակնուվրայութենէն օգտուելով»[4]։ Նույն նամակով Պետրոս սրբազանը տեղեկացնում է, որ Զավեն Եղիայանին «համակիր խմբակ մը» դիմել է Ամենայն հայոց կաթողիկոսին՝ խնդրելով «իբրեւ իր թեմի» Կիպրոսի առաջնորդ նշանակել Զավեն սրբազանին[5]։

---

[1] ***Եղիայեան Բ.***, *նշվ. աշխ., էջ 285։*

[2] *Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 203-210։ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 91։*

[3] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 160։*

[4] *Թղթակցութիւն Սահակ Բ. եւ Բաբգէն Ա. Կաթողիկոսներու, էջ 73։*

[5] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 161։*

Պետրոս սրբազանը զգուշացնում է նաև, որ նման կոնդակի առկայության դեպքում իրենք պետք է այն «մերժեն»՝ միաժամանակ Սահակ կաթողիկոսից խնդրելով, որպեսզի ընդհանրական հայրապետը «անգիտակցօրեն ձախող քայլ մը չառնէ, կարծելով Կիպրոսը իր թեմն է» գրել վերջինիս և հայտնել որ. «Կիպրոսը ինչպէս ի հնումն եւ այժմ ալ 2 եւ աւելի տարիներէ ի վեր Կիլիկիոյ թեմ է եւ ժողովուրդը կիլիկեցի է»[1]։

Զավեն սրբազանը փորձում էր իր կողմը համախմբել Սարաճյանից դժգոհներին։ Սահակ կաթողիկոսը, որ տեղյակ էր կղզում ստեղծված իրավիճակին, իր հորդորներով փորձում էր մեղմացնել ստեղծված իրավիճակը. «Զեմ փափաքիր, որ այդ խաղաղ կղզին եւ բուռ մը ժողովուրդը ներքին կեանքով Սուրիա մը դառնայ»[2],- գրում էր վերջինս Պետրոս սրբազանին։ 1926թ. փետրվարին Սահակ Բ. Պետրոս Սարաճյանին կրկին հրավիրում է իր մոտ իրեն կաթողիկոսության կազմակերպական հարցերին աջակից լինելու համար։ Սակայն Պետրոս սրբազանը կրկին հրաժարվում է նախ առողջության պատրվակով, ապա նաև այն պատճառով, որ նա մտավախություն ուներ, որ Սահակ վեհափառն այդ ձևով, տուրք տալով իր դեմ հակառակորդների արած դիմումներին, ցանկանում է հեռացնել իրեն Կիպրոսի թեմից։ Սակայն Կաթողիկոսը հետագա նամակներում պնդում է, որ նման նպատակ չի հետապնդել[3]։

Գնալով կրքերը Կիլիկիո թեմի շուրջ թեժանում են։ Զավեն սրբազանը, թեև արդեն հեռացել էր Կիպրոսից, փորձում էր նաև համակիրների հետ տեղեր ձեռք բերել 1927 թ. ապրիլին նախատեսվող Թաղական խորհրդի հերթական ընտրությունների ժամանակ, որը կդյուրացներ իր հետագա պաշտոնավարումը։ Զավեն պատրիարքին այս հարցում աջակցում էր բարերար Կարապետ Մելքոնյանը[4]։ Պետրոս սրբազանը, Սահակ Բ-ին

---

[1] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 161։
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 154։
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 158-159, 162-176։
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 162-163։

դժգոհելով Զավեն սրբազանի գործունեությունից, 1926թ. հոկտեմբերին գրում է. «Հաստատության[1] միակ տէրը, Մելգոնեանի ոսկիներուն յենած ինձ դէմ կը յոխորտայ եւ կսպառնայ բոլոր քուէները դրամով գնել եւ միայն իր կողմնակիցները թաղական ընտրեալ տալ, որպեսզի բացարձակ տէրն ըլլայ Կիպրոսի Ազգ. Իշխանութեան»[2]։ Կ.Մելքոնյանն անգամ ի աջակցություն Զավեն սրբազանի, վերջինիս թելադրությամբ Պետրոս Սարաճյանի դեմ նամակներ է հղում Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշային, Ամենայն հայոց կաթողիկոսին և ուրիշներին[3]։ Այդ մասին հետագայում Կ.Մելքոնյանն անձամբ է խոստովանում Պետրոս սրբազանին, երբ արդեն հաշտվել էին և ունեին ջերմ հարաբերություններ[4]։ Կ.Մելքոնյանը մի քանի անգամ դիմել էր նաև Սահակ Բ-ին Սարաճյանին Կիպրոսից հեռացնելու խնդրանքով։ Դժգոհների խմբակը բացի Ամենայն հայոց կաթողիկոսից և Երուսաղեմի ու Կ.Պոլսո պատրիարքներից բողոքագրեր է հղում Կիպրոսի անգլիական կառավարչին[5], որոշ տեղեկությունների համաձայն հույն արքեպիսկոպոսին և անգամ թուրք մուֆթիին[6]։

1923թ. և 1927թ. ընտրությունների արդյունքում ձևավորված Կիպրոսի թաղական խորհրդի ներկայացուցիչները, ամբողջությամբ սատարում էին Պետրոս Սարաճյանին և դեմ էին որպեսզի ներքին պայքարի արդյունքում Կիլիկիո կաթողիկոսը վերջինիս հեռացնի Կիպրոսից[7]։ Թեմական խորհրդի անդամները պարբերաբար դիմում էին Սահակ Բ այդ խնդրանքով՝ փորձելով փաստերով հիմնավորել իրենց ցանկությունը[8]։

---

[1] Նկատի ունի Մելքոնյան որբանոցը։

[2] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 184։

[3] **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 288։

[4] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 213, 228-229։

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 228-232։

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 233։

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 396-399, 403-407։

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 396-400։

1926թ. վերջերին բարերար Կարապետ Մելքոնյանի և Զավեն սրբազանի հարաբերությունները լարվում են, ինչի արդյունքում վերջինս թողնում է Մելքոնյան որբանոցի պաշտոնը և հեռանում է կղզուց՝ սկզբում Ալեքսանդրիա, ապա ծննդավայր Բաղդադ[1]։ Կիպրոսից հեռանալով՝ Զավեն սրբազանը հրաժարվում է Մելքոնյան վարժարանի տեսչության պաշտոնից, սակայն կարճ ժամանակ՝ ընդամենը մի քանի ամիս, վերջինս շարունակում է պահպանել հաստատության խնամակալության նախագահի պաշտոնը[2]։ Զավեն սրբազանի հեռանալով՝ Կիպրոսի թեմի շուրջ ստեղծված կրքերը աստիճանաբար սկսում են հանդարտվել։ Սրանից հետո թեմի պատկանելիության հարցը աստիճանաբար ստանում է հանգուցալուծումը։

«Թեմական տագնապի» հանգուցալծման հարցում մյուս նվիրապետական աթոռներից բացի կարևոր էր նաև Մայր Աթոռի դերակատարումը։ 1926թ. մարտի 16-ին Սահակ Բ-ին Սիրիա-Լիբանանի երուսաղեմապատկան թեմերի, ինչպես նաև Կիպրոսի թեմի հարցով դիմում է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին՝ խնդրելով «տնօրինել զարժանն» և դրանով վերջ դնել «անհաճոյ խաչաձեւումներուն»[3]։ Սահակ Բ-ին ընդգծում է, որ չպետք է թույլ տալ Կիպրոսի թեմի շուրջ ստեղծված իրավիճակը վերածել հակասության էջմիածնի և Անթիլիասի միջև, մանավանդ որ նամակագրի բնորոշմամբ. «Անցա՜ծ են երբեմնի հակառակութեանց դիրքաւորումները,մասնաւորապես մեր գահակալութեան օրէն ի վեր»[4]։ Այս հետաքրքիր նախադասությունն ամբողջությամբ համապատասխանում էր քննվող շրջանում էջմիածին-Անթիլիաս հարաբերություններում ստեղծված ջերմ մթնոլորտին։ Սահակ Վեհափառը Ընդհանրական Հայրապետին մեկնաբանում է նաև իր կողմից Կիպրոսի թեմը

---

[1] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 188, 191։* ***Զաւէն արքեպիսկոպոս Եղիայեան****, նշվ. աշխ., էջ 423։*
[2] ***Զաւէն արքեպիսկոպոս Եղիայեան****, նշվ. աշխ., էջ 423։*
[3] ***Եղիայեան Բ.****, նշվ. աշխ., էջ 288-289։*
[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 289։*

Կիլիկիո աթոռի ենթակայության տակ առնելու հանգամանքը. «Մենք պարզապէս դէպքերու հարկադրանքին տակ, ի շահ Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր մխիթարութիւն արտահալած կիլիկեցւոյ եւ անհովիւ կիպրացի մերազնէից, պէտք տեսանք իբրեւ վաղնջական թեմ Կիլիկիոյ կազմակերպուիլ եւ բնիկ ու եկուոր ժողովուրդի խնդրանքով Պետրոս եպիսկոպոսը հոն առաջնորդ կարգել կոնդակաւ եւ արքութեան տիտղոսով...»[1]: Այս նամակի մասին Սահակ կաթողիկոսը տեղեկացնում է Պետրոս սրբազանին՝ ընգծելով «...ոչ միայն Կիպրոսը, այլեւ Կիլիկիան, նաեւ մենք, իրենն ենք[2] եւ իր ընելիք տնօրէնութեան սիրայօժար պիտի համակերպինք...»[3]: Նշենք նաև, որ նույն հարցով 1926թ. մայիսին Ամենայն հայոց կաթողիկոսին էր դիմել նաև Կ.Պոլսո պատրիարքության տեղապահը՝ խնդրի լուծումը թողնելով «հայրապետական տնօրէնութեան»[4]:

Գրեթե մեկ տարի անց՝ 1927թ. մարտի 8-ին, Սահակ Բ-ին գրած պատասխան նամակով Գևորգ Ե-ն, ստացված բողոքագրերի ազդեցության տակ, առաջարկում է Պետրոս սրբազանին հեռացնել Կիպրոսից և կանչել իր մոտ՝ պատճառաբանելով, որ փոքրաթիվ համայնքում կարիք չկա երկու արքեպիսկոպոսի առկայությանը, բացի այդ, կաթողիկոսի կարծիքով, դրանով վերջ կտրվեր Կիպրոսում ստեղծված լարված վիճակին[5]: Միաժամանակ, Ամենայն հայոց հայրապետն առաջարկում էր թեմի իրավասության խնդրի լուծման իր տարբերակը՝ այսինքն Կիպրոսում հաստատել Ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ, որը «թէ՛ կը կառավարէր թեմը եւ թէ՛ ամենասերտ յարաբերութիւն կը պահպանէր Զերդ Սրբութեան[6] հետ»[7]: Որպես ներակայացուցիչ հավանաբար նախատեսվում էր նշանակել

---

[1] **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 289:
[2] Նկատի ունի Ամենայն Հայոց կաթողիկոսին:
[3] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 169:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 229:
[5] «Յուսաբեր», Կահիրե, 1927, հունիսի 27:
[6] Այսինքն Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ. Խապայանի հետ:
[7] «Յուսաբեր», 1927, հունիսի 27:

հենց Զավեն Եղիայանին։ Նամակում սակայն Գևորգ Ե-ն Կիպրոսի թեմի խնդրի վերջնական լուծումը, կարծես թողնում է Սահակ Բ-ի վրա՝ հորդորելով հարցը «քննութեան առնել ու լուծել նպատակայարմարութեան տեսակէտով»[1]։ Սահակ Բ-ն նամակը համարում է «պտուղ Զաւէն սրբազանի Կիպրոսի մէջ Կաթողիկոսական փոխանորդ հաստատուելու մարմաջին»[2]։ Բաբկեն եպիսկոպոս Կյուլեսերյանը 1927թ. Սահակ Բ-ին գրած նամակում կարծիք է հայտնում, որ Գերագույն հոգևոր խորհրդի միջամտությունը Կիպրոսի խնդրին «աւելորդ» է և որ հարցը պետք է լուծվի Սահակ Բ-ն և Երուսաղեմի միջև համաձայնության արդյունքում[3]։

Հետաքրքիր է, որ Գևորգ Ե-ի նամակը հայտնվում է մամուլի էջերում Խորհրդային Հայաստանում գործող խորհրդային իշխանությունների հովանավորությունը վայելող «Ազատ եկեղեցի» կազմակերպության համանուն ամսաթերթի 1927թ. մայիսի համարում տպագրվելուց հետո[4]։ Նամակը վերջիններիս ձեռքն էր անցել զարտուղի ճանապարհով. «Ազատ եկեղեցւոյ» խլուրդները յաջողած են մուտ գործել Կաթողիկոսի դիւանատունը եւ մեզ ուղղուած նամակը ձեռք ձգել եւ հրատարակել»[5],- գրում է Սահակ Բ-ն այդ մասին։

Քանի որ Զավեն սրբազանը փորձում էր Կիպրոսի թեմը փոխանցել Երուսաղեմի հայոց պատրիարքության ենթակայության տակ, Ամենյան հայոցը կաթողիկոսը Կիպրոսի թեմի շուրջ ստեղծված վիճակի վերաբերյալ կարծիք հարցնելու նպատակով դիմել էր նաև Երուսաղեմի պատրիարքին։ Վերջինս պատասխանել էր, որ լրացուցիչ հուզումների տեղիք չտալու համար լավագույն տարբերակն է չփոխել ստեղծված դրությունը՝ այսինքն թեմը թողնել Կիլիկիո աթոռի ենթակայության տակ։

---

[1] «Ազատ եկեղեցի», Ե., 1927, մայիս, էջ 148, **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 289։
[2] Թղթակցութիւն Սահակ Ա. եւ Բաբգէն Բ. կաթողիկոսներու, էջ 88։
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 90։
[4] «Ազատ Յեկեղեցի», Ե., 1927, մայիս, էջ 148-149։
[5] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 231։

խնդրի նման լուծմանը կողմ էր նաև Կ.Պոլսո պատրիարքությունը, որը Մայր Աթոռ ուղարկած նամակում հիշեցնում էր, որ դեռ 1914թ. հուլիսի 30-ին Կ.Պոլսո Ազգային կենտրոնական վարչությունը Կիպրոսի թեմը հանձնել է Կիլիկիո կաթողիկոսությանը[1]։ Նշենք նաև, որ դեռ 1925թ. ամռանը Երուսաղեմում Դուրյան պատրիարքի նախաձեռնությամբ և Կ. Պոլսո նախկին Զավեն պատրիարքի և Եգիպտոսի թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանի մասնակցությամբ տեղի էր ունեցել խորհրդակցություն, որտեղ քննարկվել էր Բեյրութի և Դամասկոսի վրա Երուսաղեմի հոգևոր իրավասության հարցը։ Այս խորհրդակցության ժամանակ Զավեն սրբազանը առաջարկել էր Բեյրութը և Դամասկոսը հանձնել Կիլիկիո կաթողիկոսությանը, իսկ Կիպրոսը միացնել Երուսաղեմին[2]։ Այս առաջարկի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Կիպրոսը, ինչպես Երուսաղեմը, այդ շրջանում գտնվում էին անգլիական ենթակայության ներքո, իսկ Սիրիան և Լիբանանը ֆրանսիական։ Այս առաջարկությունը չէր ընդունվել։

Այսպիսով, Զավեն սրբազանի Կիպրոսից հեռանալով, հայոց եկեղեցու նվիրապետական բոլոր աթոռների համաձայնությամբ, ինչպես նաև թափած համառ ջանքերի շնորհիվ Կիպրոսի թեմի ենթակայության հարցը լուծվեց Կիլիկիո կաթողիկոսության օգտին։ Սրանով իր վերջնական հանգուցալուծումն է ստանում Կիպրոսի թեմի շուրջ ստեղծված տագնապը։ Խնդրի նման հանգուցալուծումը անչափ կարևոր էր տարագիր Կիլիկիո կաթողիկոսության համար, որն իր բոլոր թեմերը կորցնելուց հետո իր ենթակայության տակ մնացած միակ՝ Հալեպի թեմին, ավելացնում է ևս մեկը։ Հետագայում, երբ Երուսաղեմի հայոց

---

[1] **Զէպէեան Ղ.**, *նշվ. աշխ, էջ 71։ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 229։*

[2] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 134-137։*

պատրիարքությունը Կիլիկիո կաթողիկոսությանը փոխանցեց Սիրիա-Լիբանանի տարածքում ունեցած իր թեմերը Անթիլիասի ենթակայության ներքո ձևավորվեցին ընդանուր 5 թեմեր[1]։ Սրանցից միայն Կիպրոսի թեմն էր, որ գտնվում էր անգլիական ենթակայության տարածքում։ Մնացած թեմերը գտնվում էին ֆրնասիական մանդատային իշխանությունների կառավարման տարածքում։

---

[1] *Սիրիոյ երուսաղէմապատկան թեմերուն Կիլիկիոյ կաթողիկոսութեան փոխանցումը, Երուսաղէմ, 1930, էջ 28-32։*

1.4.Կիպրոսի ազգային իշխանության մարմինների վերակազմավորման գործընթացը 1920-1930-ական թթ.

Կիպրոսի թեմը Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության տակ անցնելուն զուգընթաց թեմի առաջնորդ Պետրոս սրբազանը տեղի հայության ներկայացուցիչների հետ ձեռնամուխ է լինում կղզու ազգային իշխանությունների վերակազմավորման և հաստատությունների ստեղծման գործին: Ինչպես տեսանք գործընթացը մեկնարկեց 1923թ. գարնան Թաղային խորհրդի և Համարառու ժողովի ընտրություններով, որոնց զուգահեռ փաստորեն ընթացավ Կիպրոսի թեմը Կիլիկիո կաթողիկոսության իրավասության տակ դնելու գործընթացը: Թաղային խորհրդի հաջորդ ընտրությունները տեղի ունեցան 1927թ.: Այս ընտրությունները անչափ կարևոր էին կղզու ազգային մարմինների ամրապնդման և հետագա գործունեության արդյունավետության ապահովման առումով: Այդ գործընթացի ուսումնասիրումն անչափ հետաքրքրական է նաև կոնկրետ համայնքի օրինակով սփյուռքացման գործընթացի առանձնահատկությունները դիտարկելու տեսանկյունից:

1927թ. նախատեսվող ընտրությունների առթիվ հերթական անգամ լարվեց Կիպրոսի հայության ներհամայնքային կյանքը: Պայքարը հիմնականում ընթանում էր նոր հաստատված գաղթականների և տեղացիների միջև: Ինչպես շատ համայնքներում՝ Կիպրոսում դեռ հաստատված չէր ազգային տուրք, որի գաղափարը արտացոլված էր Արևմտահայոց ազգային սահմանադրությամբ[1]: Դրանով հնարավոր կլիներ որոշել քվեարկության իրավունք ունեցողների շրջանակը: Քանի որ գաղթականների թիվն ավելի մեծ էր, մտավախություն կար նաև, որ կղզու Ազգային վարչությունը կկազմվի գաղթականների ներկայացուցիչներից, որն էլ դժգոհություններ կառաջացներ տեղացիների մոտ՝ բերելով համայնքի պառակտմանը, դրանից

---

[1] *Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ.Պոլիս, 1914, էջ 34-35:*

բխող հետևանքներով հանդերձ։ Ուստի, Պետրոս սրբազանը Սահակ կաթողիկոսին առաջարկում է պաշտոնական հրահանգով հաստատել, որ թաղական խորհրդի 5 անդամներից երեքը լինեն տեղացիներ, երկուսը՝ դրսեցիներ, այսինք գաղթականների ներկայացուցիչներ, որի հիման վրա կկազմակերպվեն ընտրությունները[1]։ Սակայն, դատելով Սահակ կաթողիկոսի և Պետրոս սրբազանի նամակագրությունից նման հրահանգ չի ուղարկվում։ Ընտրություններին լարվածությունը մեծացել էր նաև Զավեն արքեպիսկոպոս Եղիայանի հավակնությունների պատճառով։ Կիպրոսի թաղական խորհրդի ընտրության հետ կապված խնդիրները հասնում են մինչև Մայր Աթոռ[2]։

Կիպրոսի ազգային մարմինների կազմավորման հարցում Պետրոս սրբազանին մտահոգում էր նաև քվեարկության իրավունք ունեցողների հարցը։ Ըստ Ազգային Սահմանադրության ընտրական ձայնի իրավունք ստանում էին այն անձինք, ովքեր վճարել էին ազգային տուրքը[3]։ Այդ հարցով նա գրում էր Սահակ Բ-ին. «Մինակ կը փափաքէի գիտնալ թէ ի՞նչ հիման վրայ պէտք է որոշել քուէ տալու իրաւունք ունեցողները, քանի ցարդ ի Կիպրոս Ազգ. տուրքի սովորութիւնը չէ եղած եւ հանդիպողը քուէ տուած է, որ արդար չէ»[4]։ Ի պատասխան կաթողիկոսը արտոնում է ընտրություններին ազգային տուրքի վճարման հանգամանքը հաշվի չառնել։ Սակայն պետք է նախատեսվեր, որ ընտրողների տարիքը լիներ 25, իսկ ընտրվողներինը՝ 30, վերջիններս պետք է նաև դատապարտված չլինեին[5]։

Կազմակերպական աշխատանքն ավարտելուց,ընտրողների ցուցակները ճշտելուց հետո Կիպրոսի թաղական խորհրդի ընտրությունները տեղի են ունենում 1927թ. հունիսի 26-ին[6]։

---

[1]Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 203։
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 205։
[3] Ազգային Սահմանադրութիւն Հայոց, էջ 34։
[4]Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 142։
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 145։
[6] «Արաքս», 1927, մայիս-հուլիս, թ. 64-66։

Թաղական խորհուրդը բաղկացած էր 5 անդամից, ովքեր ընտրվում էին կղզու բնակչության կողմից 4 տարի ժամկետով։ Ըստ նախապես կազմած ցուցակի ընտրական ձայնի իրավունք էր ստացել 712 առաքելական եկեղեցու հետևորդ։ Ընտրություններին մասնակցում է 631 անձ[1]։ Ընտրություններին ընտրական ձայնի իրավունք է ստանում «Ամէն մի ազգային, որ 2 տարիէ ի վեր հաստատուած է ի Կիպրոս եւ 25 տարեկան եղած է, իսկ քուէ առնելու իրաւունք ունին ամենոքը, որ 30 տարին լրացուած եւ ի Նիկոսիա հաստատուած են»[2]։ Ընտրված Թաղական խորհրդի 5 անդամներին էին՝ Արամ Գևորգյանը (ատենապետ), ով հավաքել էր առավելագույն ձայները, Վահրամ Լևոնյանը, Հարություն Պոհճալյանը, Արմենակ Ճիվելեկյանը, Նազարեթ Իրիկյանը[3]։ Պետրոս սրբազանը ընտրված Թաղական խորհրդի նոր կազմը ներկայացնում է Սահակ կաթողիկոսի հաստատմանը[4]։ Արամ Գևորգյանը դառնում է Թաղական խորհրդի ատենապետ։ Ընտրվածները թեմի առաջնորդի համակրանքը վայելող թեկնածուներն էին[5]։ 1927թ. հոկտեմբերին կաթողիկոսը կոնդակով հաստատում է ընտրությունների արդյունքները[6]։ Ընտրություններից հետո էլ կրքերը համայնքում չեն հանդարտվում։ Պետրոս սրբազանից դժգոհների խումբը պարբերաբար բողոքագրեր է հասցեագրում Սահակ կաթողիկոսին, անգամ Կիպրոսի անգլիացի կառավարչին, ով ընթացք չի տալիս դրանց[7]։

Կիպրոսի հայկական համայնքի թաղական խորհուրդը միակ իրավասու մարմինն էր ազգային գործերում, որը բացարձակ իշխանություն ուներ «առնելու, ծախելու, շինելու եւն»[8]։ Թաղական խորհրդի նախագահ հանդիսանում էր թեմի առաջ-

---

[1] «Արև», 1927, հոկտեմբերի 18։
[2] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 441։
[3] «Արաքս», 1927, մայիս-հուլիս, թ. 64-66։
[4] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 207։
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 208։
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 223։
[7] Տե՛ս նույն տեղում, էջ 223, 226։
[8] Տե՛ս նույն տեղում, էջ 223, 224։

նորդը։ Ընտրություններից հետո 1927թ. աշնանը Թաղական խորհուրդը համայնքային կյանքը կազմակերպելու համար ստեղծում կամ վերակազմակերպում է մի շարք կառույցներ։ Դրանց թվում կարևոր էր Աղքատախնամ մարմնի դերը, որի խնդիրն էր միջոցներ հանգանակել և վճարել համայնքի աղքատ հայերի տան վարձերն ու ամսական նպաստ տրամադրել[1]։ Նշենք, որ Աղքատախնամ մարմինը գործում էր դեռևս 1923թ.։ Դրա անդամները ընտրվում էին Թաղական խորհրդի կողմից[2]։ Կղզու հայկական կրթական հաստատությունների գործունեության կազմակերպմամբ զբաղվում էր Վարժարանների հոգաբարձությունը[3]։ Թաղական խորհրդի կողմից Կիպրոսի երկրորդ խոշոր քաղաք Լառնակայի համայնքային կյանքը կազմակերպելու՝ «մատրան եւ վարժարանի գործերու հսկողութեան» համար նշանակված էր «Յանձնախումբ մը», որը ևս կոչվում էր Թաղական խորհուրդ՝ համապատասխան մարմիններով[4]։ Այդ Թաղական խորհուրդը գործում էր 1923թ.։

1931թ. հունիսի վերջին լրանում էր Կիպրոսի թաղական խորհրդի ժամկերտը, ուստի Պետրոս Սարաճյանը Սահակ կաթողիկոսին առաջարկում է թույլատրել կազմակերպել նոր ընտրություններ և ստեղծել Թեմական ժողով Թաղային խորհրդի փոխարեն[5]։ Ազգային սահմանադրության դրույթներին համաձայն ազգային մարմիններ կազմավորելու հարցը դեռ 1920-ականների սկզբից մտահոգում էր Կիպրոսի հայկական համայնքին[6]։ Կաթողիկոսը համաձայնվում է[7]։

---

[1] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 444։
[2] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 194։
[3] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 441-442։
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 442։
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 310։
[6] «Արաքս», 16 հուլիսի, 1926, թիվ 52-53, 16 օգոստոսի, 1926, թ. 54-55։
[7] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 311։

Կիպրոսի համայնքային կյանքի կազմակերպման տեսանկյունից կարևոր էր նաև կանոնադրություն ունենալը, որն անհրաժեշտ էր պատրաստել մինչ թեմական ժողովի ընտրությունները: Թեմի առաջնորդ Պետրոս սրբազանը, ի նկատի ունենալով Կիպրոսի համայնքի առանձնահատկությունները և այն հանգամանքը, որ «Ազգային սահմանադրությունը կարելի չէ կէտ առ կէտ գործադրել հոս» ամբողջացրել և 1926թ. Սահակ Բ-ի քննությանն ու հաստատմանն էր ներկայացրել դեռևս 1907թ. պատրաստված Կիպրոսի «յատուկ մասնաւոր կանոնագրութիւն»[1]: Սույն կանոնադրության նախագիծը ըստ էության բխում էր տեղական առանձնահատկություններից և դրանով կապահովվեր կղզու ազգային իշխանությունների համակարգված և արդյունավետ գործունեությունը՝ միաժամանակ նախատեսելով հայոց եկեղեցու, տվյալ դեպքում Կիպրոսի թեմի, պատշաճ մասնկցությունը ազգային կյանքին[2]: Սակայն նոր կանոնադրության վերջնական մշակումն ու հաստատումը տեղի ունեցավ մի քանի տարի անց:

1931թ. Կիպրոսի թաղական խորհուրդը Հալեպում գումարվելիք եպիսկոպոսական ժողովին ներկայացրած տեղեկագրում հերթական անգամ անդրադառնում է կանոնադրություն ունենալու անհրաժեշտությանը՝ հիմնավորելով, որ հայ բնակչությունը նախկին 4-5 հարյուրի փոխարեն գաղթականների հաստատվելուց հետո դարձել է 3-4 հազար, ուստի այլևս նպատակահարմար չէ հայ համայնքը կառավարել 5 հոգանոց Թաղական խորհրդով: Դրա փոխարեն առաջարկվում էր Կիպրոսի թեմի համար հաստատել կանոնադրություն և թեմական ժողով Ազգային Սահմանադրությամբ նախատեսված Գավառական ժողովի իրավասության համապատասխան[3]:

Արդեն 1932թ. հունարի 12-ին Սահակ Բ կողմից հաստատվում է Կիպրոսի Թեմական ժողովի 25 հոդվածից բաղկացած

---

[1] 1907թ. Կիպրոսի «Սահմանադրական կանոնագրութիւնը» Կիլիկիո կաթողիկոսի քննությանն էր հանձնված առաջին աշխարհամարտից առաջ, սակայն իրադարձությունները թույլ չէին տվել գործընթացն ավարտել: Տե՛ս Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 386:

[2] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 224:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 451-452:

կանոնագրությունը[1]*։ Թեմական ժողովը բաղկացած էր լինելու 11 անդամներից՝ 9 աշխարհական և 2 հոգևորական։ Աշխարհականներն ընտրվելու էին գաղտնի քվեարկությամբ կիպրահայ գաղութի կողմից, իսկ հոգևորական անդամներին անմիջապես նշանակելու էր թեմի առաջնորդը։ Թեմական ժողովի գործունեության ժամկետը 8 տարի էր։ Ժողովը ընտրելու էր թեմի առաջնորդին և «ազգային գործերու մատակարարութիւն ընելու» համար «նիկոսիաբնակ ազգայիններէ» Վարչական ժողով, որը կազմված էր լինելու 5 անդամներից՝ 4 տարի ժամկետով*[2]*։ Թեմի առաջնորդը հանդիսանում էր թաղական ժողովի, վարչական ժողովի և «անկէ բղխած ժողովներու» նախագահը*[3]*։ Ընտրության արդյունքները վավերացվում էր Կիլիկիո կաթողիկոսի կողմից։ Ընտրական ձայնի իրավունք էր տրվում Կիպրոսում 2 տարի և ավել հաստատված ազգայիններին, ում տարիքը 25 էր և վճարել էին ազգային տուրք։ Ընտրվելու իրավունք ունեին 30 տարին լրացած կիպրահայերը։ Ընտրական ձայնի իրավունքից զրկվում էին այն անձիք, ովքեր «յիմար են, ազգային գործերու մէջ զեղծումով մը ամբաստանուած եւ կամ դատապարտուած են ազգային ժողովոյ մը կողմէ եւ կամ տեղական դատարաններու կողմէ առնուազն 6 ամիս բանտարկութեան դատապարտուած են»*[4]*։*

Վարչական ժողովը համայնքի կյանքը կազմակերպելու համար նախկինի նման ստեղծում էր մի շարք մարմիններ՝ Եկեղեցու հոգաբարձություն, վարժարանների հոգաբարձություն,

---

[1] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 460-463։*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 316-317, 460-461։*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 463։*

[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 461։*

Աղքատախնամ մարմին, տնօրինում էր համայնքի ֆինանսները թաղական ժողովի հաստատած բյուջեի համաձայն[1]։

Սահակ կաթողիկոսի համապատասխան թույլտվության հիման վրա[2] Կիպրոսի թեմում 1932թ. փետրվարին տեղի են ունենում թեմական ժողովի ընտրություններ։ Նորընտիր թեմական ժողովի կազմը ներկայացվում է Սահակ Բ-ին հաստատման համար, ով շուտով կոնդակով հաստատում է այն[3]։ Թեմական ժողովի ընտրություններին հերթական անգամ Արամ Գևորգյանը հավաքել էր ամենաշատ քվեները[4]։ 1932թ. մարտին էլ թեմական ժողովը ընտրում է վարչական ժողովի հինգ անդամներին[5]։ Նշենք, որ 1937թ. մայիսի 7-ին Կիպրոսի անգլիական իշխանությունները հատուկ օրինագծով ստեղծման շրջանից՝ 1932թ., «օրինաւոր եւ վաւերական» են ճանաչում Կիպրոսի հայոց թեմական ժողովի, Ազգային վարչության և սրանց կից կառույցների գործունեությունը։ Նման որոշման կարիքն առաջացել էր այն պատճառով, որ համայնքի որոշ շրջանակներ դատարանի միջոցով փորձում էին անվավեր ճանաչել այդ կառույցների գործունեությունը[6]։

1942թ. պատրաստվում և երկու տարի անց Կիլիկիո կաթողիկոսության կողմից հաստատվում է կիպահայության նոր կանոնադրությունը՝ 104 հոդվածներից բաղկացած[7]։

Նոր կանոնադրության ընդունումով և դրա հիման վրա ազգային իշխանության նոր մարմինների ձևավորումով, կարելի է ասել, ավարտվում է Կիպրոսի հայկական համայնքի վերակազմավորման գործընթացը։

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 462։

[2] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 316։

[3] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 324, 326, 328-329։ Կիպրոսի թեմի հովուական կարգը, էջ 219-222։

[4] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 326։

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 334։

[6] «Հասկ», 1937, մայիս, թ. 5, էջ 67։

[7] **Ջէպէեան Ղ.**, նշվ. աշխ, էջ 89։

Կիպրոսում 1920-ականներին դեռ ներդրված չէր ազգային տուրքի հավաքագրման համակարգ և այդ ուղղությամբ Սահակ կաթողիկոսը պարբերաբար հորդորներ էր հղում թեմի պատասխանատուներին: Մինչ ազգային տուրքի հաստատումը Սահակ կաթողիկոսը թեմի առաջնորդին կոչ էր անում կենտրոնի՝ այսինքն Անթիլիասի հետ կապերն ավելի ամրապնդելու համար «յանուն Ս.Լուսաւորչայ գանձանակներ հաստատուին» Կիպրոսի թեմերի եկեղեցիների մեջ[1]: Գանձանակի հաստատումը ձգձգվում էր, որի համար կաթողիկոսը հաճախ հանդիմանում էր Պետրոս սրբազանին՝ ընդգծելով, որ կիպրահայ համայնքը փոքրաթիվ է, սակայն «ամենէն հանգիստ հայ գաղթականութիւն» է, սակայն վերջինիս կողմից հանգանակություն ի նպաստ Անթիլիասի չէր կատարվում[2]: 1932թ. Կիպրոսի թեմական ժողովը որոշում է տարեկան թեմական տուրք սահմանել ի օգուտ Անթիլիասի՝ միաժամանակ դեռևս նպատակահարմար չգտնելով գանձանակի տեղադրումը[3]:

Կիպրոսի թեմի 1932թ. հաստատված կանոնադրության հոդված 3-ի Զ կետով սահմանվում էր ազգային տուրք. «Կիպրոսի ազգայիններուն իւրաքանչիւրին կարողութեան համեմատ տարեկան տուրք մը պարտադրել եւ միեւնոյն ժամանակ կաթողիկոսարանի թեմական տուրքը սահմանել»[4],-նշված էր կանոնադրության մեջ: Կիպրոսի հայ համայնքում ազգային տուրքի ամրագրումը կարևոր քայլ էր համայնքային կյանքի արդյունավետ կազմակերպման տեսանկյունից: Սահակ կաթողիկոսը 1932թ. Կիպրոսի թեմական ժողովի արդյունքները հաստատող կոնդակում հերթական անգամ անդրադառնում է Կիպրոսի թեմում ազգային տուրք սահմանելու հարցին[5]: Երկու

---

[1] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 328:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 337, 339:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 340:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 460:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 329:

տարի անց 1934թ. հունվարի 1-ին Սահակ Բ-ն հատուկ շրջաբերականով դիմելով իրեն ենթական թեմերի հայությանը՝ հորդորում է «իւրաքանչիւրը իր քսակին, իր արժանապատուութեան եւ իր գիտակցութեան տարողութեամբ ու չափով» մասնակից դառնալ Ազգային տուրքի տրամադրմանը[1]։ «Այս տուրքը ո՛չ միայն խղճմտանքի հարկ մըն է քեզի համար, այլ նաեւ օրինական պարտք մը, զոր եթէ կատարես կը շինես իրաւունք մը ատոր փոխարէն, այսինքն ազգային գործերուն մասնակցելու, խօսելու, զանոնք գնահատելու կամ քննադատելու իրաւունքը»[2]։ Ազգային տուրքի տրամադրումը, ըստ էության, կամավոր էր։ Սակայն դրա արդյունավետ և համակարգված հավաքագրումից էր մեծապես կախված համայնքային կյանքի արդյունավետ կազմակերպումն ու իշխանության ազգային մարմինների գործունեությունը։ Այդ պատճառով էլ սփյուռքացման ճանապարհն անցնող հայկական համայնքները դեռևս Ազգային սահմանադրության մեջ ամրագրված ազգային տուրքի այս գաղափարը վերաձևակերպելով կրկին կիրառության դրեցին։ Ազգային տուրքը ազգային պատասխանատվության, ազգային գործերում իրավունք վաստակելու, չձուլվելու և սփյուռք դառնալու գործնական դրսևորում էր։

Այսպիսով, 1920-ական թթ. Կիպրոսի թեմի վաչական ենթակայության հարցի կարգավորմանը զուգընթաց թեմի պատասխանատուների, մասնավորապես թեմական առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի, հետևողական ջանքերի շնորհիվ աստիճանաբար վերաձևավորվում և վերակազմավորվում են Կիպրոսի ազգային իշխանության մարմինները, որոնք կարևոր դեր են խաղում կիպրահայության հասարակական-քաղաքական, կրթական-մշակութային կյանքում և հայապահպանության գործում։

---

[1]Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 464։
[2]Տե՛ս նույն տեղում։

1.5.Կիպրոսի ազգային մարմինների հարաբերություններն անգլիական իշխանությունների և հույների հետ

Հաստատվելով Կիպրոսում, ինչպես այլ երկրներում, հայերը փորձում էին ինտեգրվել տեղի հասարակական, տնտեսական, մշակութային կյանքին, լավ հարաբերություններ պահպանել տեղական իշխանությունների հետ՝ միաժամանակ ձգտելով կազմակերպել համայնքային կյանքը և պահպանել սեփական ինքնությունը: Այդ առումով ինքնատիպ իրավիճակ էր ստեղծվել Կիպրոսում: Հայտնի է, որ կղզին գտնվում էր անգլիական ենթակայության տակ, իսկ կղզու հիմնական բնակչությունը հույներ էին, որոնք ձգտում էին միանալ Հունաստանին: Կղզում առկա էր նաև մեծ թվով թուրք բնակչություն: Ստեղծված իրավիճակում հայերը փորձում էին բարիդրացիական հարաբերություններ հաստատել թե՛ անգլիական իշխանությունների և թե՛ հույների ու կղզում բնակվող մյուս ազգությունների ներկայացուցիչների հետ: Պետրոս սրբազանին հաջողվել էր բավականին ջերմ հարաբերություններ հաստատել Կիպրոսի անգլիական իշխանությունների հետ[1], ինչը շատ կարևոր հանգամանք էր ոչ միայն գաղթականներին տեղավորելու, այլ նաև համայնքային խնդիրներն արդյունավետ լուծելու առումով: Այդ ջերմ հարաբերությունների մեկ ապացույց է 1928թ. Կիպրոսի անգլիացի կառավարիչ Ռոնալդ Սթորսի նամակը Սահակ Բ-ին, որով անգլիացի կառավարիչը հավաստիացնում էր, որ կիպրաբնակ հայերը իշխանությունների համար «ոեւէ բեռ մը չեն» և ընդհակառակը վերջիններս Կիպրոսի «թէ՛ օգտակար եւ թէ պատուաւոր անդամներն են»[2]:

Սարաճյան սրբազանը փորձում էր լավ հարաբերություններ հաստատել նաև Կիպրոսի հույների՝ հատկապես նրանց հոգևոր իշխանությունների հետ: 1921թ. հուլիսին նա այցելում

---

[1] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 190-192, 399:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 408:*

է Կիպրոսի հույն արքեպիսկոպոսին շնորհավորելու հույն-թուրքական պատերազմում[1] հույների տարած հաղթանակնե-րի առթիվ։ Հույն պատրիարքը փոխադարձ այցելությամբ պատվում է Պետրոս սրբազանին, որով վերսկսում են երկու եկեղեցիների փոխայցերն ու շփումները, որոնք «6-7 տարիէ ի վեր դադրած է եղեր»[2]։ Նշենք, որ Կիպրոսի հունական եկեղե-ցին իր արքեպիսկոպոսի գլխավորությամբ անկախ էր մյուս հունական ուղղափառ պատրիարքություններից[3]։

Սակայն տեղացի հույների հետ հարաբերությունները միշտ չէ, որ հարթ էին ընթանում։ 1925թ. թագավորական հատուկ հրովարտակով Կիպրոսը հռչակվում է անգլիական գաղութ և Մեծ Բրիտանիայի անբաժան մաս։ Կղզին այսուհետ ունենալու էր իր սահմանադրությունը, օրենսդիր և գործադիր մարմին-ները[4]։ Որոշմանը դեմ էին Կիպրոսի հույները, որոնք ձգտում էին միավորվել Հունաստանի հետ։ Տեղի հունական արքեպիս-կոպոսն որոշման դեմ բողոքագիր է ուղարկում Լոնդոն, սակայն ստացված պաշտոնական պատասխանում անգլիացիները հայտնում էին, որ կղզին Հունաստանին միա-վորելու հարցը վերջնականապես փակված է[5]։

Ահա այս պարագայում Կիպրոսի հույների մոտ որոշակի մտավախություններ են առաջանում հայ գաղթականների թվի աճի հետ կապված։ Հայերը կղզում կարող էին անգլիացիների համար դառնալ որոշակի հենարան ի հակադրություն հույնե-րի Հունաստանին միանալու ձգտումների։ Այդ պատճառով հույների և հայերի բարեկամական հարաբերությունները եր-բեմն լարվում էին։ Պետրոս սրբազանի վկայությամբ հույները այնքան էլ գոհ չէին Կիպոսում հայերի հաստատումից. «Կիպ-

---

[1] 1919թ. մայիսի 15-1922թ. հոկտեմբերի 11-ին։ Ավարտվել է Հունաստանի պարտությամբ։

[2] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի, էջ 44։

[3] **Բակուրան**, նշվ. աշխ., էջ 17։

[4] «Արաքս», 1925, մայիսի 1, թ. 24, հունիսի 1, թ. 26։

[5] «Արաքս», 1925, հունիսի 16, թ. 27։

բացի յոյները 10 տարներէ ի վեր շարունակ պաշտօնական եւ անպաշտօն յայտարարութիւններ կընեն կիպրաբնակ հայ գաղութին դէմ, դեռ երկու ամիս առաջ հայկական վտանգի մասին կը գրէին եւ Մելգոնեան հաստատութիւնը[1] պիծակի բոյն կանուանէին եւ վերջին յունական պատուիրակութիւնը ի միջի այլոց կը պահանջէ, որ կառավարական հայ պաշտօնեաներու քանակը զեղչուի եւն եւն»[2],- հայտնում է Պետրոս Սարաճյանը՝ ավելացնելով նաև, որ «կիպրացի յոյները չափազանց մոլեռանդ եւ շովէն են»[3]։

Հարբերությունները հույների հետ հատկապես սրվեցին 1920-ականների վերջին մի իրադարձության պատճառով։ 1929թ. սեպտեմբերին հունական հերթական պատվիրակությունն է մեկնում Լոնդոն կղզին Հունաստանին հանձնելու հարցը բարձրացնելու համար։ Կիպրոսի անգլիական իշխանությունները կղզու ազգային փոքրամասնություններից՝ թուրքերից, հայերից և մարոնիներից, պահանջում են «մասնաւոր դիմումներ» անել ի պաշտպանություն կղզին անգլիական ենթակայության թողնելուն։ Կիպրոսի հայկական ազգային իշխանությունները՝ թեմի առաջնորդ Պետրոս Սարաճյանի գլխավորությամբ մի քանի անգամ՝ 1923, 1928, 1929 թվականներին, դիմումներ են ներկայացնում անգլիական իշխանություններին։ Նշենք, որ նույն դիրքորոշումն ունեին մյուս ազգային փոքրամասնությունները[4]։ Դիմումները կատարվել էին գաղտնի կերպով՝ չսրելու համար հարաբերությունները հույների հետ։ Անկախ այն հանգամանքից հայերը դեմ էին թե կողմ Կիպրոսը Հունաստանին հանձնելուն հայկական ազգային իշխանությունները բացահայտ չէին կարող մերժել անգլիական իշխանությունների պահաջները, հատկապես այն պարա-

---

[1] Խոսքը Կիպրոսի Մելքոնյան վարժարանի մասին է։
[2] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 274։
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 286։
[4] Hadjilyra A.-M. *The Armenians of Cyprus*, p. 16.

գայում, որ Կիպրոսի գաղթական հայերը, ընդանուր առմամբ, դժգոհ չէին անգլիական իշխանությունների վերաբերմունքից։

Հանգամանքների բերումով 1929թ. Կիպրոսի հայկական թաղական խորհրդի անգլիացիներին ներկայացրած հերթական դիմումի մասին տեղեկանում են հույները[1] և հայտնում իրենց թերթերում, ինչն որոշակի հակահայ տրամադրություններ է տալիս։ Անգլիացի կուսակալ Ռ. Սթորսի հավաստմամբ տեղեկատվության արտահոսքը կառավարական շրջանակներից չէր եղել, որը սակայն բացառել չի կարելի։ Լուրը հույների մոտ առաջացնում է դժգոհություններ և հակահայ տրամադրություններ։ Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ էր ցուցաբերել ճկունություն և չվնասել հայկական շահերը։ Մի կողմից կարևոր էր կղզու հույների մոտ առիթ չտալ հակահայ տրամադրությունների, մյուս կողմից էլ չստեղծել անվստահության մթնոլորտ անգլիական իշխանությունների մոտ։ Կղզու հայ հասարակությունը, նաև բարերար Կարապետ Մելքոնյանը թաղական խորհրդից և Պետրոս սրբազանից պահանջում են պաշտոնական հերքում։ Վերջիններս ժողովրդին հանդարտեցնելու համար բերանացի ժխտում են նման դիմումի առկայությունը՝ միաժամանակ խուսափելով պաշտոնական հերքում հրապարակելուց։ 1929թ. հոկտեմբերին հունական թերթերում հայերի կողմից հայտնվում է «առանց ստորագրության հերքում», որով հույները որոշակի «գոհացան»[2]։

Սահակ կաթողիկոսը ստեղծված իրավիճակում խորհուրդ էր տալիս առավելագույն զգուշություն ցուցաբերել՝ հասկանալով, որ եթե նման դիմումների պահանջը գալիս է անգլիական իշխանություններից, ապա մերժել անհնար է, միաժամանակ հորդորելով՝ չմոռանալ, որ Անգլիայից առավել Հունաստանն է «եղբայրական գուրգուրանք» ցույց տվել տարագիր հայերին։ Ուստի, նա գտնում էր, որ առավել «խոհական» է «փափկությամբ ձեռնպահ» մնալը նման իրավիճակներում։

---

[1]Թղթակցություն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 273։
[2]Տե՛ս նույն տեղում, էջ 274։

Միաժամանակ կաթողիկոսը մտահոգություն է հայտնում, որ հույների մոտ հակահայ տրամադրությունների առկայության պարագայում, եթե հանկարծ. «Աստուած մի արասցէ, յարապոփոխ դիւանագիտութեամբ Անգղիան քաշուի Կիպրոսէն, հայերը չպիտի կարողանան այդ տեղ ապրիլ, պէտք է զգուշանանք անգոյն ու անհոգի դիւանագիտութեան խաղերեն»[1]։

Ի պատասխան Սահակ կաթողիկոսի մտահոգությունների Պետրոս սրբազանը հայտնում է, որ ստիպված ընդառաջել են կառավարության պահանջին և հայտնվել նման իրավիճակում. «...երկունքն ալ սիրաշահիլ կարելի չէր, մին կամ միւսը պէտք էինք վշտացնել, եւ որովհետեւ անմիջական տիրող անգլիական կառավարութիւնն է գաղթականներն ներս ընդունողը եւ անոնց բարեացակամ գտնուողը նոյն կառավարութիւնն էր, ուստի պէտք էինք ստորագրել»[2],- գրում է սրբազանը՝ միաժամանակ հերքելով կաթողիկոսի այն տեղեկատվությունը, թե հույների զանգվածային բոյկոտի պատճառով հայերը գործազուրկ են դարձել և համայնքը խնդիրների առջև է կանգնած։ Իրականում թերթերը չափազանցրել էին իրավիճակը։

Կիպրոսի հունական թերթերը շարունակում են հակահայ նյութեր հրապարակել՝ սլաքներն ուղղելով թեմի առաջնորդ Պետրոս սրբազանի դեմ՝ նրան մեղադրելով անգլիացիներին հղված դիմումը հեղինակելու հարցում[3]։ Սահակ Բ-ն կարծում էր, որ Պետրոս սրբազանը «դիվանագիտական խաղի մը» զոհ է դարձել և ստեղծված լարվածությունը մեղմելու համար նրան հորդորում էր հայտարարությամբ հանդես գալ. «Յունաստանի թերթերը գէշ կարտայայտուին ընդհ. հայերու դէմ եւ իրաւունք ունին, որովհետեւ իսկապէս եղբայրական ընդունելութիւն մը ըրին խուճապահար հայերուն եւ մինչեւ այսօր մօտ 50 հազար կասպանջակեն»[4],- գրում է կաթողիկոսը։

---

[1] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 280։
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 282։
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 281, 285։
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 285։

Կիպրոսի հույների մոտ դժգոհությունները սրվել էին հատկապես այն տարածված լուրերից հետո, թե իբր առաջիկայում Հունաստանից անգլիացիների աջակցությամբ 15-20 հազար հայ է հաստատվելու կղզում[1]։ Հարցի հետ կապված դժգոհում է նաև Կիպրոսի հույների մետրոպոլիտը[2]։ Լուրը պաշտոնապես հերքում է կառավարիչ Սթորսը՝ ի պատասխան Կիպրոսի հույն միտրոպոլիտի հարցման[3]։ Որոշակի ջանքերից հետո կրքերը հանդարտվում են, բայց վերջնական չեն մարում։

Նշենք նաև հակահայ տրամադրություններ էին տարածվում նաև կղզու թուրքական համայնքի ներկայացուցիչների և վերջինիս պատկանող թերթերի կողմից[4]։

Հայերի նկատմամբ հարգանքի և հայոց թեմի առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի հեղինակության մասին է խոսում ոչ միայն նրա լավ հարաբերությունները անգլիական իշխանությունների և կղզու մյուս համայնքների ներկայացուցիչների հետ, այլ նաև այն, որ Կիպրոս այցելած պատվիրակությունները, պաշտոնատար անձինք, որպես կանոն, հանդիպումներ էին ունենում վերջինիս հետ։

Այսպես, 1925թ. հուլիսին Ազգային առաջնորդարան է այցելում Կիպրոսում հաստատված Հիջազի նախկին թագավոր, Մեքքայի Շերիֆ Հուսեյն իբն Ալի ալ-Հաշիմին։ Այցը հաջորդել էր Պետրոս սրբազանի թագավորին կատարած այցին։ Այցի առթիվ կազմակերպվում է հանդիսավոր ընդունելություն, իսկ պատվավոր հյուրը 50 անգլիական ոսկի է նվիրում առաջնորդարանին[5]։ Թագավորի հետ Պետրոս սրբազանը հաստատում է մտերիմ հարաբերություններ։ Հետագայում հանդիպումները և փոխայցելությունները

---

[1] «Արև», 1930, հունվարի 27։
[2] «Ժամանակ», Կ.Պոլիս, 1930, հունվարի 31։
[3] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 286։
[4] «Արաքս», 1924, սեպտեմբերի 1, թ. 8։
[5] «Արաքս», 1925, հուլիսի 16։

շարունակվում են[1]։ Հաջորդ տարի նոյեմբերին Նիկոսիայի առաջնորդարան է այցելում և մեծ պատիվներով ընդունելության արժանանում Անդրհորդանանի թագավոր էմիր Աբդալլահը՝ Մեքքայի Շերիֆ Հուսեյնի որդին։ Այցի ընթացքում թագավորը դրվատանքի խոսքեր է ասում հայերի հասցեին՝ ընդգծելով, որ եթե հայերը ցանկանան հաստատվել իր երկրում, ապա իր երկրի դռները բաց են[2]։ 1927թ. օգոստոսին նման այցելություն է կատարում և Պետրոս սրբազանին տեսակցում Մեքքայի Շերիֆ Հուսեյնի մյուս որդին՝ Ֆեյսալը, ով Իրաքի թագավորն էր[3]։

Նման այցերը պարբերաբար կրկնվում էին։ Թեմի առաջնորդն էլ, օգտագործելով նման առիթները, հեղինակավոր հյուրերի առջև պարբերաբար բարձրացնում էր հայությանը հուզող հարցեր։ Փաստորեն, Սարաճյան սրբազանը բաց չէր թողնում որևէ հնարավորություն, որը կարող էր լուծել տարագիր հայության առջև ծառացած բազմաթիվ խնդիրները։

Ահա այսպիսի դժվար ու բարդ պայմաններում էին հայերը հաստատվում հյուրընկալ երկներում՝ ձգտելով կազմակերպել իրենց համայնքային կյանքը՝ միաժամանակ փորձելով չհայտնվել հակամարտող տարբեր ուժերի միջև, լավ հարաբերություններ հաստատել տեղական իշխանությունների և ազդեցիկ շրջանակների հետ հանուն սեփական շահերի։

---

[1] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 278-279։
[2] «Արաքս», 1926, նոյեմբեր, թ. 58։
[3] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 280։

ԳԼՈՒԽ 2
ԿԻՊՐՈՍԻ ԹԵՄԻ ՋԱՆՔԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ և ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

2.1.Հոգևոր-կրոնական կյանքի կազմակերպումը

Կիպրոսի հայոց թեմը նախ և առաջ խնդիր էր դրել համախմբել հայությանը եկեղեցու շուրջ, ինչպես նաև քրիստոնեական, բարոյական արժեքների տարածման և ամրապնդման միջոցով փրկել տարագիր հայության բեկորներն ուծացումից։

Կիպրոսում հայկական եկեղեցիներ կառուցվել են դեռևս միջնադարից սկսած[1], որոնց մի մասը պահպանվել և գործում էին մինչև 1920-ականներ՝ կիլիկիահայ գաղթականների հաստատվելը։ Կիպրոսի հայկական համայնքի պատմության նոր շրջափուլում ոչ միայն վերակառուցվեցին և վերագործարկվեցին նախկին եկեղեցիները, այլև կառուցվեցին նորերը։

*1931թ. Պետրոս Սարաճյանի պատրաստած տեղեկագրի համաձայն Կիպրոսի թեմում կային հինգ եկեղեցիներ. 1.**Ս. Աստվածածին** եկեղեցին գտնվում էր Նիկոսիայում առաջնորդարանին կից, 2.**Ս. Պողոս** մատուռը, որը գտնվում էր Նիկոսիայի ազգային գերեզմանատան մոտ, կառուցվել էր 1892թ. պոլսեցի բարերար Պողոս Օտաճյանի կտակով[2], 3.Հանրահայտ **Ս. Մակարի** վանքը, որը գտնվում էր Նիկոսիայից 15 մղոն հեռու հյուսիս-արևելք, 4.Լառնակայում էր գտնվում **Ս. Ստեփանոս** մատուռը, 5.Ֆամագուստա քաղաքում էր գտնվում ավերակ և չգործող **Ս. Աստվածածին** եկեղեցին, որը հայտնի*

---

[1] *Պահպանվել են տարբեր տեղեկություններ ու հիշատակություններ Կիպրոսում գոյություն ունեցած հայկական եկեղեցիների և մատուռների մասին, սակայն քննվող շրջանում հայոց թեմի ենթակայության տակ էին գտնվում նշված եկեղեցիները։ Մանրամասն տե՛ս **Բակուրան**, Կիպրոս կղզի, էջ 49-114։ **Ալպոյաճեան Ա.**, Կիպրոս կղզին, էջ 228-234։*

[2] *Տե՛ս **Բակուրան**, նշվ. աշխ., էջ 87։ **Զէպէէեան Ղ.**, նշվ. աշխ., 53։*

էր նաև **Կանաչվորի վանք** անունով և կառուցվել էր 1317թ.[1]։ Այս եկեղեցին Կիպրոսի թեմի ջանքերով հայոց եկեղեցու ենթակայության է վերադարձվում 1935թ. Լոնդոնի թույլտվության հիման վրա, պայմանով, որ. «պէտք եղած նորոգութիւնները կատարուեն, որպէսզի հնութենէն ոևէ բան չի վնասուի»[2]։

Աղբյուրների վկայությամբ նախորդ դարերում կառուցված հայկական շատ եկեղեցիներ կամ ավերվել էին կամ տարբեր պատճառներով անցել այլ դավանական ուղղությունների տրամադրության տակ։ 1920-1930-ական թվերին աստիճանաբար համայնքի վերակազմությանը զուգընթաց վերանորոգվում և կառուցապատվում են թեմի ենթակայության տակ գտնվող եկեղեցիներն ու մատուռները, կառուցվում են նորերը։

Կիպրոսում ամենահայտնի եկեղեցին Ս.Մակարի վանքն էր, որը հիմնադրվել է 560թ. (որոշ տեղեկությունների համաձայն 9-րդ դարում), կոչվում է նաև Կապույտ վանք[3]։ Հիմնականում Ս. Մակարի վանքում, Նիկոսիայի հայոց առաջնորդարանում էին պահվում Կիպրոսի հայոց ձեռագիր մատյանները, որոնց թիվը հասնում էր ավելի քան վեց տասնյակի։ Այդ ձեռագրերը հետագայում Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա. Հովսեփյանը տեղափոխեց Անթիլիաս[4]։ Դեռ 1899-1905թթ. Կիպրոսի առաջնորդ եղած շրջանում Սարաճյանի նախաձեռնությամբ կառուցվում են Ս. Մակարի վանքի Մուղալյան կոչվող սենյակները[5]։ Նրա ջանքերով Ս. Մակարում կարևոր նորոգություններ են կատարվում 1920-ական թթ.։

---

[1] **Բակուրան**, նշվ. աշխ., էջ 70։ **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 234։ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի, էջ 442-443, 459։

[2] «Հասկ», 1935, մայիս-հունիս, թ. 5-6։

[3] Ս.Մակարի վանքի մասին մանրամասն տե՛ս **Բակուրան**, նշվ. աշխ., էջ 91-106։ **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 228-230։ **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս. Հայ գաղութը եւ Սբ.Մակար, էջ 127-175։

[4] Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, Վիեննա, 1961, էջ 2։

[5] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 94, 397։

Բարերար Կարապետ Մելքոնյանը 1925թ. կտակով 1000 ոսկի է նվիրում դեպի վանք տանող ճանապարհի շինարարության համար։ Որպես երախտագիտություն այս նվիրատվության Ս. Մակարի Ավագ դռան վրա մարմարյա հիշատակարան է ամրացվում[1]։ Կիպրոսի անգլիական իշխանություններն էլ իրենց հերթին տրամադրում են 1400 ոսկի՝ ճանապարհի շինարարությունն ավարտին հասցնելու համար[2]։ Արդեն մեկ տարի անց ամբողջությամբ բարեկարգվում է ճանապարհը, որը մեծապես նպաստում է վանքի այցելուների թվի աճին։

Մի շարք այլ բարերարների, մասնավորապես Կարո Պալյանի, նվիրատվությունների շնորհիվ վերանորոգվում է նաև վանքը, կառուցվում են կից նոր շինություններ, ինչպես նաև նոր զանգակատունը, ձեռք է բերվում նոր զանգ[3]։ 1933թ. սեպտեմբերին Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Ս. Մակար այցելության առթիվ վերջինիս տրամադրած միջոցներով բարեկարգվում է վանքին կից հրապարակներից մեկը[4]։

Հետաքրքիր է նշել, որ դեռ 1901թ. սեպտեմբերի 8-ին ի հիշատակ Մխիթարյան միաբանության հիմնադրման 200 ամյակի Ս.Մակարի արևելյան կողմը գտնվող բլուրը Ազգային կրթարան-որբանոցի աշակերտները տնօրեն Բակուրանի գլխավորությամբ անվանակոչել էին Մխիթարի բլուր, որտեղ քարակույտ կոթող է կանգնեցվում արձանագրությամբ։ Տարիներ անց՝ 1931թ. ուսումնական հաստատության նախկին 4 սան կողմից բլրի տարածքը բարեկարգվում է։ Նախկին քարակերտ կոթողը ճարտարապետ Կարո Պալյանի նախագծով վերակառուցվում է քարե հուշարձանի, որի բացմանը ներկա է գտնվում նաև Սահակ կաթողիկոսը[5]։ Աստիճանաբար վերա-

---

[1] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 274։

[2] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 143, 432-433։

[3] «Արև», 1926, հոկտեմբեր 20։ **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 267-296։ **Ջէպէեան Ղ.**, նշվ. աշխ, 27-29։ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 186-187։ «Արաքս», 1927, թ. 64-66։

[4] **Ջէպէեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 29։

[5] **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 154-157։

կանգնված կիսավեր Ս. Մակարի վանքը դառնում է կիպրահայության գլխավոր հոգևոր կենտրոններից մեկը։

Պետրոս սրբազանը ջանքեր է գործադրում նաև դեռ 1116թ. կառուցված կուսանոցի մաս կազմող[1] Նիկոսիայի Ս. Աստվածածին եկեղեցու[2] վերանորոգման ուղղությամբ, որը կառուցվել է 14-րդ դարում։ Անհրաժեշտ միջոցներ հանգանակելու համար ստեղծում է 12 կանանցից կազմված հանձնախումբ, որը միջոցառումների կազմակերպման միջոցով 6 ամսում պետք է հանգանակեր վերանորոգման համար անհրաժեշտ 400 անգլիական ոսկին[3]։ 1930թ. հուլիսին հանգանակած միջոցներով սկսվում է եկեղեցու նորոգման աշխատանքը, որն ավարտվում է մի քանի ամսից[4]։ Ս. Աստվածածին եկեղեցու մոտ էր տեղակայված Կիպրոսի հայոց առաջնորդարանը։

Լառնակայում գտնվող Ս. Ստեփանոս մատուռը[5] կառուցվել էր 1913թ. և նվիրված էր 1909թ. Ադանայի ջարդերի զոհերին։ Մատուռը կառուցվել էր Կիլիկիայում և Կիպրոսում կատարված հանգանակությունների շնորհիվ[6]։ Մատուռից բացի հանգանակության միջոցով նախատեսվում էր Լառնակայում գնել տարածք հայկական գերեզմանատուն հիմնելու համար։ Մատուռի կառուցմանն իրենց նպաստն են բերում նաև Սահակ Բ-ն և Ադանայի առաջնորդ Եղիշե եպիսկոպոս Կարոյանը[7]։

Նախկինում կառուցված եկեղեցիների կողքին ավելանում են նորերը։ Այսպես, 1938թ. Հարություն Պոհճալյանի միջոցներով Նիկոսիայի հայկական նոր գերեզմանատանը կառուցվում

---

[1] ***Բակուրան***, *նշվ. աշխ., էջ 61։*

[2] *Նիկոսիայի Ս. Աստվածածին եկեղեցու մասին մանրամասն տե՛ս* ***Բակուրան***, *նշվ. աշխ., էջ 61-71։* ***Ալպոյաճեան Ա.***, *նշվ. աշխ., էջ 231-233։*

[3] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 192։*

[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 302։*

[5] *«Արաքս» թերթի վկայությամբ Լառնակայում բացի այս մատուռից գտնվել են նաև 2 այլ հայկական վանք։ Տե՛ս «Արաքս», Լառնակա, 1924, հուլիս 16։*

[6] *Ատանայի վկաները եւ Սուրբ Ստեփանոս վկայարանը, էջ 116-160։*

[7] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 387։ «Արաքս», 1924, օգոստոս 1։* ***Չէպէեան Ղ.***, *նշվ. աշխ, էջ 57-58։*

է մատուռ և տեղադրվում խաչքար[1]։ 1940թ. Լիմասոլում բարեբար Սաթենիկ Սուլթանյանի նվիրատվությամբ և այլոց հանգանակությունների շնորհիվ կառուցվում է **Ս.Գևորգ** եկեղեցին[2]։ Կիպրոսում հետագա տասնամյակներում կառուցվում են նոր եկեղեցիներ ևս։ Ահա այս մի քանի եկեղեցիների ու մատուռների միջոցով էր Կիպրոսի թեմը հոգում կղզու հայ առաքելական համայնքի հոգևոր պետքերը։

Քննարկվող ժամանակաշրջանում թեմում ծառայող հոգևորականների թիվը մեծ չէր [3]։ 1924թ. դրությամբ թեմում իրենց ծառայությունն էին իրականացնում 6 հոգևորականներ, որոնցից երկու եպիսկոպոսներ՝ Պետրոս արքեպ. Սարաճյանը և Եղիշե եպիսկոպոս Կարոյանը և 4 քահանաներ[4]։ Նույն պատկերն էր նաև 1931թ. դրությամբ[5]։ Իսկ արդեն 1940թ. կղզում ծառայություն էին իրականացնում ընդամենը 2 քահանաներ[6]։

Կիպրոսի թեմը գործադրում էր ամեն ջանք գաղթականներին եկեղեցու շուրջը համախմբելու ուղղությամբ։ Թեմի հոգևորականները, բացի եկեղեցական տոների ու ծեսերի կատարումից, հաճախ էին տարբեր քարոզներով հանդես գալիս հավատացյալների առջև՝ հատկապես անդրադառնալով համայնքում հայապահպանության խնդիրներին[7]։ Ինչպես սփյուռքի մյուս համայնքներում, Կիպրոսում ևս հայոց եկեղեցին հետամուտ էր համայնքում բարոյական նորմերի պահպանմանն ու ավանդական արժեքների ամրապնդմանը։ Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում ամուսնաընտանեկան հարցերին։ Արվում էր հնարավորը հայերի շրջանում ամուսնալուծությունների և խառնամուսնությունների դեպքերը կանխելու ուղղու-

---

[1] **Զէպէեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 53-54։
[2] **Զէպէեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 29։ Հայ սփյուռք. Հանրագիտարան, էջ 344։
[3] **Զէպէեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 65-67։
[4] **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 282։
[5] Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 459։
[6] «Հասկ», 1941, թ. 3-4 էջ 56, թ. 5-6, էջ 80։
[7] «Արաքս», Լառնակա, 1924, հուլիսի 1, թ. 4, էջ 3։

թյամբ։ Հետագա ամուսնալուծություններից խուսափելու համար Սահակ Բ-ն Պետրոս սրբազանին արգելում է կատարել պսակադրություններ առանց բժշկական վկայականի, որը «մեծագոյն սխալ մի է եւ դժբաղդութեան պատճառ»[1]։ Սակայն, այնուամենայնիվ Կիլիկիո թեմերում խառնամուսնությունների թիվն այնքան էլ մեծ չէր[2]։ Պետրոս Սարաճյանը, տեղեկանալով, որ մի քանի հայ երիտասարդ ամուսնացել են հույն աղջիկների հետ, քարոզի ժամանակ հանդիմանում է նրանց արարքը, խոսելով խառնամուսնությունների վնասների մասին՝ սրբազանը սպառնում է հետագայում նման դեպքերում զրկել եկեղեցու հաղորդությունից[3]։ «Բացարձակապես կարգելեմք խառն ամուսնութիւնը, որ ընտրանեկան կեանքի փտախտն է»[4],- գրում է Սահակ կաթողիկոսը Պետրոս սրբազանին կիպրահայ համայնքում խառնամուսնությանը հաջորդած ամուսնալուծության մի դեպքի առթիվ։ «Ա՜խ, խառն ամուսնութիւն, ընտանիք քանդող եւ ապազգայնացնող ազդակ»[5],- ահա սա էր Սահակ կաթողիկոսի գնահատականը ուծացում տանող այդ երևույթի նկատմամբ։

Ինչպես տեսնում ենք, համայնքում տեղ գտած որոշ խաթարումների պատճառը համարվում էր «տարագրութեան անբնական վիճակը»։ Ստեղծված վիճակի հաղթահարումը Կիպրոսի թեմը տեսնում էր ազգային կրթության միջոցով. «Թերեւս վարժարանները կարենան լաւ սերունդ մը հասցնելով մոռցնել տալ տարագրութեան յոռի նմոյշները»[6],- ասված էր Կիպրոսի թեմի՝ Անթիլիաս ներկայացրած տեղեկագրերից մեկում։

---

[1] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 235։
[2] Մանրամասն տե՛ս Պաշտօնական ամուսնալուծութիւնք եւ վերամուսնութիւնք, Անթիլիաս, 1936։
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 317։
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 349։
[5] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 319։
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 445։

Հայության տարբեր շերտերին եկեղեցուն ավելի մոտ բերելուն էր ուղղված կղզում հաստատված թրքախոս գաղթականների համար կիրակի օրերին քարոզները վերջիններիս համար հասկանալի թուրքերենով կատարելը: Այդ առթիվ Պետրոս սրբազանը գրում է. «...թրքերէն քարոզի սովորութիւն մը հաստատած ենք թրքախօսներու համար...շատ օգտակար կըլլայ, մանաւանդ այդու արգելք կըլլայ, որ թրքախօսները բողոքականաց ժողովարանը չյաճախեն»[1]: Այս ամենն արվում էր, ինչպես երևում է մեջբերումից, նաև բողոքականների ակտիվ գործունեությանը դիմակայելու նպատակով:

Կիպրոսում ևս սուր մրցակցություն կար հայոց եկեղեցու և մյուս հայ հարանվանությունների միջև. «Հայ յարանուանութիւններու կաթոլիկ եւ մանաւանդ բողոքականներու կողմէ միշտ ջանք կը թափուի հայ եկեղեցւոյ զաւակները խարբալել եւ որսալ ու երբեմն կը յաջողին նիւթական նպաստներով եւ շլացուցիչ պաշտօններով. միշտ աղքատն է, որ այդ մարդորսներու ձեռքը կիյնայ եւ հայ եկեղեցիէն կուծանայ»[2],- ասված էր Կիպրոսի թաղական խորհրդի տեղեկագրում:

Հետաքրքիր մի դրվագ է Պետրոս սրբազանը պատմում անգլիացի կառավարիչ Սթորսի հետ հանդիպումից: Երբ զրուցում էին հայության առջև ծառացած խնդիրներից, կրոնական հարանվանություններից, Սթորսը թեմի առաջնորդի համար անսպասելի հորդորում է. «Հայ եկեղեցիէն հեռացող հայ բողոքականներու եւ հայ կաթոլիկներու հասկցնել, որ հայը առանց լուսաւորչական եկեղեցւոյ չը կրնար իր գոյութիւնը պահել»[3]: Խիստ հետաքրքրական են օտարազգի պաշտոնյայի մտահոգությունն ու արված դիտարկումը: Պետրոս սրբազանը Սահակ կաթողիկոսին գրած նամակներից մեկում հիշատակում է, որ իր հեղինակությամբ հրատարակվել է մի «տետրակ», որտեղ

---

[1] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 127:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 455:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ էջ 190:

արտացոլել է իր մտքերը «կրօնական զանազան յարանուանութեան ձգտած նպատակներու եւ գործունեութեանց վրայ»[1]։

Կաթոլիկ և հատկապես բողոքական հարանվանությունների հետ մրցակցությունը հատկապես սուր է դրսևորվում Կիպրոս տեղափոխված Կիլիկեցի որբերի կրթության և դաստիարակության հարցերում։

1924թ. Կիպրոսի թեմում եկեղեցական տոները սկսում են ի կատար ածվել նոր տոմարի համաձայն, ինչպես որ անում էր Կիպրոսի հույն ուղղափառ արքեպիսկոպոսությունը։ Թեև Սիրիայում և Լիբանանում Կիլիկիո կաթողիկոսությունը շարունակում է առաջնորդվել հին տոմարով[2], Սահակ Բ-ն թույլարում է Պետրոս սրբազանին արարողություններ իրականացնել նոր տոմարով՝ հորդորելով այդ հարցում օգտագործել «Էջմիածնայ հետեւողութեամբ պատրաստուած օրացոյցը, որպէսզի նոր զարտուղութիւն մը ալ ատկէ առաջ չգայ»[3]։

Կիպրոսի թեմը և կիպրահայությունը մշտապես եղել են Կիլիկիո կաթողիկոսության բարձրագույն հոգևոր իշխանությունների ուշադրության կենտրոնում։ Վերջիններս պարբերաբար այցելում էին Կիպրոս՝ մասնակցելու տարբեր միջոցառումների՝ նպատակ ունենալով նաև տեղում ծանոթանալու իրավիճակին և առկա խնդիրներին։

Պարբերաբար ամռան ամիսները Ս.Մակարի վանքում անցկացնելու և կիպրահայության խնդիրներին ծանոթանալու համար Կիպրոս էր այցելում Սահակ Բ։ Նրա առաջին այցը տեղի է ունենում 1922թ. օգոստոսին[4], այդ այցերը կրկնվում են 1931, 1933 և 1934 թվականներին[5]։ 1931թ. օգոստոսին Սահակ Բ-ի

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 227։ Ցավոք, չհաջողվեց հայտնաբերել այդ գրքույկը։

[2] 1925 թ. սկսած Սիրիայում և Լիբանանում ևս Կիլիկիո կաթողիկոսությունը անցնում է նոր տոմարի։

[3] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 117, 121։

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 72։

[5] «Արև», 1933, հունիսի 29։ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 364, 372։

Կիպրոս այցի առթիվ Սարաճյան սրբազանը Ս.Մակարում ճաշկերույթ է կազմակերպում՝ հրավիրելով համայնքի երևելիներին և գործող ազգային հաստատությունների ներկայացուցիչներին[1]։1934թ. բարերար Կ.Մելքոնյանի հուղարկավորությունը և թաղման կարգը[2] կատարեցին Սահակ Բ-ն և աթոռակից կաթողիկոս Բաբկեն Կյուլեսերյանը[3]։ Մելքոնյանը կարևոր ներդրում էր ունեցել ծանր նյութական վիճակում գտնվող Կիլիկիո կաթողիկոսությանը աջակցելու հարցում։ 1930թ. ապրիլին Բաբկեն Կյուլեսերյանի դիմումի հիման վրա բարերարը համաձայնվել էր տարեկան 5000 ոսկի կենսաթոշակից 1000-ը «մշտնջենապէս ամէն տարի տրուելու պայմանաւ, սկսեալ 1930 ապրիլ 29-էն»[4] հատկացնել կաթողիկոսությանը։ Սա անչափ կարևոր ներդրում էր ֆինանսական ծանր վիճակում գտնվող կաթողիկոսությանը կայուն միջոցներով ապահովելու առումով։ Մելքոնյանի տրամադրած 1000 անգլիական ոսկին երկար ժամանակ Կիլիկիո Աթոռի միակ հաստատուն եկամուտն էր։

1934թ. առաջին անգամ Կիպրոս է այցելում նաև Կիլիկիո աթոռակից կաթողիկոս Բաբկեն Կյուլեսերյանը։ Նա, մինչ այդ, միշտ ցանկացել էր այցելել Կիպրոս, սակայն զբաղվածությունը այցը հնարավոր դարձրեց իրագործել միայն 1934թ.։ Նախ 1934թ. ամռանը, ինչպես վերը նշվեց, նա մասնակցեց Կ.Մելքոնյանի հուղարկավորությանը։ Մինչ այդ, 1934թ. գարնանը

---

[1] «Արև», 1931, օգոստոսի 13։

[2] Կարապետ Մելքոնյանը մահացել էր 1934թ. հուլիսի 23-ին Ալեքսանդրիայում։ Նրա դին տեղափոխվում և օգոստոսի 19-ին ամփոփվում է բարերարի միջոցներով կառուցված Մելքոնյան հաստատության մոտ կառուցված դամբարանում։ Այդտեղ է տեղափոխվում նաև Ալեքսանդրիայում 1920թ. մահացած բարերարի մյուս եղբայրը՝ Գրիգոր Մելքոնյանը։ Տե՛ս **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս, 1990, էջ 1053-1055։ «Հասկ», 1934, թ. 9։ Մելգոնեան կրթական հաստատութիւն (համառօտ ակնարկ), էջ 6-7։

[3] **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Պատմութիւն, էջ 1054-1055։

[4] Թղթակցութիւն Սահակ Ա. եւ Բաբգէն Բ. կաթողիկոսներու, էջ 266, 282, 292։

Բաբկեն աթոռակից կաթողիկոսը կատարեց առաջին թեմական այցելությունը Կիպրոս[1]։ 1934թ. մարտի 24-ին նա Պետրոս սրբազանի ուղեկցությամբ ճանապարհվում է Կիպրոս, որտեղ մնում է մինչև մայիսի 10-ը[2]։ Այցը ճանաչողական էր, որի նպատակն էր ծանոթանալ տեղի եկեղեցական և ազգային կառույցների գործունեությանը, համայնքի ներքին կյանքին, ինչպես նաև Կիպրոսի հայությանը տեղեկացնել Կիլիկիո աթոռի գործունեության մասին։

Բաբկեն կաթողիկոսը այցելում է բոլոր հայաշատ քաղաքները, որտեղ հանդիպում է հայության ներկայացուցիչների հետ, քարոզում, մատուցում պատարագներ[3]։ Ս. Մակարում մատուցած պատարագին ներկա է լինում ավելի քան հազար մարդ, այսինքն կղզու հայ բնակչության մոտ մեկ երրորդը[4]։ Տեղի համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Բաբկեն կաթողիկոսը, խոսելով հայապահպանության խնդիրների մասին, ընդգծում է, որ. «հայ ժողովուրդին իբրև հայ-քրիստոնեայ պահպանութեան համար պէտք է ամրացնել հայ տունը, հայ դպրոցը, հայ եկեղեցին»[5]։

Ի պատիվ աթոռակից կաթողիկոսի այցի Բարեգործականի տեղի մասնաճյուղը կազմակերպում է մի շարք ժողովներ և «պատուոյ սեղաններ»։ Բաբկեն կաթողիկոսը այցելում է նաև Մելքոնյան վարժարան՝ արժանանալով ջերմ ընդունելության։ Հանդիպումների ժամանակ աթոռակից կաթողիկոսը կարևորում է Բարեգործականի դերն ու նշանակությունը Սփյուռքի հայկական դպրոցների պահպանման հարցում, ինչպես նաև շեշտում է այդ կառույցի համահայկական դերը, որը՝ «...իբրև կազմակերպութիւն, հիանալի պատեհութիւն մը կընծայէ հայ

---

[1] «Արև», 1934, մարտի 15։
[2] «Հասկ», 1934, թ. 4, 5։
[3] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 368-369։
[4] «Արև», 1934, մայիսի 29։
[5] «Հասկ», 1934, թ. 5։

ժողովուրդի բոլոր յարանուանական և կուսակցական հատուածներուն, համագործակցելու նպատակի մը շուրջ։ Բարեգործականի մէջ չկայ եկեղեցիներու տարբերութեան խնդիր, չկայ սեռի և հասակի խտրութիւն, չկայ դասակարգի զանազանութիւն, այլ **հայ** կայ միայն»[1]։

Բաբկեն վեհափառը նաև ի հիշատակ ցեղասպանության նահատակների 1934թ. ապրիլի 22-ին պատարագ է մատուցում Նիկոսիայի Ս. Աստվածածին հայկական եկեղեցում[2]։ Կաթողիկոսը հանդիպումներ է ունենում նաև Կիպրոսի անգլիացի կառավարչի և Կիպրոսի հունական արքեպիսկոպոսության տեղապահի հետ[3]։

Աթոռակից կաթողիկոսը այցելում է նաև Նիկոսիայի հունական պատրիարքարան և Մաքերայի հունական վանք՝ կարևոր քայլ կատարելով հայ-հունական հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ։ Կահիրեի «Արև»-ը, անդրադառնալով Բաբկեն կաթողիկոսի Կիպրոս այցին գրում է, որ վերջինս. «Ամբողջ մէկ ու կէս ամիս կրցաւ տենդագին շարժման մը մէջ դնել ու խանդավառել իր ներշնչող խօսքին հմայնքով ամբողջ կիպրահայ գաղութը», հույս հայտնելով, որ այդ խանդավառությունը կպահպանվի նաև կաթողիկոսի մեկնելուց հետո[4]։

---

[1] «Հասկ», 1934, թ. 5։

[2] Հետագայում Բաբկեն աթոռակից կաթողիկոսը Մուսա լեռան շրջանի գյուղեր այցելության ընթացքում նկատում է, որ Բիթիասի, Հաջի Հաբիբլիի, Յողուն Օլուգի, Խդրբեգի և Անտիոքի եկեղեցիների մեջ. «Տիրամօր պատկերները օտար արուեստով շինուած ջրանկարներ են» և կարգադրում է որպեսզի դրանք հեռացնենը, փոխարենը «հայ արուեստով իւղաներկեր դնել անոնց տեղ»։ Այդ նպատակով Կիպրոսում Նիկոսիայի Ս. Աստվածածին եկեղեցու Ավագ խորանի Տիրամոր պատկերի ոճով հինգ յուղաներկ պատկերներ են պատվիրվում գեղարվեստի ուսուցիչ Առաքել Պատրիկի մոտ և նկարները փոխանցվում են Անտիոքի առաջնորդ Խադ սրբազանին նշված գյուղերի եկեղեցիներում տեղադրելու համար։ Այս, առաջին հայացքից ոչ շատ էական քայլով, Կիլիկիո աթոռը փորձում էր պահպանել հայկական եկեղեցական ավանդույթները։ Տե՛ս «Հասկ», 1936, թ. 1-2։

[3] «Հասկ», 1934, մայիս, թ. 5։

[4] «Արև», 1934, մայիսի 29։

Բաբկեն Ա. աթոռակից կաթողիկոսը, տպավորվելով Կիպրոս կղզով և այնտեղ գտնվող հայկական հուշարձաններով, որոշում է «Սբ. Մակարի վրայ գրել տետրակ մը», սակայն գիտնական հոգևորականի պրպտումները և հավաքած նյութը հնարավորություն են տալիս անդրադառնալ ողջ կիպրահայ գաղութին և հերթական պատմագիտական հետազոտությունը նվիրել հենց այս թեմային։ Կիպրոս կատարած այցից երկու տարի անց Անթիլիասի տպարանում լույս է տեսնում Բաբկեն Ա-ի «Հայ Կիպրոս. Հայ գաղութը եւ Սբ. Մակար» աշխատությունը, որը լինելով կարևոր երկ նվիրված կիպրահայ գաղութի պատմությանը, հենց հեղինակի բնորոշմամբ, նյութերի սակավության պատճառով «լման գործ մը չէ»[1], քանի որ նախ և առաջ հնարավորություն չէր ունեցել ամբողջական ձևով օգտվելու «Կիպրոսի մէջ գրուած, Կիպրոսի համար եւ կամ Կիպրոսի վերաբերմամբ գրուած» բոլոր հնարավոր աղբյուրներից։

Աշխատանքն, այնուամենայնիվ, հիրավի կարևոր աղբյուր է Կիպրոսի հայության պատմության հետազոտման համար։ Ի դեպ, գրքի վաճառքից առաջացած ողջ հասույթը նախատեսվում էր հանձնել Ս. Մակարի «բարեգործութեանը»։ Այսպիսով, Բաբկեն աթոռակից կաթողիկոսի Կիպրոս այցն ոչ միայն կարևոր հնարավորություն էր տեղում համակողմանիորեն ծանոթանալու համայնքի վիճակին և հայության խնդիրներին, այլև այն նպաստեց հարաբերությունների էլ ավելի ջերմացմանը Անթիլիասի և տեղի հայության հետ։

Կիպրոսի թեմն ակտիվ մասնակցում էր նաև Կիլիկիո կաթողիկոսության նախաձեռնություններին՝ փորձելով նպաստել կաթողիկոսության ամրապնդման գործին։

1931թ. ապրիլին Սահակ Բ-ն Հալեպում նախատեսում է անցկացնել կաթողիկոսության թեմական եպիսկոպոսների և աշխարհիկ ներկայացուցիչների մասնակցությամբ ժողով «...քայլ մըն ալ

---

[1] ***Բաբգէն Ա. Կիւլէսէրեան***, *Հայ Կիպրոս, Ներածական հատված, էջ Դ։*

յառաջ տանելու նպատակաւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան կազմակերպութիւնը»[1]։ Ժողովին Կիպրոսից, բացի թեմի առաջնորդից, մասնակցում են ևս երկու աշխարհիկ պատգամավորներ[2]։ Ժողովի օրակարգը ձևավորելու և թեմերում իրավիճակին ծանոթանալու համար կաթողիկոսը թեմեր էր ուղարկել կոնդակ-շրջաբերական և 26 հարցից բաղկացած հարցարան[3]։ Կիպրոսի ազգային իշխանությունների 1931թ. փետրվարին լրացրած հարցարանում զետեղված տեղեկատվությունը հանդիսանում է խիստ կարևոր վիճակագրական նյութ Կիպրոսի հայության պատմության վերաբերյալ[4]։

Այդ տեղեկագրում Կիպրոսի Թաղական խորհուրդը կատարում է հետաքրքիր առաջարկներ եկեղեցու բարեփոխումների վերաբերյալ, որոնք անշուշտ բխում էին ստեղծված վիճակից։ Առաջարկվում էր, քանի որ «ժողովուրդը եկեղեցւոյ լեզուն չի հասկնար» եկեղեցական արարողությունները կատարել աշխարհաբարով և «պատշաճ ընտրութեամբ» հնարավորինս կրճատել ժամերգությունների քանակն ու 4-5 ժամ տևող պատարագի ժամերը։ Առաջարկվում էր նաև քայլեր անել որպեսզի հոգևորականներն ավելի մոտ գտնվեն իրենց հոտին. «պարտադրել քահանաները, որ յաճախակի այցելեն իրենց ծուխերուն եւ հոգեւոր ու բարոյական խրատներով անոնց պարտականութիւնները սորվեցնեն ու յիշեցնեն»[5]։

Միաժամանակ առաջարկվում էր վերանայել կուսակրոնության հարցը, որը հնարավորություն կտար շատ արժանավոր և խելացի անձանց անցնել հոգևոր ծառայության։ Հետաքրքրական

---

[1] ***Բաբգէն Ա. Կիւլէսէրեան***, *Հայ Կիպրոս, էջ 1006։*

[2] *Կիպրոսի թեմի կողմից որպես աշխարհիկ պատգամավորներ ընտրվում են Արամ Գևորգյանը և Հարություն Պետելյանը։ Տե՛ս Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 305, 309։*

[3] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 302-306, 438-440։*

[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 441-459։*

[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 453։*

էր եկեղեցականներին թոշակ կամ աշխատավարձ տրամադրելու առաջարկությունը, որի ընդունման դեպքում, ըստ հեղինակների, հոգևորականները կազատվեն «ապրուստի ամենօրեայ մղջաւանջէ», միաժամանակ վերջիններս հնարավորություն կստանան մնալ իրենց բարձրության վրա, քանզի վարձատրման ներկա ձևը «եկեղեցականը կը ստորացնէ, կեղծաւորելու կը վարժեցնէ, մուրացկանի աստիճանին կիջեցնէ»[1]: Փաստորեն, շատ խելամիտ ձևով առաջարկվում էր եկեղեցական արարողությունների՝ պսակ, թաղում, մկրտություն և այլն, համար նախատեսված վճարները գանձել եկեղեցու հոգաբարձության կողմից, իսկ հոգևորականներին տալ համապատասխան աշխատավարձ: «Եկեղեցականը ժողովուրդէն ոեւէ անուան տակ դրամ առնելու իրաւունք պէտք չէ ունենայ»[2],- ամբողջացնում է իր տեսակետը Կիպրոսի Թաղական խորհուրդը: Հասկանալի է, որ առաջարկները կատարվել էին թեմի առաջնորդի գիտությամբ և մասնակցությամբ:

Այս առաջարկները բխում էին առօրյա կյանքի իրողություններից, սակայն դրանց հիմնական մասը չընդունվեցին և կյանքի չկոչվեցին եկեղեցու կողմից: Կիպրոսի թեմի առաջարկները ցույց են տալիս, որ թեմի պատասխանատուներն ունեին որոշ մտահոգություններ եկեղեցին ժողովրդին ավելի մոտ բերելու, նոր կազմավորվող համայնքներում կուտակված խնդիրներն համատեղ ջանքերով արդյունավետ լուծելու առնչությամբ:

Այսպիսով, Կիլիկիո կաթողիկոսությունը, ի դեմս Կիպրոսի հայոց թեմի գործադրում էր հնարավոր բոլոր ջանքերը Կիպրոսի հայկական համայնքը եկեղեցու շուրջ համախմբելու, համայնքի հոգևոր պահանջմունքները բավարարելու ուղղությամբ, որի գլխավոր նպատակը հայապահպանությունն էր և ուծացման գործընթացների հնարավոր կանխումը:

---

[1] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 455:
[2] Տե՛ս նույն տեղում:

2.2.Կիպրոսի թեմի ջանքերը ազգային կրթության կազմակերպման ուղղությամբ

Հայապահպանության տեսանկյունից հաջորդ կարևոր ուղղությունը կրթական կյանքի կազմակերպումն էր։ Մինչ Կիպրոսի թեմը Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության տակ անցնելը կղզում գործել են մի քանի կրթական հաստատություններ։ Նիկոսիայի Ս. Աստվածածին հայոց եկեղեցուն կից գործող տղաների Վարդանանց վարժարանի մասին հիշատակվում է դեռ 19-րդ դարի 60-ական թթ. սկսած[1]։ Նույն եկեղեցում գործում էր նաև Շուշանյան աղջիկների վարժարանը[2]։ Այս ուսումնական հաստատությունների կայացման ու զարգացման համար կարևոր ներդրում է ունեցել այն ժամանակ դեռ վարդապետ Պետրոս Սարաճյանը, ով 1899-1905թթ. ղեկավարել էր Կիպրոսի հայոց թեմը[3]։

Նշված ուսումնական հաստատություններից բացի 1897թ. Նիկոսիայում հիմնվել և շուրջ յոթ տարի գործել են Ազգային-կրթարան որբանոցը և մի քանի այլ ոչ մեծ կրթօջախներ, որոնք երկար կյանք չեն ունեցել։ Այդ ուսումնական հաստատությունները հիմնականում պահվել են բարերարների նվիրատվությունների շնորհիվ։ Նիկոսիայի Ազգային կրթարան-որբանոց պահվում էր Մանչեստրում հիմնականում հայ վաճառականներից կազմված խնամակալության հայթայթած միջոցնե-

---

[1] *Տե՛ս* ***Ալպոյաճեան Ա.****, նշվ. աշխ., էջ 235։* ***Ջէպէէան Ղ.****, նշվ. աշխ., էջ 79։*

[2] *Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 94, 397։* ***Ալպոյաճեան Ա.****, նշվ. աշխ., էջ 228։* ***Բաբգէն Ա. Կիւլէսէրեան****, Հայ Կիպրոս, էջ 112։*

[3] ***Բակուրան****, նշվ. աշխ., էջ 85-86։*

րով՝ Տնօրեն խորհրդի հսկողության ներքո, որը նախագահում էր թեմի առաջնորդ Պետրոս վարդապետ Սարաճյանը[1]*։*

«Նիկոսիոյ մէջ ունինք երկսեռ վարժարաններ եւ մանկապարտէզ մը, Սբ. Մակարայ վանքին եւ Լառնակայի մէջ մէյ մէկ վարժարան, որոնց մէջ կուսանին 100-120 ուսանողներ եւ ունին 6 կրթական պաշտօնեաներ»[2]*,- նշվում էր Կիպրոսի թաղական խորհրդի 1913թ. տեղեկագրում։ Հիշատակությունների համաձայն 1920-ականների սկզբին փոքրիկ դպրոց գործել է նաև Ս. Մակարի վանքում 10-12 աշակերտով և մեկ ուսուցչով*[3]*։*

Կիպրոսի հայերի կրթական կյանքը ամբողջությամբ փոխվում է 1920-ականներից սկսած։ Առաջ են գալիս նոր խնդիրներ կրթական կյանքի կազմակերպման հարցում։ Խնդրի լուծումը հիմնականում ստանձնում է Կիպրոսի թեմը և տեղի ազգային իշխանության մարմինները։ Պետրոս Սարաճյանը մշտապես կարևորել է կրթական գործի կազմակերպումը։ Դեռ մինչև Կիպրոսի թեմի առաջնորդ նշանակվելը վերջինս կրթական հաստատություններ հիմնելու և բարեկարգելու հարուստ փորձ ուներ։ Բացի այդ վերջինս մշտապես զուգահեռաբար զբաղվել է ուսուցչությամբ։ «Ուր եղած է ... անձնուիրաբար ուսուցչութիւն ըրած է»,- գրում է Պետրոս սրբազանի մասին Կիլիկիո աթոռակից կաթողիկոս Բաբկեն Կյուլեսերյանը[4]*։*

Կիպրոսում հայերի թվի աճին զուգընթաց կարիք առաջացավ ավելացնել կրթական հաստատությունները, դրանք համալրել անհրաժեշտ մասնագետներով, ապահովել գործունեության համար անհրաժեշտ նյութական միջոցներով։ 1920-ականների սկզբից Կիպրոսի թաղական խորհրդին կից գործում էր Վարժարանների հոգաբարձությունը, որին էլ հիմնականում

---

[1] ***Բակուրան***, *նշվ. աշխ., էջ 86։ Ազգային կրթարան-որբանոց ի Կիպրոս, Տեղեկագիր Ե տարեշրջանի, Նիկոսիա, 1902, էջ 21-36,* ***Ալպոյաճեան Ա.***, *նշվ. աշխ., էջ 237։* ***Բաբգէն Ա. Կիւլէսէրեան***, *Հայ Կիպրոս, էջ 93-102։*

[2] *Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 388։*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 31։*

[4] ***Բաբգէն Ա. Կիւլէսէրեան***, *Հայ Կիպրոս, էջ 251։*

վերապահված էր կազմակերպել և վերահսկել կրթական հաստատությունների գործունեությունը[1]։

Աշխատանքի շնորհիվ ավելացան ուսումնական հաստատությունների թիվը և կրթական կյանքը դարձավ ավելի կազմակերպված։ «Սարաճեան սրբազան եւ Թաղական խորհուրդը կարելի կընեն, որպէսզի տեղացի եւ գաղթական երկսեռ աշակերտութիւնը չի զրկուի ուսումէն»,- գրում էր «Արևը»[2]։ 1923թ. Կիպրոսում հաստատված գաղթականներից շուրջ 700-ը դպրոցական տարիքի երկսեռ երեխաներ էին, որոնց կրթության հարցերը կազմակերպելու և անհրաժեշտ միջոցներով ապահովելու համար Պետրոս Սարաճյանը օգնության ակնկալիքով դիմում է Հայկական բարեգործական ընդհանուր միությանը։ Խնդրահարույց էր նաև ուսուցիչներին համապատասխան աշխատավարձով ապահովելու հարցը[3]։

Ստեղծված վիճակից ելնելու և առկա խնդիրներն արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ էր համակարգված մոտեցում ցուցաբերել։ Սարաճյանի ջանքերով և բարերար Հարություն Մելիքյանի նվիրատվությամբ 1921թ. Նիկոսիայում կառուցվում և գործունեությունն է սկսում նվիրատուի անունը կրող Մելիքյան ազգային երկսեռ վարժարանը, որը նախակրթարան էր[4]։ Վարժարանը գլխավորապես պահվում էր Ս.Մակարի վարձակալության տրված սենյակների, հողերի ու կալվածքների հասույթների հաշվին[5]։ Այդ հասույթները թեմի հիմնական եկամտի աղբյուրն էին, որով հոգացվում էին բազմաթիվ այլ ծախսեր[6]։ 1923թ. Նիկոսիայի ազգային վարժարանում և կից մանկապարտեզում ուսանում էին 320[7], 1920-ականների կեսին՝

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 441-442։

[2] «Արև», 1922, նոյեմբերի 27։

[3] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 189-191։

[4] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 37, 94։

[5] «Արև», 1926, հոկտեմբերի 20, 1938, փետրվարի 10։

[6] «Արև», 1925, օգոստոսի 31։

[7] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 849, թ. 2։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 194։

ավելի քան 400 երկսեռ աշակերտ՝ 11 ուսուցիչով[1]։ Կից մանկապարտեզը 1930-ականներին ավելի քան 200 սանով տեղակայվեց Մելիքյան ազգային վարժարանի շենքում[2]։

1938թ. կիպրաբնակ բարերար Տիգրան Ուզունյանը Նիկոսիայի Վարդանանց վարժարանի տեղում կառուցում է Ուզունյան վարժարանը[3]։ Շուտով Մելիքյան վարժարանը միավորվում է դրան և Մելիքյան-Ուզունյան վարժարան անվանումով շարունակում գործել մինչև 1963թ.[4]։

Կիպրոսի երկրորդ խոշոր քաղաք Լառնակայում հայկական առաջին դպրոցը հիմնվել էր դեռևս 1909թ. Ադանայից գաղթած հայերի կողմից[5]։ 1920-ական թթ. սկզբներին կարիք է առաջանում վարժարանի նոր և ավելի ընդարձակ շենքի կառուցման համար։ Մինչ այդ Լառնակայի դպրոցահասակ երեխաների համար ուսուցման գործընթացը կազմակերպվում էր վարձակալության հիմունքով կաթոլիկների տրամադրած շենքում։ Սակայն, քանի որ Պետրոս սրբազանի խոսքով. «չկրցանք ոչ մի աղքատ ընդունել եւ ոչ ալ կրցանք աշակերտաց վրայ բարոյական հսկողութեան իրաւունք ունենալ»[6], որոշվում է եկեղեցու հովանու ներքո գործող վարժարանի նոր շենք կառուցել։ «Ա՛խ այդ կաթոլիկները, որ ամէն տեղ մեր դժբաղդութիւնը օգտագործել կ՚ուզեն»[7]։ Այսինքն, մրցակցությունը հայոց եկեղեցու և մյուս դավանական ուղղությունների ներկայացուցիչների միջև սուր ձևով դրսևորվում էր նաև Կիպրոսում։

Նոր վարժարանը, դատելով սրբազանի խոսքերից, լուծելու էր ոչ միայն սոցիալական խնդիր՝ այսինքն դառնալու էր հա-

---

[1] **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 236։ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 216։

[2] **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 113։ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 31, 192։

[3] **Սարաճեան Պ.**, Կեանքի մը պայքարը, Անթիլիաս, 1937, էջ 145։ «Հասկ», 1938, թ. 2, էջ 31-32, **Չէպէեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 83։

[4] Հայ սփյուռք, հանրագիտարան, էջ 345։

[5] Ատանայի վկաները եւ Սուրբ Ստեփանոս վկայարանը, էջ 142։ **Չէպէեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 84-85։

[6] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք. Սարաճեանի, էջ 88։

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 89։

սանելի աղքատ գաղթականների երեխաների համար, այլ նաև հայապահպանության խնդիր՝ հայությանը հեռու պահելով այլ հարանվանությունների ազդեցություններից։

1923թ. հոկտեմբերին ավարտվում է Լառնակայի ազգային վարժարանի շենքի կառուցումը՝ կիպրահայության «ազգային սնտուկի» և 1913թ. հիմնադրված Ամերիկայի «Ադանայի հայ ուսումնասիրաց միութեան» միջոցներով։ Այս կազմակերպության մասնաճյուղը 1925թ. հիմնադրվում է նաև Լառնակայում, որը շարունակում է աջակցել տեղի վարժարանին[1]։ 1926թ. բարերար Կ.Մելքոնյանի միջոցներով կառուցվում է վարժարանի նոր հարկաբաժինը[2]։ Այս ուսումնական հաստատությունը ևս նախակրթարան էր։ 1920-ականների կեսին Լառնակայի ազգային վարժարանում ուսանում էին ավելի քան 200 երկսեռ աշակերտներ[3], դասավանդում՝ 6-7 ուսուցիչներ[4]։

Հետագայում հայկական ուսումնական հաստատությունների թիվն ավելանում է[5]։ 1928թ. դպրոցներ են բացվում նաև Կիպրոսի մյուս հայաբնակ քաղաքներում՝ Ամիանթոսում, Լիմասոլում և Ֆամագուստայում[6]։ Այդ շրջանում Ամիանթոսի վարժարանում ուսանում էին 50, Լիմասոլում՝ 22, իսկ Ֆամագուստայում՝ 18 երկսեռ աշակերտ։ Աշակերտների թիվը հետագայում աճում է[7]։ Նոր դպրոցների բացման առթիվ Պետրոս սրբազանը Սահակ Բ-ին գրում է, որ հավելյալ ծախսեր են առաջացել, բայց «խիղճս հանդարտ է, որովհետեւ հայ

---

[1] **Ջէպէէան Ղ.**, նշվ. աշխ., էջ 84-85։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 250, 259-264։

[2] **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 236։ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 94։ **Ջէպէէան Ղ.**, նշվ. աշխ., էջ 85։

[3] Լառնակայում դպրոցահասակ երեխաների թիվը հասնում էր 400-ի և կարիք կար ավելի մեծ դպրոցի։ Տե՛ս «Արաքս», 1924, հուլիս 16։

[4] **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 236։ Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 216։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 194։

[5] Նիկոսիայի ազգային վարժարանը գործել 19-րդ դարի կեսերից սկսած։

[6] «Արև», 1928, հոկտեմբերի 4։

[7] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 284, 293-294։

մանուկները այդ վայրերու մէջ, օտար վարժարաններէ ազատեցինք»[1]։

Արդեն 1920-ականների վերջին բոլոր խոշոր քաղաքներում՝ Նիկոսիա, Լառնակա, Լիմասոլ, Ֆամագուստա, Ամիանթոս, գործում էին մեկական դպրոց, դրանց կից 5 մանկապարտեզ[2]։

1929թ. Կիպրոսի հայկական վարժարանների աշակերտների թիվը հասնում էր 690-ի[3], 1931թ.՝ 613-ի[4]։ Նշենք, որ թվի մեջ ներառված չեն Մելքոնյան վարժարանի սաների թիվը։ Կիպրոսի հայկական դպրոցները հիմնականում համալրված էին բանիմաց ուսուցչական կազմով, որոնց ընդհանուր թիվը 1931թ. 31 էր[5]։ Պետք է նշել, որ երբեմն դպրոցները կանգնում էին որակյալ ուսուցչական կադրերի խնդրի առջև։ 1940թ. թեմի 5 դպրոցներում ուսանում էր մոտ 500 աշակերտ և աշխատում 25 ուսուցիչ[6]։ Աշակերտների թվի նվազումը հիմնականում պայմանավորված էր գաղթականների ներհոսքի դադարեցմամբ և ոմանց կղզուց հեռանալով։

1920-1930-ական թթ. Կիպրոսի հայկական դպրոցներից ամենահայտնին շարունակում էր մնալ Նիկոսիայի Մելիքյան ազգային վարժարանը։ 1926թ. գործում էր նաև հայտնի Մելքոնյան վարժարանը, որն անմիջապես գտնվում էր ՀԲԸՄ կառավարման ներքո և չէր ենթարկվում Կիպրոսի հայոց թեմին[7]։ Այն սկզբից հանդես էր գալիս որպես որբանոց-նախակրթարան, ապա վերածվում է երկրորդական վարժարանի[8]։

Ուսումնական հաստատությունները պահվում էին հիմնականում Կիպրոսի թեմի միջոցներով։ Որոշ աջակցություն էին ցուցաբերում նաև բարերարները, ինչպես նաև տեղական

---

[1] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 262։
[2] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի, էջ 143, 446-447,456-459։ **Բարգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 113-114։
[3] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 284։
[4] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 459։
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 450, 459։
[6] «Հասկ», 1941, մայիս-հունիս, թ. 5-6, էջ 80։
[7] **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 237-239։
[8] Մելգոնեան կրթական հաստատութիւն, էջ 16։

անգլիական իշխանությունները, որոնք տրամադրում էին ոչ մեծ չափի նպաստ[1]։ Օրինակ Նիկոսիայի վարժարանի համար տարեկան ծախսվում էր 500, իսկ Լառնակայի վարժարանի համար՝ 240 ոսկի, որը Պետրոս սրբազանի հավաստմամբ շատ ծանր էր ոչ մեծ եկամուտ ունեցող թեմի համար[2]։ 1929թ. 690 աշակերտի ուսման կազմակերպման ընդհանուր ծախսը կազմում էր շուրջ 1275 անգլիական ոսկի, որի ընդամենը մի մասն էր գոյանում աշակերտների ուսման համար բարեգործական կառույցների կողմից վճարվող թոշակներից։ Դպրոցներից որոշներն ունեին իրենց սեփական նորակառույց շենքերը, իսկ մյուսները գործում էին վարձակալված շենքերում։

Հայկական դպրոցները փորձում էին տալ որակյալ կրթություն և մրցակցել այլ ուսումնական հաստատությունների հետ։ «Մենք Կիպրոսի համար սրտի կատարեալ գոհունակութեամբ կը յայտարարենք թէ մեր Ազգային վարժարաններուն սանուկները լաւագոյն ձեռքերու յանձնուած են ու ցարդ դժգոհութիւն պատճառելիք բանի մը չենք հանդիպած եւ կը յուսանք հակառակը արձանագրելու առիթը չի պիտի ունենանք ապագային»[3],- գրում էր «Արաքս» թերթը։

Կարևոր տեղ էր հատկացվում նաև մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության հարցերին։ 1926թ. Մելիքյան ազգային վարժարանին կից մարզանքի ուսուցիչ Պ.Եազմճյանի նախաձեռնությամբ սկսում է գործել Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) մասնաճյուղ, որին թեմի առաջնորդի ցուցումով անդամակցում են նաև դպրոցի աշակերտները[4]։ Կղզում գործում էին նաև հայկական մարզական խմբակներ և ֆուտբոլի թիմեր[5]։ 1942թ. սկզբին

---

[1] **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 114։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 284։

[2] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 143։

[3] «Արաքս», 1924, հունիսի 16։

[4] «Արև», 1926, ապրիլի 2։ «Յուսաբեր», 1927, հունիսի 6։

[5] «Արև», 1927, 8 հունվարի, թիվ 2400։

առաջին կիրակնօրյա դպրոցն[1] է հիմնվում նաև Կիպրոսի թեմում՝ Նիկոսիայում, Խորեն քահանա Գուլիկյանի ջանքերով[2]։ Կարճ ժամանակ անց հայ աշակերտների թիվը գերազանցում է 200-ը[3]։

Գործում էին նաև մի քանի մասնավոր դպրոցներ[4]։ «Արև» թերթը, անդրադառնալով Կիպրոսի մասնավոր դպրոցներին, գրում է, որ մի քանի հայ ունևորներ «անձնական վարժարաններ հաստատած են իրարմէ անկապ և անջատ»[5]։

Յավոք, Կիպրոսում ևս որոշ ծնողներ նախընտրում էին երեխաների ուսումը կազմակերպել օտար դպրոցներում։ 1930-ական թթ. սկզբին 100-ից ավելի երեխա հաճախում էր օտար՝ հիմնականում անգլիական և ամերիկյան, դպրոց[6]։

Այսպիսով, Կիպրոսի թեմը և համայնքը հայապահպանության համար խիստ կարևորվում էր ազգային կրթական կյանքի կազմակերպումը։ 1920-ական թթ. կազմակերպական աշխատանքների և բարերարների նվիրատվությունների շնորհիվ ամբողջությամբ փոխվեց Կիպրոսի կրթական կյանքի պատկերը, բացվեցին նոր ուսումնական հաստատություններ, կատարվեցին համապատասխան աշխատանքներ մատաղ սերնդին որակյալ կրթությունով ապահովելու ուղղությամբ։

---

[1] Մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Է., Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կիրակնօրյա դպրոցների հիմնումը և նրանց դերը հայապահպանության գործում, «Պատմություն և Մշակույթ», 2020, թ. 1, էջ 216-225։

[2] «Հասկ», 1942, մայիս-հունիս, թ. 5-6, էջ 96։

[3] «Հասկ», 1943, հունվար-փետրվար, թ. 1-2, էջ 192։

[4] **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 236-237։ **Զէպէեան Ղ.**, նշվ. աշխ, էջ 81։

[5] «Արև», 1922, նոյեմբերի 27։

[6] Տե՛ս Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 449, 459։ Կիպրոսի թեմի հովուական կարգը, էջ 199-200։

2.3. Կիպրոսի հայկական համայնքի հասարակական-մշակութային կյանքը

Թեև մեծ չէր կիպրահայ համայնքի թիվը, սակայն այն աչքի էր ընկնում ակտիվ հասարակական, մշակութային կյանքով։ 1920-1930-ականների կիպրահայության համայնքային կյանքի կազմակերպման հետ աշխուժանում է նաև հասարակական կյանքը։ Սկսում են գործել հասարակական կազմակերպություններ, ակումբներ ու միություններ, որոնց հիմնական մասը ստեղծվել էին հենց այդ շրջանում, իսկ որոշներն՝ ավելի վաղ։ Այդ կառույցներն հիմնականում գործում էին մայրաքաղաք Նիկոսիայում և գլխավոր նավահանգիստ Լառնակայում։

Դեռ 1913թ. Նիկոսիայում հաստատվել էր ՀԲԸՄ մասնաճյուղը, որը գործունեությունը վերակազմավորում է 1920-ական թվականներին, իսկ 1929թ. մասնաճյուղ է հիմնադրվում Լառնակայում։ Պետրոս Սարաճյանը 1922թ. ստանձնեց ՀԲԸՄ Կիպրոսի մասնաճյուղի նախագահությունը[1]։ Նիկոսիայում գործում էին՝ «Հայ ակումբ» (1905թ.-ից), «Հայուհեաց» (1916թ.-ից), «Պատանեաց» (1935թ.-ից), «Սանուց-Սանուհեաց» միությունները և ՀՄԸՄ մասնաճյուղը։ Լառնակայում ակտիվ էին «Հայ գրասիրաց», «Հայ ուսանողաց», «Հայ լեգիոնական» միությունները, երկու ընթերցարանները՝ ստեղծված 1925 և 1934 թվականներին, «Հայուհեաց միությունը», որը հսկում էր տեղի կիրակնօրյա դպրոցի նկատմամբ։ Լիմասոլի փոքրիկ համայնքում էլ գործում էր «Տիկնանց միություն»-ը։ 1920-1930-ականներին ազգային կուսակցություններից ակտիվ էր ՀՅԴ, որը Լառնակայում ուներ ենթակոմիտեություն[2]։

Կիպրոսի թեմում նշվում էին ոչ միայն եկեղեցական տոները, այլև Սարաճյան սրբազանի նախաձեռնությամբ հաճախ անդրադարձ էր կատարվում ազգային տոնացույցին։ Պարբե-

---

[1] *Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 141։*

[2] ***Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 239։ **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 114-115, 119։*

բաբար հանդիսավորությամբ նշվում էր Մայիսի 28-ը։ Առաջին հանրապետության անկախության հռչակման օրն առաջին անգամ նշվում է 1920թ., երբ դեռ գոյություն ուներ հանրապետությունը։ Սրբազանը տոնն «աւելի շքեղ եւ փառաւոր պանծացնելու» համար Կիպրոսում գործող ազգային կառույցների, նաև ՀՅԴ ենթակոմիտեության, ներկայացուցիչներից կազմում է հանձնաժողով[1]։

Հետագայում ևս թեմի առաջնորդի նախագահությամբ «համազգային այդ մեծ, փառաւոր տօնակատարութեան» համար կառույցների ներկայացուցիչներից՝ «Հայկական ակումբ», «Աշխատավորական միություն» և այլն կազմվում էր հանձնախումբ «ամենուն համար նուիրական ու սիրելի եղող սոյն տարեդարձն պարտն ու պահանջքին վայել պարտաճանաչութեամբ եւ հանդիսաւորութեամբ տօնելու» համար[2]։

Հետաքրքիր է, որ հետագայում նման միջոցառումների ժամանակ չէր անտեսվում նաև Խորհրդային Հայաստանը։ «Հայաստանի ներկայ կառավարութեան գործունէութեան նկատմամբ գնահատական և համակրական արտայայտութիւնները յարգելի բանախօսներու կողմէն շատ լաւ տպաւորութիւն մը թողեցին բոլոր ներկաներուն վրայ»[3],- գրում է «Արաքսը» 1926թ. իր համարներից մեկում՝ անդրադառնալով Սարաճյան սրբազանի ելույթին Մայիսի 28-ի տոնակատարության ժամանակ, որտեղ մասնավորապես դրվատանքի խոսքեր էին հնչել Խորհրդային Հայաստանի իշխանությունների հասցեին։

Գործող ակումբներն ու հասարակական կառույցները հաճախ կազմակերպում էին հանրային դասախոսություններ ու քննարկումներ՝ նվիրված հայությանն հուզող հարցերին և կարևոր իրադարձություններին։ Նիկոսիայի «Հայ ակումբի» կողմից հաստատված լսարանը կանոնավորապես կազմակերպում

---

[1] *Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 87։*
[2] *Կիպրոսի թեմի հովուական կարգը, էջ 209։*
[3] *«Արաքս», 1926, հունիսի 16։*

էր դասախոսություններ տարբեր թեմաներով։ «Նիկոսիոյ մէջ, ամէն կիրակի տեղի կունենան յաճախ երկու լսարաններ, մին եկեղեցիին ու միւսը ակումբի մէջ։ Վերջնոյս մէջ ոեւէ նիւթի մասին կարելի է խօսիլ, հոն կըլլայ նաեւ քաղաքական լրատուութիւն՝ ամփոփուած տեղեկատուութիւն մը աշխարհի անցուդարձներու մասին»[1], գրում է Անթիլիասի «Հասկը» Նիկոսիայում կազմակերպվող լսարանների վերաբերյալ։

Նման միջոցառումներ կազմակերպում էր նաև եկեղեցին։ Հետաքրքրական է նաև, որ «Հայ ակումբը», փաստորեն գործունեության մեջ ավելի ազատ էր և կարող էր դասախոսություններ և քննարկումներ կազմակերպել ցանկացած թեմայով։ 1937թ. հունվարին կազմակերպված միջոցառումներից մեկն էլ նվիրված էր Սահակ Բ Խապայանի գործունեությանն ու կաթողիկոսության 35-ամյակին[2]։

Կիպրահայերն յուրաքանչյուր տարի հարգանքի տուրք էին մատուցում ցեղասպանության զոհերի հիշատակին, այդ առթիվ մատուցում պատարագ։ 1932թ. ապրիլի 24-ին Նիկոսիայի հայոց առաջնորդարանի դիմաց կանգնեցվում է Նահատակաց կոթողը՝ նվիրված հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին[3]։ Նիկոսիայի Ս. Աստվածածին եկեղեցու բակում էլ թեմի առաջնորդի նախաձեռնությամբ կառուցվում է 5 մետրանոց հուշարձան-կոթող՝ նվիրված Արարայի ճակատամարտին[4]։

Կիպրոսի թեմը անմասն չէր մնում նաև Կիլիկիո կաթողիկոսության նախաձեռնած, ինչպես նաև համահայկական նշանակության տարբեր հանգանակություններին մասնակցելուց։

Այսպես, 1923թ. սեպտեմբերին Ամերիկյան Նպաստամատույց ընկերությունը Ժնևում կայացած իր հերթական նստաշրջանում որոշում է յուրքանչյուչ տարվա դեկտեմբերի առա-

---

[1] «Հասկ», 1938, փետրվար, թ. 2, էջ 32։
[2] «Արև», 1937, մարտի 1։
[3] **Ջէպէեան Ղ.**, նշվ. աշխ, էջ 50, 52։
[4] **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 100։

ջին կիրակին հռչակել «Որբերի կիրակի»։ Միջոցառումը ենթադրում էր, որ այդ օրը պետք է ունևոր ընտանիքները հրաժարվեին կիրակնօրյա ճոխ ընթրիքից և գումարներ հատկացնեին կարիքավոր որբերին[1]։ Այս նախաձեռնությունը լայն արձագանք գտավ։ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը ևս ակտիվորեն ներգարվվեց այս կարևոր բարեգործական ծրագրի իրագործմանը հայության շրջանում։ Սահակ վեհափառը, հետամուտ նշված նախաձեռնությանը, 1924թ. օգոստոսի 24-ին հրապարակած կոնդակով ենթակա թեմերում նույն թվականի դեկտեմբերի 7-ը հռչակում է «Որբերի կիրակի»՝ հորդորելով ակտիվ մասնակցություն ունենալ հանգանակությանը։ Կոնդակն ուղարկվում է նաև Կիպրոսի թեմ, որտեղ ևս կազմակերպվում է համապատասխան հանգանակություն[2]։

Հետագայում՝ 1932թ., «Որբերի կիրակին» Բարեգործականի կողմից փոխարինվում է այլ միջոցառման՝ «Մշակույթի կիրակի» անվամբ, որը նպատակ էր հետապնդում հանգանակված գումարն այսուհետ ուղղորդել մատաղ սերնդի կրթության հարցերին։ Սահմանվում էր նաև «Մշակույթի պաշտպան» կոչումը, որը տրվում էր բացառիկ նվիրատվություն կատարած կամ էլ առնվազն երեք տարի կանոնավորապես նվիրատվություն կատարած անձանց։ Սահակ Բ-ն կոնդակով հորդորում էր ակտիվ մասնակցել և իրենց նպաստը բերել այս կարևոր ձեռնարկին։ «Նետէ՛ք ձեր լման կրթութեան գանձանակին մէջ»,- ասված էր կոնդկում[3]։ Այս մասին Պետրոս Սարաճյանը տեղեկացնում է Կիպրոսի համայնքներին՝ հորդորելով անհրաժեշտ ջանքերն իրականացնել այդ ուղղությամբ[4]։

---

[1] ***Մելքոնյան Էդ.***, *Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Եր., 2005, էջ 142-147։*

[2] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 124, 127-128, 400-402։ «Արաքս», 1924, դեկտեմբեր 16, 1925, հունվար 1։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 229-234։*

[3] *Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 309-310։*

[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 311։*

Հետևելով Սահակ Բ-ի կոնդակներին ու կոչերին՝ Կիպրոսում կազմակերպվում էին տարաբնույթ այլ հանգանակություններ, օրինակ՝ Լիբանանի ազգային Մամըլթեյնի հիվանդանոցի[1], 1932թ. Բեյրութի հայկական «քէմբի»՝ գաղթականի, հրդեհից տուժածների համար[2]։ Կազմակերպվում է նաև հանգանակություն ի նպաստ 1926թ. հոկտեմբերին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժից տուժածների[3]։ 1936-1940թթ. Կիլիկիո կաթողիկոսության ֆինանսական դրության և կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունից պարզ է դառնում, որ Կիպրոսի թեմը, լինելով ամենափոքրաթիվը, Կիլիկիո 5 թեմերից կատարած հանգանակությունների չափով երրորդն էր Հալեպի և Լիբանանի թեմերից հետո[4]։

Կիպրոսում աշխուժանում է հրատարակչական գործունեությունը, բացվում են հայկական տպարաններ, սկսում են տպագրվել հայերեն թերթեր ու ամսագրեր։ Հայերեն առաջին պարբերականը լույս է տեսնում դեռ 1901թ.՝ «Տեղեկագիր» անվանումով։ 1902թ. Ազգային կրթարան-որբանոցի տնօրեն Բակուրանը (Վ.Քյուրքճյան) Նիկոսիայում հիմնադրում է հայկական առաջին տպարանը[5], որը, ինչպես որբանոցը, հիմնականում գործում էր բարերարների տրամադրած միջոցների հաշվին[6]։ Տպարանի հիմնադրման հարցում կարևոր աջակցություն է ցուցաբերում Մխիթարյան միաբանությունը։ Այս տպարանում է 1903թ. հրատարակվել Բակուրանի «Կիպրոս կղզի» արժեքավոր աշխատանքը։ Մի քանի տարի անց տպարանը դադարեցնում է գործունեությունը որբանոցի փակման հետ միասին[7]։

---

[1] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 335։*

[2] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք. Սարաճեանի, էջ 353։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 311-314։*

[3] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 186։*

[4] *«Հասկ», 1940, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 135։*

[5] *«Արմենիա», Մարսել, 1902, հունիսի 25։*

[6] *Ազգային կրթարան-որբանոց ի Կիպրոս, էջ 2, 16։ «Արմենիա», 1902, հունիսի 25։*

[7] ***Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 115-116։*

1921թ. Կիլիկիայի հայաթափումից հետո Մարտիրոս Մոստիչյանը Մերսինից Կիպրոս՝ Լառնակա, է տեղափոխում տպարանը։ Այդտեղ 1924թ. սկսեց հրատարակել «Արաքս» թերթը, որը ցավոք ունեցավ ընդամենը երեք տարվա կյանք։ Մոստիչյանի տպարանը, բացի հայերենից, հնարավորություն ուներ տպագրել նաև հունարեն, անգլերեն և թուրքերեն լեզուներով։ 1923թ. Լառնակայի Ամերիկյան վարժարանի հայ ուսանողներն իրենց ուսուցիչ Մանուել Քասունիի հետ հիմնադրում են «Հայախօս Միութիւնը», որի նպատակը «հայախօսութեան տարածումն էր հայ պատանիներու միջեւ»[1]։ Շուտով նորաբաց միությունը բացեց սեփական գրադարանը, իսկ 1925թ. սկսեց հրատարակել «Լուսարփի» ձեռագիր ամսաթերթը, որը սկզբում պատրաստվում էր մեկ օրինակով և ընթերցվում միության անդամների համար։ Սակայն 1926թ. Քասունին կարողանում է հիմնադրել փոքրիկ տպարան և շուրջ երեք տարի շարունակվում է «Լուսարփիի» տպագրությունը[2]։ Հետագայում՝ 1933թ. Քասունիի տպարանը գնում է «Լուսարփիի» գրաշարներից Մեսի Օհանյանը, ով շարունակում է տպագրական գործը[3]։

1927թ. Մագուտ Մագուտյանը տպարան է հիմնադրում Նիկոսիայում, որը ևս իր տրամադրության տակ ուներ ինչպես հայերեն, այնպես էլ հունարեն ու անգլերեն տառեր։ Հաջորդ տարի վերջինիս նախաձեռնությամբ սկսում է լույս տեսնել «Ովասիս» գրական և գիտական ամսաթերթը։ Ինչպես ամսաթերթը, այնպես էլ տպարանը, երկար կյանք չունեցան[4]։

Նիկոսիայում 1932թ. ուսուցիչ Ս.Կեպենլյանը հիմնադրում է մեկ այլ տպարան, որտեղ հրատարակվում է «Հենարան» շաբաթաթերթը։ Բացի նշված թերթերից, կիպրահայոց կողմից

---

[1] **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 116։
[2] **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 239։
[3] **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 117, 118։
[4] **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Հայ Կիպրոս, էջ 118։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 288։

տպագրվել են ևս երկու խմորատիպ թերթեր։ Մեկը Լառնակայի «Հայ գրասիրաց միության» կողմից տպագրվող «Գրասեր» թերթն էր, որը լույս տեսավ 1923-1925թթ. և 1922-1923թթ. Մոստիչյանի տպարանում ընդամենը մի քանի համար տպագրված Հ.Ասլանյանի «Ազատ կիպրահայն» էր[1]։

Այսպիսով, տեսնում ենք, որ ոչ մեծաթիվ կիպրահայ համայնքը, արագ վերակազմակերպվելով, ակտիվորեն ձեռնամուխ էր եղել հրատարակչական բուռն գործունեության՝ հրատարակելով մի քանի անուն թերթեր և ամսագրեր։ Կիպրահայությունը ապրում էր նաև ակտիվ հասարակական, մշակութային կյանքով։ Դրանում իր դերակատարումն ուներ նաև Կիպրոսի հայոց թեմը։

---

[1] ***Ալպոյաճեան Ա.***, *նշվ. աշխ., էջ 239։ Հայ սփյուռք, էջ 348։*

2.4.Կիպրոսի թեմի ջանքերը որբերի և գաղթականների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ

Կիպրոսի հայոց թեմը Սարաճյան սրբազանի գլխավորությամբ կարևոր աշխատանքներ է իրականացնում նաև Կիպրոսում հաստատված սոցիալապես ծանր վիճակում գտնվող գաղթականների և որբերի խնդրի լուծման ուղղությամբ։

Սարաճյան սրբազանը Կիպրոսում հաստատվելուց հետո փորձում է բանակցել տեղի իշխանությունների հետ Կիլիկիայից շուրջ 1750 հայ որբի Կիպրոս տեղափոխելու համար։ Կղզու անգլիական իշխանությունները համաձայնվում են, պայմանով, որ հայերի կողմից ապահովվի որբերի համար անհրաժեշտ բնակարանները, սնունդն ու հագուստը, պայման էր դրվել նաև, որ որբերը որևէ վարակիչ հիվանդություն չունենան[1]։ Այդ 1750 որբից 300-ը գտնվում էին Մերսինի ամերիկյան որբանոցի հովանու ներքո, 1100-ը՝ Ադանայի որբախնամ ընկերության, 350-ը՝ Մերսինի Բարեգործականի[2]։

Կիպրոսում դժվար էր գտնել համապատասխան մեծության շենքեր այդ թվով որբերին տեղավորելու համար, հատկապես, երբ տեղի իշխանությունները չէին ցանկանում որևէ աջակցություն ցուցաբերել։ Լառնակայում բողոքականները վարձել էին մի շենք իրենց տրամադրության տակ գտնվող որբերին տեղավորելու համար, սակայն անորոշ էր մնացածի հարցը[3]։

ՀԲՄ-ն ևս կարծես սկզբնական շրջանում տարմադրված էր Կիլիկիայի իր որբանոցներում գտնվող որբերի մեծ մասին տեղափոխել Կիպրոս։ Կառույցն անգամ փորձել էր բրիտանական կառավարությունից ստանալ համապատասխան թույլտվություն մինչև 2-3000 որբեր կղզի տեղափոխելու համար[4]։

---

[1] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 70, 72։
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 77, 78, 83։
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 77։
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 81-82։

ՀԲՀՄ կենտրոնական վարչական ժողովի ատենադպիր Վահան Մալեզյանը Զապել Եսայանին, ով Կիլիկիայում որբերի հարցերով Ազգային պատվիրակության պատվիրակն էր, 1920թ. մայիսի 1-ի նամակում վստահեցնում է, որ այդ թվով որբեր Կիպրոս տեղափոխելու հարցը համաձայնեցված է բրիտանական իշխանությունների հետ և Կիպրոսի բարձր կոմիսարը պատրաստություններ է տեսնում այդ ուղղությամբ[1]։ Զ. Եսայանը ևս որպես որբերի գծով պատվիրակ կողմ էր նրանց գոնե մի մասին Կիպրոս տեղափոխելուն[2]՝ Պողոս Նուբարին գրած նամակում կղզին համարելով որբերի համար ապաստարանի լավագույն վայր[3]։ Պետրոս Սարաճյանն անընդհատ նամակագրական կապի մեջ էր ՀԲՀՄ ներկայացուցիչների հետ, քննարկում էր Կիլիկիայից հնարավորինս մեծ թվով հայ որբերի Կիպրոս տեղափոխելու հնարավորություններ։ Նա ՀԲՀՄ պատասխանատուների ցուցումով անգամ համապատասխան շենքեր էր վարձել որբերին տեղավորելու համար։ Սակայն Բարեգործականի հովանու տակ Կիլիկիայի որբանոցներում գտնվող որբերն այդպես էլ Կիպրոս չտեղափոխվեցին։ Նրանց մեծ մասը տեղափոխվեց Սիրիա և Լիբանան[4]։ Եվ միայն հետագայում Մելքոնյան վարժարանի հիմնադրումով որբերին Կիպրոս տեղափոխելու ծրագիրը մասնակիորեն իրագործվեց։

Ընդհանուր առմամբ՝ Կիլիկիայից հայ որբերի Կիպրոս տեղափոխելու գաղափարն իրագործվում է մասամբ։ 1920թ. հունիսին Մերսինից Կիպրոս են տեղափոխվում 640 որբ[5]։ Նրանք հիմնականում ամերիկյան որբանոցների սաներ էին։ Նրանք տեղավորվում են Լիմասոլից ոչ հեռու գտնվող անգլիական զին-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 332, թ. 3։

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 333, թ. 1-10, գ. 331, թ. 1-2,

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 333, թ. 8,

[4] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 123-128։

[5] Զապել Եսայանը Գ.Նորատունկյանին 1921թ. հոկտեմբերին հղած հաշվետվության մեջ նշում է Մերսինից Կիպրոս տեղափոխված 700 որբի մասին։ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 338, թ. 1-ի շրջերես։

վորների համար նախատեսված դատարկ ճամբարում։ Որբերը հանձնվում են Լորդ Մեյըրի անգլիական բարեգործական ֆոնդի խնամքին։ Որբերի ճամբարի ղեկավարումը գտնվում էր հիմնականում հայ բողոքականների ձեռքին՝ հաճնցի Կարապետ Քեշիշյանի գլխավորությամբ[1]։

Տեղի անգլիացի քաղաքապետի նախաձեռնությամբ ստեղծվում է կանանց խնամատարության մարմին, որը պետք է նախաձեռներ հանգանակություններ որբերի կարիքների համար[2]։ Չնայած բողոքականների առարկություններին՝ Պետրոս Սարաճյանը հաճախ էր այցելում ճամբար, տեղում անցկացնում պատարագներ և մկրտություններ[3]։ Անհանգստանալով որբերի հայեցի կրթության և եկեղեցու հովանու ներքո մեծացնելու հարցերով՝ Պետրոս սրբազանը Սահակ կաթողիկոսին հարցնում է. «Արդէօք այս դժբաղդ մանուկներուն հոգեւոր պէտքերու եւ կրթութեան համար բան մը խորհիլ յարմար չէ՞»[4]։ Բնականաբար սրբազանի մտահոգությունը հիմնականում պայմանավորված էր նրանով, որ մանուկները կարող են ընկնել բողոքականության ազդեցության տակ, դրան կարող էր նպաստել այն փաստը, որ ճամբարում ուսուցիչ էր հրավիրվել բողոքական պատվելի Հարություն Մանուշակյանը[5]։

Նշենք սակայն, որ որբերին հովանավորող անգլիական ֆոնդը Սահակ կաթողիկոսին հղած նամակում ընդունում է այդ երեխաների՝ հայոց եկեղեցու դավանանքին պատկանելու հանգամանքը։ Ուստի դեմ չէին, որ հայոց եկեղեցին ստանձնի վերջիններիս հոգևոր դաստիարակության հարցերը։ Միաժամանակ կողմ էին նաև, որ որբանոց այցելեն նաև այլ եկեղեցիների ներկայացուցիչներ[6]։ Այս որբանոցը Կիպրոսում երկար չի

---

[1] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի, էջ 32։*
[2] *Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 92-93։*
[3] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք. Սարաճեանի,էջ 32։*
[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 32։*
[5] *Տե՛ս նույն տեղում։*
[6] *Տե՛ս նույն տեղում, էջ 34-35։*

մնում։ 1921թ. հուլիսին այն հովանավորող կառույցի որոշմամբ տեղափոխվում է Կ.Պոլիս։

Պետրոս սրբազանը, անհանգստանալով որբերի հետագա ճակատագրով և մասնավորապես բողոքականության ազդեցության տակ ընկնելու հեռանկարով, Սահակ կաթողիկոսին գրում է. «Պիտի խնդրէի որ մասնաւորապէս պատրիարքարան[1] հաճէիք գրել, որ քիչ մը աւելի մօտէն ուշադրութիւն դարձնէին այս որբանոցին վրայ, քանզի կատարելապէս բողոքականութեան բոյն մը եղած է»[2]։ Կաթողիկոսը պատասխան նամակում կասկած է հայտնում պատրիարքարանի հսկողության հնարավարության վրա, ուստի և անիմաստ է համար նման նամակի գրելը։ Այս պարագայում Պետրոս սրբազանը, որպես պարտքի կատարում, կաթողիկոսից թույլտվություն է հայցում անձամբ գրել Կ.Պոլսո պատրիարքին[3]։ Նրա ջանքերը ցույց են տալիս, որ անտարբեր չէր որբերի ճակատագրով և հայեցի դաստիարակության հարցերով, անգամ եթե նրանք չէին գտնվում իր հոգևոր տեսչության ներքո։

Կիպրոսում 1920-ականներին գտնվում էին տասնյակ այլ որբեր, որոնց հոգածությունն անմիջապես ստանձնել էր թեմը։ Որբ երեխաները, որբանոց չլինելու պատճառով, հիմնականում բնակվում էին եկեղեցու կողմից վարձակալած բնակարաններում[4] և ուսումն անվճար ստանում էին ազգային ուսումնական հաստատություններում[5]։ Այսինքն, տեղի հոգևոր և ազգային իշխանություններն ուշադրության կենտրոնում էին պահում որբերի ոչ միայն սոցիալական, այլ նաև ազգային կրթության և դաստիարակության հարցերը։

---

[1] Նկատի ունի Կ.Պոլսի հայոց պատրիարքությունը։

[2] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 41, 44։

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 43-45։

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 849, թ. 3։ Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 194։

[5] Կիպրոսի թեմի հովուական կարգը, էջ 202-203։

Հրատապ խնդիր էր նաև Կիպրոսում ապաստանած գաղթականների սոցիալական խնդիրների լուծումը։ Նոր հաստատվող գաղթականները հիմնականում գտնվում էին շատ թշվառ վիճակում։ Պետրոս սրբազանը և ազգային կառույցներն անում էին հնարավորը գաղթականների հոգսը թեթևացնելու ուղղությամբ։

1923թ. Կիպրոսի Թաղական խորհուրդը ստեղծում է Աղքատախնամ մարմին, որին էլ հիմնականում վերապահված էր գաղթականների սոցիալական խնդիրների լուծումը[1]։ Կիպրոսում, ի տարբերություն Սիրիայի և Լիբանանի, գաղթականների ճամբարներ չստեղծվեցին։ Գաղթականները հիմնականում տեղավորվեցին կղզու գլխավոր քաղաքներում՝ Նիկոսիա, Լառնակա, Ֆամագուստա, Լիմասոլ, վարձակալած բնակարաններում։ Աղքատ գաղթականների բնակարանների վարձը վճարում էին Կիպրոսի ազգային իշխանությունները[2]։

Սակայն միշտ չէ, որ տեղական միջոցները բավարարում էին առկա խնդիրների լուծման համար։ Սարաճյան սրբազանը հաճախ էր դժգոհում միջոցների անբավարարությունից. «Շուարած վիճակ մը ունինք գաղթականական հոսանքի հետեւանքով ի Կիպրոս պարզուած թշուառութեան պատճառաւ, միջոցներնիս անձուկ, թշուառութիւնը ծովածաւալ»,- գրում է նա Սահակ կաթողիկոսին 1923 թ.[3]։

Ժամանող գաղթականների մի մասը գտնվում էր ծայրահեղ ծանր վիճակում. «Գրեթէ 800 անձ ունինք աւուր հացի կարօտ, որ ոչ ապաստարան ունին, ոչ զգեստ եւ ոչ ալ հաց»,-գրում է Սարաճյան սրբազանը 1923թ. Եգիպտոսի առաջնորդ Թորգոմ սրբազանին, ինչպես նաև ամերիկահայ մեծահարուստ Պատրիկ Կյուլպենկյանին[4]։ 1923թ. հուլիսին Ազգային պատ-

---

[1] Կիպրոսի թեմի հովուական կարգը, էջ 444։

[2] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 77, 79։

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 81։

[4] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 284։

վիրակությանը ներկայացված Կիպրոսի վիճակագրական տվյալներում Պետրոս սրբազանը նշում է, որ կիպրահայերի 80 տոկոսը գտնվում են նյութապես «կարօտ» վիճակում[1]։

Հետաքրքիր է, որ 1929թ. ՀԲՄ ներկայացուցիչ Վահան Մալեզյանին գրած նամակում Պետրոս սրբազանը աղքատ գաղթականների թիվը նշում է 200[2]։ Փաստորեն, մի մասն արդեն կարողացել էր աշխատանք գտնել և բարելավել սեփական կյանքը, մյուս մասն ուղղակի հեռացել էր կղզուց։ Տեղական իշխանությունները Կիպրոսում հաստատված գաղթականներին որևէ նպաստ չէին տրամադրում և նրանց կարիքների հոգալն ամբողջությամբ ստանձնել էին ազգային մարմինները[3]։

Գաղթականների խնդիրները լուծելու համար անհրաժեշտ միջոցներ հայթայթելու նպատակով Աղքատախնամ մարմինը պարբերաբար կազմակերպում էր հանգանակություններ, որոնցով վճարվում էին աղքատ գաղթականների տան վարձը, նաև վերջիններիս տրամադրվում էր ամսական նպաստ։ Համապատասխան միջոցներ հայթայթելու համար կազմակերպվում էին նաև տարաբնույթ այլ միջոցառումներ։ Օրինակ, այդ նպատակով Պետրոս սրբազանի նախաձեռնությամբ 1926թ. կազմակերպված մի «նուագահանդէս» էլ կյանքի է կոչվում կղզու անգլիացի կառավարչի հովանավորությամբ[4]։

Հաճախ Պետրոս սրբազանը դիմում էր նաև Սահակ Բ-ին նյութական աջակցության խնդրանքով։ Սակայն հայտնի է, որ վերջինս գտնվում էր խիստ ծանր պայմաններում, բացի այդ Սիրիայում և Լիբանանում հաստատված գաղթականներն ավելի ծանր վիճակում էին և կարոտ ավելի մեծ ուշադրության, ինչի մասին Սահակ Բ-ն բազմիցս հիշեցնում է Պետրոս սրբազանին։ Այնուամենայնիվ, երբեմն Սահակ կաթողիկոսը որոշ

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 849, թ. 1։ Կիպրոսի թեմի հովուական կարգը, էջ 202։
[2] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 167, 169։
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 194։
[4] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 198-199։

օգնություն ցուցաբերում էր։ Այսպես, 1922թ. ուղարկելով 1000 թուրքական թղթոսկի՝ կաթողիկոսը սրբազանին հանձնարարում է այն հատկացնել կարոտյալների կարիքների համար «առանց ցեղի ու դաւանանքի խտրութեան»[1]։ Սահակ Բ-ի հատկացրած միջոցները ուղղվում էին նաև կրթության հետ կապված խնդիրները լուծելու համար[2]։ Օրինակ, Նիկոսիայի ազգային վարժարանի նվագախմբի համար Կիլիկիո կաթողիկոսության ջանքերով 1926թ. եվրոպական երկրներից ձեռք են բերվում 17 երաժշտական գործիք[3]։

Սարաճյան սրբազանը պարբերաբար դիմել է տարբեր ազգայինների՝ փորձելով ստանալ համապատասխան միջոցներ։ Այդ հարցով նա հիմնականում դիմում է ՀԲՄ-ին, հաճախ ուղղակի Պողոս Նուբարին և այդ կառույցի այլ ներկայացուցիչներին, Ամերիկայի Հայ տարագիրների նպաստից հանձնաժողովին՝ ի դեմս Վահան Քյուրքճյանի, Հայկական կարմիր խաչին, Փարիզի Ազգօգուտ Հայ տիկնանց միությանը, մի շարք հայրենակցական միություններին, զանազան այլ գործիչների և հոգևորականների՝ մասնավորապես Եգիպտոսի թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին, ամերիկահայ մեծահարուստ Պատրիկ Կյուլպենկյանին, բարերար Կարապետ Մելքոնյանին և ուրիշների։ Նշվածներից շատերը պարբերաբար տարբեր չափերի օգնություն ցուցաբերում էին[4]։ Առանձին դեպքերում փոքր չափերով աջակցություն էին ցուցաբերում նաև հայկական կուսակցությունները[5]։

1923թ. հուլիսին Սարաճյան սրբազանը հերթական անգամ նամակով դիմում է ՀԲՄ նախագահ Պողոս Նուբարին գաղթականներին աջակցելու համար։ ՀԲՄ գործադիր մարմնի պա-

---

[1] *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք. Սարաճեանի, էջ 60։*
[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 90։*
[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 222, 225։*
[4] *Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջեր 147-153,157,196-198, 203, 218-221։*
[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 138-140։*

տասխան նամակով կառույցի պատասխանատուները պատրաստակամություն են հայտնում աջակցել, սակայն ոչ թե ուղղակի նպաստի տրամադրման տեսքով, որով գումարներն արագ կփոշիացվեին, այլ առաջարկում են նախաձեռնել որևէ գործ, որը հնարավորություն կտար գաղթականներին աշխատել սեփական գումարը։ Դրանով տրամադրված նպաստը կօգտագործվեր նպատակային՝ «առանց ծուլությունները քաջալերելու»։ Սարաճյան սրբազանը պատասխան նամակով առաջարկում է Կիպրոսում հիմնել «ոստայնանկութեան»՝ 1000 անգլիական ոսկի ծախսով, կամ «կարպետագործութեան»՝ 700 անգլիական ոսկի ծախսով, գործարաններ, որտեղ կարող էին աշխատել համապատասխանաբար 100 և 130 գաղթականներ։ Սակայն, ցավոք սրտի, Բարեգործականը մերժում է այս առաջարկը գործարանների հիմնադրման համար բավարար միջոցներ չունենալու պատճառաբանությամբ[1]։

Տարիների ընթացքում կատարված ջանքերը տալիս են իրենց արդյունքը։ Կարճ ժամանակ անց կարիքավոր գաղթականները կարողանում են հարմարվել կյանքի նոր պայմաններին, գտնել համապատասխան աշխատանք և վաստակել սեփական ապրուստը։ Դրանում դերակատարությունն է ունենում հայ գաղթականների աշխատասիրությունն ու ճկունությունը։

Կիպրահայ գաղութի աճող բարեկեցության մասին է հավաստում Լառնակայի «Արաքսը». «Կիպրահայ գաղութին համար արձանագրելի ամէնա գոհացուցիչ բան մը, որ կայ այն ալ նիւթական-տնտեսական կացութիւնն է, որ օրէ օր կը զօրանայ»[2]։ Երկու տարի անց թերթը փաստում է. «Թէպէտ մեծապէս նեղւողները պակաս չեն, բայց մեծամասնութիւնը տնտեսապէս իրենց նախապատերազմեան վիճակին հասած

---

[1] Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն, էջ 174, 181, 185-186։
[2] «Արաքս», 1925, մայիսի 16։

էջ»[1]։ Սա ցույց է տալիս, որ աստիճանաբար կայունանում և բարելավվում էր Կիպրոսում հաստատված գաղթականների սոցիալ-տնտեսական կացությունը։ Եվ պատահական չէ, որ 1928թ. Կիպրոսի անգլիացի կառավարիչ Ռոնալդ Սթորսը Սահակ Բ-ին հավաստիացնում էր, որ կիպրաբնակ հայերը տեղի իշխանությունների համար «ոեւէ բեռ մը չեն» և ընդհակառակը վերջիններս Կիպրոսի «թէ՛ օգտակար եւ թէ՛ պատուաւոր անդամներն են»[2]։

Այսպիսով, տեսնում ենք, որ Կիպրոսի հայոց թեմը կարևոր աշխատանք է իրականացնում կղզում հաստատված որբերի և անապահով գաղթականության սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ։ Իրականացված ջանքերի արդյունքում կիպրահայ գաղութը տարիներ անց դառնում է Սփյուռքի համեմատաբար բարեկեցիկ համայնքներից մեկը։

---

[1] «Արաքս», 1927, սեպտեմբեր-դեկտեմբեր, թ. 68։

[2] Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի և Պետրոս արք.Սարաճեանի,էջ 408։

ԳԼՈՒԽ 3
ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԱՃՅԱՆԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ (1936-1940թթ.)

3.1. Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի ձեռնարկները կաթողիկոսական փոխանորդության շրջանում (1936-1940թթ.)

1936թ. մահանում է Կիլիկիո աթոռակից կաթողիկոս Բաբկեն արքեպիսկոպոս Կյուլեսերյանը[1]: Նա պետք է Սահակ Բ-ին հաջորդեր Կիլիկիո կաթողիկոսական աթոռին: Տարագրվելուց հետո հերթական անգամ ծերունազարդ Սահակ վեհափառը կանգնեց հաջորդի ընտրության դժվարին հարցի առջև: Հաջորդ գահակալի ընտրությունը նոր վերակազմված և բազում խնդիրների առջև կանգնած կաթողիկոսության համար միայն զուտ հաջորդ կաթողիկոսի ընտրության հարց չէր, այլ կաթողիկոսական աթոռը պահպանելու խնդիր, քանզի նոր իրավիճակում դա լինելու էր առաջին կաթողիկոսական ընտրությունը: Այդ առումով թե՛ Սահակ վեհափառը և թե՛ բարձրագույն հոգևոր դասը ամենայն լրջությամբ և պատասխանատվությամբ էին մոտենում խնդրին:

Սահակ վեհափառի նախաձեռնությամբ Անթիլիասում 1936թ. հուլիսի 17-21-ը հրավիրվում է եպիսկոպոսաց ժողով ստեղծված իրավիճակը քննարկելու համար[2]: Կաթողիկոսը, թեմական առաջնորդների հետ «համախորհուրդ»[3], հուլիսի 20-ին կոնդակով կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ է նշանակում Կիպրոսի թեմի առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանին. «...որպէսզի մեզի հետ խորհրդակցութեամբ վարէ Կաթողիկոսարանիս վերաբերեալ ներքին և արտաքին

---

[1] ***Բաբգէն Ա. Կիւլէսէրեան***, *Պատմութիւն, էջ 1078-1087:*
[2] ***Եղիաեան Բ.***, *նշվ. աշխ., էջ 460:*
[3] *«Հասկ», 1936, հունիս-օգոստոս, թ. 6-8, էջ 105:*

բոլոր գործերը»[1]։ Վերջինս իր ցանկության համաձայն միաժամանակ շարունակելու էր ղեկավարել Կիպրոսի հայոց թեմը[2]։ Սարաճյան սրբազանը Կիպրոսի առաջնորդությունը պահպանեց մինչև 1940թ.՝ Կիլիկիո կաթողիկոս ընտրվելը։ Ընտրության հարցում հաշվի էր առնվել Պետրոս Սարաճյանի երկարամյա բազմավաստակ փորձն ու կազմակերպական ունակությունները, որոնք խիստ անհրաժեշտ էին կաթողիկոսության վերակազմության գործընթացի համար։ «Սահակ կաթողիկոսի անվերապահ վստահությունը վայելող ամենէն հեղինակաւոր անձն էր, ամէն տեղ ժողովրդականութիւն շահած ու շինարարութիւններով ազգային վերակազմութեան նպաստած»,- ահա այսպես է հիմնավորում Սարաճյան սրբազանի ընտրությունը Բյուզանդ Եղիայանը[3]։ Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը 1937թ. մայիսին Ամենյան հայոց կաթողիկոս Խորեն Ա-ին գրած նամակում, անդրադառնալով Սարաճյանի գործունեությանը, գրում է. «Պետրոս բաւական լաւ կը վարէ գործը, թէեւ զօրաւոր չէ մտաւոր պատրաստութեամբ, բայց ուղիղ մարդ կերեւի, միայն թէ վատառողջ է»[4]։

Հաստատվելով կաթողիկոսական փոխանորդ՝ Պետրոս Սարաճյանը տեղափոխվում է Անթիլիաս և արագ ձեռնամուխ լինում կաթողիկոսության առջև կուտակված խնդիրների լուծմանը։ Նա նախ և առաջ, ինչպես որ ընդունված էր, հանդիպումներ է ունենում Լիբանանի բարձրագույն իշխանության և ֆրանսիական կոմիսարության ներկայացուցիչների հետ։ Վերջինիս նշանակման մասին Սահակ կաթողիկոսը պաշտոնագրերով տեղեկացնում է նաև Սիրիայի նախագահին, Կիպրոսի

---

[1] Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս **Սահակ Բի** թիվ 116 կոնդակ, 20 հուլիսի 1936, Անթիլիաս, Հայաստանի ազգային գրադարան, գրանցահամար 25-ԱՀ, պատճեն, էջ 1։

[2] Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, էջ 409։ **Եղիաեան Բ.**, նշվ. աշխ., էջ 461։

[3] **Եղիաեան Բ.**, նշվ. աշխ., էջ 462։

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3849, թ. 3։

կառավարչին, օտարերկրյա հյուպատոսներին և Սիրիայի ու Լիբանանի մյուս կրոնական առաջնորդներին[1]։

Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի փոխանորդության շրջանում Կիլիկիո աթոռի վերաշինության և Անթիլիասի կաթողիկոսարանի կառուցապատման ուղղությամբ կատարվում են բազմաթիվ կարևոր ձեռնարկներ։ Այդ շրջանում, պայմանավորված Սահակ վեհափառի պատկառելի տարիքով, կաթողիկոսարանի հիմնական աշխատանքներն, ըստ էության, նախաձեռնվում և կազմակերվում էին կաթողիկոսական փոխանորդի կողմից։

Պետրոս Սարաճյանի փոխանորդության շրջանում էր, որ վերջնականապես լուծվեց Անթիլիասի կալվածքների գնման հարցը։ Հայտնի է, որ 1930թ. ապրիլի 7-ին Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի և Կիլիկիո կաթողիկոսության միջև կնքված պայմանագրի[2] համաձայն Բեյրութից ոչ հեռու գտնվող Անթիլիասում տեղակայված նախկին որբանոցի շենքերը անհատույց հինգ տարի ժամանակով տրվել էին Կիլիկիո կաթողիկոսությանը, որն էլ պետք է իր աթոռը հաստատեր այնտեղ՝ միաժամանակ պարտավորվելով տեղում հիմնադրել նոր ուսումնական հաստատություն[3]։ Հինգ տարի անց, նախատեսված ժամկետն ավարտվելուց հետո, Նպաստամատույց կոմիտեն վաճառքի էր հանել իրեն պատկանող կալվածքները։ Կիլիկիո կաթողիկոսությունը դիտարկվում էր նախընտրելի գնորդ։ Սակայն, վերջինս չուներ բավարար միջոցներ նախատեսված գումարը վճարելու համար։ Վտանգված էր Կիլիկիո կաթողիկոսության նստավայր ունենալու հարցը, ուստի կաթողիկոսությունը փորձեց նախատեսված գումարը հայթայթել հանգանակության միջոցով։ Այդ նպատակով 1936թ. Անթիլիասում տեղի

---

[1] *«Հասկ», 1936, հունիս-օգոստոս, թ. 6-8, էջ 108։*

[2] ***Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 332։*

[3] *Մանրամասն տե՛ս **Հովհաննիսյան Է.**, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքի հիմնումը և նրա դերը Սիրիա-Լիբանանի հայկական համայնքների կրթական կյանքում, «ՎԷՄ», Ե., 2020, թ. 2, էջ 217-234։*

ունեցած մյուռոնօրհնեքի արարողության ժամանակ հայտարարվում է հանգնակություն սկսելու մասին։ Սակայն, գործընթացը շատ դանդաղ էր ընթանում, իսկ կալվածքները վաճառող կողմը չէր կարող երկար սպասել։

Խնդիրը լուծվում է խոշոր նվիրատվության շնորհիվ։ 1937թ. մայիսին կալվածքների գնման համար Կահիրեում բնակվող պոլսեցի Տեր և Տիկին Սիմոն և Մաթիլդ Գայըգճյանները «ինքնայօժար, ինքնամատոյց ժէսթով, առանց թելադրութեան, առանց խնդրանքի և առանց միջնորդի»[1] Կիլիկիո կաթողիկոսությանն են նվիրաբերում 4000 անգլիական ոսկի[2]։

Սիմոն Գայըգճյանը Երուսաղեմի հայոց պատրիարքության միաբան Մաթևոս եպիսկոպոս Գայըգճյանի եղբայրն էր[3]։ Այս նվիրատվության շնորհիվ 1937թ. հոկտեմբերին Կիլիկիո կաթողիկոսությունը վերջնականապես գնում է Անթիլիասի կալվածքները[4]։ Սա կարևոր քայլ էր կաթողիկոսության վերակազմության և Անթիլիասում վերջնական հաստատման համար։ Ավելի քան 700 տարի պատմական Սսի կաթողիկոսական աթոռանիստից հետո Անթիլիասը դարձավ Կիլիկիո կաթողիկոսների հաջորդ նստավայրը։

Անթիլիասի կալվածքները գնելուց հետո կաթողիկոսական փոխանորդ Պետրոս Սարաճյանը այդ մասին տեղյակ է պահում Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա-ին[5]։ Վերջինս շնորհավորական նամակ է հղում Սահակ Բ-ին[6], նաև Պետրոս Սարաճյանին։ Խորեն Ա-ն 1937թ. սեպտեմբերին Պետրոս սրբազանին հղած նամակում ուրախություն է հայտնում, որ տարագիր Կիլիկիո աթոռն այսուհետ «հաստատութիւն պիտի գտնէ եւ ներքնապէս եւ արտաքնապէս զօրանալու ուղին պիտի բռնե»,

---

[1] «Հասկ», 1937, մայիս, թ. 5, էջ 60։
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 53։
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3849, թ. 1։
[4] **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ., էջ 467-478։
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4490, թ. 7։
[6] Տե՛ս նույն տեղում, թ. 4-6։

միաժամանակ հուսալով, որ այդ ձեռնարկը կաթողիկոսությանը կազատի որոշ հոգսերից և հնարավորություն կտա «կեդրոնացնելու ուշադրությունը դպրոցի, գրականության եւ եկեղեցական կեանքի զօրացման եւ զարգացման վրայ, որոնք այնքան կարեւոր են տեղւոյդ հայ հատուածի ազգային ինքնութեան պահպանման եւ զարգացման համար»[1]։ Վերջինս 1937թ. օգոստոսի 30-ին օրհնության կոնդակ է հղում բարեբարներ Սիմեոն և Մաթիլդ Գայրգճյաններին նվիրատվության համար[2]։ Այս ամենը ցույց է տալիս, որ Մայր Աթոռն ի սրտե ուրախ էր Կիլիկիո Աթոռի վերակազմության և հաջողությունների համար։

Անթիլիասի կալվածքները գնելուց հետո մեկնարկում է կաթողիկոսարանի կառուցապատման գործընթացը, որը նպատակ ուներ նախկին որբանոցի տարածքը վերածել Կիլիկիո աթոռին վայել նստավայրի։ Այս աշխատանքները հիմնականում նախաձեռնում և համակարգում է Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը։ Անհրաժեշտ միջոցները հիմնականում գոյանում էին հանգանակություններից և առանձին բարերարների նվիրատվություններից։ Շինարարական աշխատանքները համակարգելու նպատակով Պետրոս Սարաճյանի ատենապետությամբ ստեղծվում է «Շինութեանց Յանձնախումբ», որտեղ, բացի հոգևորականներից, ընդգրկվում են նաև ճարտարապետ Մարտիրոս Ալթունյանը, ով Լիբանանի հանրային շինարարության ճարտարապետն էր, ճարտարագետ Խոսրով Երամյանը, ով Բեյրութի Ամերիկյան համալսարանի երկրաչափության դասախոս էր, և ուրիշներ[3]։

1909թ. Ադանայի ջարդերից հետո եգիպտահայ ծխախոտի վաճառական Մաթևոս Խերյանը գումար էր կտակել Կիլիկիո կաթողիկոսությանը, որպեսզի կառուցվեր երկրագործական վար-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4490, թ. 2։
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 8։
[3] **Եղիազարյան Բ.**, նշվ. աշխ., էջ 507։

ժարան[1]։ Սակայն, համաշխարհային պատերազմը և դրան հաջորդած իրադարձությունները թույլ չէին տվել իրագործել նրա ցանկությունը։ Անթիլիասում հաստատվելուց հետո աթոռակից կաթողիկոս Բաբկեն Կյուլեսերյանը համոզում է Սահակ վեհափառին Խերյան կտակից կաթողիկոսությանը բաժին հասած միջոցներով Բեյրութի հին հայկական գերեզմանոցի տարածքում կառուցել եկամտաբեր կալվածք։ Մի շարք կազմակերպական աշխատանքներից հետո շինարարական աշխատանքները մեկնարկել էին դեռ 1935թ.։ Կառույցի ճարտարապետն էր Տիգրան Խուպեսերյանը, ում նախագծով հետագայում կառուցվում է նաև Բեյրութի Ս. Նշան Մայր տաճարը[2]։

1936թ., երբ մահացավ Բաբկեն Կյուլեսերյանը, շինության կառուցումը չէր ավարտվել, սակայն նախատեսված միջոցները սպառվել էին։ Նորանշանակ կաթողիկոսական փոխանորդ Պետրոս Սարաճյանը ձեռնամուխ եղավ այդ կարևոր շինությունը վերջնական ավարտին հասցնելու գործին՝ «հարկ եղած դրամը փոխ առնելով պանքայէն ու շինութեան ծախսը հասցնելով Խերեան կտակին գրեթէ կրկնապատիկ գումարին»[3]։ Շինարարական աշխատանքներն ավարտվում են 1938թ., և Խերյան կալվածքը դառնում է սուղ միջոցներ ունեցող Կիլիկիո կաթողիկոսության համար կայուն եկամուտ ապահովող առաջին կալվածքը[4]։ Մինչ այդ Կիլիկիո կաթողիկոսությունը որպես կայուն եկեմուտ ուներ միայն Մելքոնյան կտակով տրվող տարեկան 1000 սթերլինգ գումարը և 1937թ. Գյուլապի Գյուլբենկյանի հիմնադրամից տրամադրվող 1500 դոլարը[5]։

Անթիլիասում հաստատվելուց հետո բազմիցս քննարկվում էր Մայր եկեղեցու կառուցման հարցը։ Սսի Ս. Սոֆիայի հոյա-

---

[1] Մաթևոս Խերյանի կտակի և դրա գործադրման մասին մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, գ.1439 թ.1-59, գ. 1441, թ. 1-26։ Կիլիկիո կաթողիկոսությանը հատկացվող գումարին է վերաբերում սույն կտակի 7-րդ հոդվածը։

[2] «Հասկ», 1935, հունվար, թ. 1։

[3] **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ., էջ 466։

[4] Տե՛ս նույն տեղում։

[5] «Հասկ», 1940, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 121։

կերտ տաճարը կորցնելուց հետո կաթողիկոսարանին անհրաժեշտ էր ունենալ վայելուչ եկեղեցի, քանզի Անթիլիասը ոչ միայն զուտ կաթողիկոսական նստավայր էր, այլ այն աստիճանաբար վերածվում էր նաև կարևոր հոգևոր-կրոնական կենտրոնի Մերձավոր Արևելքում, հատկապես Սիրիայում և Լիբանանում, հաստատված գաղթական հայության համար։

Նոր եկեղեցու կառուցման հարցը մի շարք պատճառներով քանիցս հետաձգվել էր։ 1937թ. հոկտեմբերի 27-ին, երբ Սահակ կաթողիկոսը Անթիլիասի կալվածքների փոխանցման փաստաթղթերը ստորագրելուց հետո շնորհավորանքներ էր ընդունում ներկաներից, հայտնում է, որ այս ամենից հետո ևս մեկ փափագ ունի. «Դպրեւանքը Կաթողիկոսութեան ջիղն է, իսկ Եկեղեցին Կաթողիկոսութեան ոգին, որ կը պակսի, ուստի փափաքս է Կաթողիկոսարանիս մէջ Մայր Տաճարի կառուցումը տեսնել և ապա մեռնել»[1],- հայտարարում է կաթողիկոսը։ Կաթողիկոսական փոխանորդ Սարաճյան սրբազանը անմիջապես անցնում է վեհափառի փափագի իրագործման։ Եվ հիրավի մեկ-երկու տարի անց կաթողիկոսի փափագը իրագործվում է։ Համառ ջանքերի և աննկուն աշխատանքի շնորհիվ Անթիլիասի կաթողիկոսարանի տարածքում վեր է խոյանում ոչ միայն Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարը, այլ նաև՝ Վեհարանի և Դպրեվանքի նոր շենքերը։

1938թ. ապրիլի 4-ին եկեղեցական ժողովը հավանություն է տալիս Մայր Տաճարի կառուցման գաղափարին և, ինչպես միշտ, որոշվում է իրականացնել հանգանակության միջոցով[2]։ Սարաճյանի Եգիպտոսից վերադառնալուց հետո[3] նոր թափով է մեկնարկում Մայր տաճարի կառուցման աշխատանքները։

---

[1] «Հասկ», 1938, հունվար, թ. 1, էջ 3։

[2] Տե՛ս **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ., էջ 510։

[3] Պետրոս Սարաճյանը այցելել էր բարերար Գայրգճյանին։ Այդ ընթացքում նա հանկարծամահ է լինում, իսկ Պետրոս սրբազանն Ալեքսանդրիայում կոտրում է ձեռքը, և մինչև 1938թ. ապրիլի վերջ ստիպված մնում Եգիպտոսում, որտեղ նախաձեռնում է հանգանակություն ի նպաստ Անթիլիասի Մայր տաճարի։ տե՛ս ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3855, թ.8։ «Հասկ», 1938, թ. 4, էջ 62։

1938թ. մայիսի 2-ին Պետրոս սրբազանի գլխավորությամբ Անթիլիասի կաթողիկոսարանում հերթական եպիսկոպոսական ժողովը քննում է Մայր Տաճարի կառուցման ընթացիկ հարցերը և վերջինիս գլխավորությամբ ընտրվում է շինարարության հանձնաժողով[1]։

Անթիլիասի կալվածքները գնելուց հետո սկսված հանգանակությունը չէր դադարեցվել, ուղղակի փոխվել էր նպատակը, այն ուղղվելու էր Ս.Լուսավորիչ եկեղեցու կառուցմանը։ Որոշվում է նոր թափ տալ հանգանակությանը։ Նվիրատուների անունները և նվիրված գումարի չափը պարբերաբար տպագրվում էին կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկի» էջերում[2]։ Հետաքրքիր է, որ 1938թ. սկսած՝ մինչ Մայր եկեղեցու կառուցման ավարտը, «Հասկ»-ը լույս էր տեսնում շապիկին ունենալով նոր եկեղեցու պատկերը[3]։ Սա նպատակ ուներ առաջացնել ոգևորություն և խրախուսել հանգանակությունը։

Բեյրութի քաղաքապետարանի հայազգի ճարտարապետ Մարտիրոս Ալթունյանը պատրաստում է եկեղեցու հատակագիծը, իսկ շինարարության ճարտարագետն էր Խոսրով Երամյանը[4]։ Նոր եկեղեցին պետք է կառուցվեր նախկին փայտե մեծ տաղավար եկեղեցու տեղում, ունենալու էր 35-37 մ բարձրություն, 30 մ երկարություն և 20 մ լայնություն։ Եկեղեցու կառուցման համար ընտրվել էր «...ընտիր՝ դեղնորակ աւազուտ փայլուն հատիկներով քարի տեսակ մը» ունեցող քարհանքը, որից ստացված քարերով կառուցվել էին նաև Լիբանանի պառլամենտի և թանգարանի շենքերը[5]։

1938թ. գարնանը մեկնարկեց նախնական շինարարական աշխատանքը։ 1938թ. հուլիսի 2-ին Ս. Լուսավորչի Նշխարաց գյուտի տոնին տեղի է ունենում եկեղեցու հիմնարկեքը, որի

---

[1] «Հասկ», 1938, հունիս, թ. 6, էջ 91։
[2] «Հասկ», 1937, նոյեմբեր, թ. 11, էջ 145-147, 1938, հունվար, թ. 1, էջ 1, հունիս, թ. 6, էջ 95-96, հուլիս-օգոստոս, թ. 7-8, էջ 123-124, թ. 11, էջ 149։
[3] «Հասկ», 1938, հունվար, թ. 1, էջ 3։
[4] «Հասկ», 1938, հունիս, թ. 6, էջ 91։
[5] «Հասկ», 1938, հուլիս-օգոստոս, թ. 7-8, էջ 122։

ընթացքում ապագա խորանի մոտ գետնի մեջ զետեղվում է շիշ, որի մեջ տեղադրվում է տպագիր արձանագրություն եկեղեցու շինարարության մասին և մետաղադրամներ[1]։

Թեև Անթիլիասի Մայր տաճարի համար ընթանում էր հանգանակություն, սակայն հավաքված գումարը բավարար չէր։ Եկեղեցու կառուցումը ավարտին հասցնելու համար անհրաժեշտ էր ավելի քանի 2000 անգլիական ոսկի[2]։

Շուտով՝ 1938թ. մարտի վերջին մեծահարուստներից մեկը՝ Մանչեսթրում բնակվող Լևոն Ճամուզյանի միջոցով Սահակ կաթողիկոսին ցանկություն է հայտնում «տեղեկութիւն առնելու Անթիլիասի մէջ շինուելիք շէնքերու ծրագրի մասին»[3]։ Սկսվում է նամակագրություն անծանոթի և Անթիլիասի միջև։ Անծանոթ բարերարի և իր միջնորդի շփումներն Անթիլիասի հետ համակարգում և ուղղորդում էր դեռևս Եգիպտոսում գտնվող Պետրոս սրբազանը[4]։ Նա հայտնում է բարերարին, որ այդ պահին Անթիլիասի կաթողիկոսարանը 3 կարևոր շենքերի կառուցման կարիք ունի. 1.«հայրապետանոցի վայել Եկեղեցի մը», որի կառուցումը կարժենար 2000 անգլիական ոսկի, 2.«ընծայարան մը» մոտ 1000 անգլիական ոսկի շինարարական ծախսով,3.«Կաթողիկոսական շուքին և անուան համապատասխան վեհարան», որի կառուցումն ըստ ճարտարապետական հաշվարկների, կարժենար 800 անգլիական ոսկի[5]։ Նամակագրությունից և անհրաժեշտ տեղեկատվությունն ստանալուց հետո, բարերարը որոշում է ամբողջությամբ ստանձնել միայն Անթիլիասի Մայր տաճարի կառուցման ծախսը՝ խոստանալով մասմաս այդ նպատակով տրամադրել 2300 անգլիական ոսկի[6]։ Կիլիկիո կաթողիկոսությունը ցնծության մեջ էր։ Անթիլիասի կալվածքների գնումից հետո երկրորդ դեպքն էր, երբ անակն-

---

[1] «Հասկ», 1938, հուլիս-օգոստոս, թ. 7-8, էջ 122։
[2] «Հասկ», 1938, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 127։
[3] Նույն տեղում, էջ 126։
[4] Տե՛ս **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ., էջ 512։
[5] «Հասկ», 1938, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 127։
[6] **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ., էջ 513։

կալ հայտնվում է բարերար, ով ամբողջությամբ տրամադրում է անհրաժեշտ գումարը։ Արդեն հունիսին Անթիլիաս է ուղարկում խոստացված գումարի առաջին մասը՝ 500 անգլիական ոսկի։ Անծանոթ բարերարը նամակներում «փափկօրէն փափաք կը յայտնէր», որ տրամադրած գումարն օգտագործվեր միմիայն եկեղեցու շինության համար։ Անթիլիասի ֆոնդում հավաքված գումարը կարող էր հատկացվել դպրեվանքի և վեհարանի կառուցման համար։ Անթիլիասը պարբերաբար բարերարին իրազեկում էր կատարված աշխատանքի մասին։ Ամեն երկու ամիս մեկ նրան էր ուղարկվում «մանրամասն հաշուեցոյց Ս. Լուսաւորչի եկեղեցւոյ շինութեան ծախուց և լուսանկար՝ կատարուած աշխատանքը ներկայացնող»[1]։

Մայր Տաճարի բարերարը, որը մինչև վերջ էլ չբացահայտեց անունը, Անթիլիաս փոխանցեց 2500 անգլիական ոսկի, որից 2300 տաճարի կառուցման, 200-ը՝ կահավորման համար[2]։ Ի պատասխան Սահակ կաթողիկոսի հարցմանն անծանոթ բարերարի անունը Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու Ավագ դռան վրա արձանագրության մեջ նշելու վերաբերյալ, նա ցանկանում է Մայր Տաճարի փոքրիկ խորաններից մեկն անվանակոչել Ս.Սարգսի անունով։ Նրա փափագին համապատասխան տաճարի հարավային կամարի փոքրիկ սեղանը անվանակոչվում է Ս.Սարգսի անունով[3]։ Կարծում էին, որ Սարգիսը բարերարի հոր անունն է և սխալմամբ ենթադրում, որ բարերարը կարող է լինել Գալուստ Գյուլբենկյանը[4]։

1940թ. փետրվարի վերջին Անթիլիասի Մայր տաճարի կառուցման աշխատանքներն ավարտվում են[5]։ Ներքին հարդարանքներից հետո մարտի 10-ին՝ Անթիլիասի Ուխտի օրը, տեղի է ունենում Ս. Լուսավորիչ Մայր տաճարի[6] օծման արարողու-

---

[1] «Հասկ», 1938, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 128։
[2] «Հասկ», 1943, հուլիս-հոկտեմբեր, թ. 7-10, էջ 260։
[3] «Հասկ», 1943, թ. 7-10, էջ 261։ **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ., էջ 514։
[4] Գ. Գյուլբենկյանը 1922թ. Լոնդոնում կառուցել էր Ս. Սարգիս եկեղեցին։
[5] «Հասկ», 1940, մարտ, թ. 3, էջ 48։
[6] Մայր տաճարի նկարագրությունը տե՛ս «Հասկ», 1940, մայիս, թ.5, էջ 73-78։

թյունը Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի կողմից։ Այդ օրը վերջին պատարագն է մատուցվում[1] 1930թ. Անթիլիասում կառուցված առաջին Ս. Թարգմանչաց մատուռի մեջ, որն այսուհետև վերածվելու էր տպարանի[2]։

Մայր Տաճարի բացումից միայն երեք տարի անց՝ 1943թ. գարնանն է պարզ դառնում, որ շինարարության հովանավորը պոլսահայ վաճառական Սարգիս Քընաճյանն էր։ Վերջինիս մահվանից հետո հայտնի դարձած այդ կարևոր լուրը Անթիլիաս է հայտնում Կ.Պոլսո պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Նարոյանը[3]։ Մայր տաճարի բարերարի անունը հայտնի դառնալուց հետո ավագ դռան ճակատի այդ նպատակով տեղադրված մարմարե քարի վրա փորագրվում է համապատասխան արձանագրություն Սարգիս Քընաճյանի կողմից տաճարի կառուցումը հովանավորելու վերաբերյալ։ Անծանոթ բարերարի հայտնի դարձած անվան արձանագրումով էլ ամբողջանում է Անթիլիասի Մայր տաճարի Ավագ դռան հիշատակարանը և դրանով դրվում եկեղեցու կառուցման վերջակետը։ Տարիներ անց բարերարի և կնոջ աճյունները տեղափոխվում են Անթիլիաս և ամփոփվում կաթողիկոսարանի տարածքում կառուցված դամբարանում[4]։

1938թ. Անթիլիասի Մայր տաճարի կառուցմանը զուգահեռ մեկնարկել էր դպրեվանքի և վեհարանի նոր շենքերի կառուցման աշխատանքը[5]։ Դպրեվանքի նոր եռահարկ շենքի ճարտարապետն էր Կարո Պալյանը, ով ժամանակին նախագծել էր նաև Կիպրոսի Մելքոնյան վարժարանի շենքը[6]։ Արդեն 1939թ. մարտին դպրեվանքի նոր շենքը պատրաստ էր շահագործման համար։ Դպրեվանքի նախկին շենքը հատկացվում է մանկա-

---

[1] «Սիոն», Երուսաղեմ, 1931, հունվար, թ. 1, էջ 28։
[2] «Հասկ», 1940, մայիս, թ. 5, էջ 61։
[3] «Հասկ», 1943, մայիս-հունիս, էջ 237, հուլիս-հոկտեմբեր, էջ 258-259։
[4] **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ., էջ 517։
[5] **Վարժապետեան Ս.**, Հայերը Լիբանանի մէջ,հտ.Բ., Պէյրութ, 1981, էջ 276-77։
[6] **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ., էջ 507։

պարտեզ-նախակրթարանին։ 1938թ. դեկտեմբերի սկզբին ավարտվել էր նաև վեհարանի նոր շենքի կառուցապատումը[1]։ Այն կառուցվել էր դպրեվանքի սանների համար նախկինում ննջասենյակ ծառայած շենքի վերակառուցման արդյունքում, որի վրա կառուցվել էր նաև երկրորդ հարկ։

Կաթողիկոսարանի տարածքում կատարվում են նաև մի շարք այլ նորոգություններ և բարեկարգման աշխատանքներ[2]։ Նախկին հյուրասրահը վերածվում է հանդիսասրահի, որտեղ զնանազան միջոցառումների հետ կազմակերպվում էին նաև դպրեվանքի ուսանողների ավարտական հանդեսները։

Շուտով սկսվում է նաև ցեղասպանության զոհերի հիշատակի հուշարձան-հանգստարանի կառուցման աշխատանքը։ Հուշարձանի կառուցման միտքը Բյուզանդ Եղիայանինն էր, որին սիրով համաձայնվում է Պետրոս Սարաճյանը։ Այն կառուցվելու էր Մայր տաճարի նմանությամբ, ունենալու էր 9մ բարձրություն և տեղակայված էր լինելու նորակառույց տաճարի աջ կողմում։ Հուշարձանի նախագծի հեղինակն էր ճարտարապետ Մարտիրոս Ալթունյանը[3]։ Այդտեղ զետեղվելու էին հայ նահատակների ոսկորներն ու նշխարները, որոնք հավաքվել էին Դեր-Զորից և այլ վայրերից։

Հայ նահատակների ոսկորների հավաքման գործը Կիլիկիո աթոռի և Սիրիայի ներքին գործերի և առողջապահության նախարարության թույլտվությամբ ստանձնում է հաճնցի նախկին զինվորական Հարություն Հովակիմյանը։ Նրա որոնումների արդյունքում հայտնաբերված մասնունքները զետեղվում են չորս մեծ արկղերի մեջ և տեղափոխվում Անթիլիաս[4]։

Ինքնատիպ հուշարձան-մատուռը պետք է դառնար ուխտատեղի ցեղասպանության նահատակների հարազատների և վերապրածների համար։ «Նահատակաց Յիշատակարանի կա-

---

[1] «Հասկ», 1938, դեկտեմբեր, թ. 12, էջ 177։
[2] «Հասկ», 1938, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 146։
[3] **Եղիայան Բ.**, նշվ. աշխ., էջ 518։
[4] «Հասկ», 1939, հունվար, թ. 1, էջ 12։

ռուցման գաղափարը Սփիւռքի հայութեան կողմէ մեծ համակրանքով ողջունուեցաւ»[1],- գրում է պաշտոնաթերթ «Հասկը»։ Կիպրոսաբնակ Վահրամ Յուիյուճյանը հայտնում է Սարաճյանին, որ պատրաստ է ամբողջությամբ ստանձնել հուշարձանի կառուցման անհրաժեշտ ծախսերը, որը կազմում էր 150 անգլիական ոսկի[2]։ Սակայն հետագայում պահանջվեցին ավելի շատ միջոցներ։ Քանի որ հուշարձան-մատուռի կառուցման համար կազմակերպվել էր նաև հանգանակություն, հետագայում անձանագրվեց, որ այն կառուցվել է համայն հայության նվիրատվությամբ[3]։

1938թ. դեկտեմբերի 17-ին, երբ դեռ ընթանում էր Մայր Տաճարի շինարարությունը, տեղի է ունենում Նահատակաց հուշարձան-մատուռի հիմնարկեքը, 1939թ. մարտի 31-ին՝ օծումը և այն անվանակոչվում Ս.Ստեփանոս Նախավկայի անունով՝ «քրիստոնէութեան առաջին նահատակին եւ վկային ի յիշատակ»[4]։ Սարաճյանի կարգադրությամբ հաստատվում է նաև «Նահատակաց Նշխարներու Ուխտի օրը ... Նոր Կիւրակէին», որն առաջին անգամ նշվում է հուշարձան օծման օրը հազարավոր ուխտավորների մասնակցությամբ։ 1939թ. ապրիլի 23-ին հանդիսավոր արարողությամբ տեղի է ունենում Դեր-Զորից և շրջակայքից հավաքված հայ նահատակների մասունքների թաղման արարողությունը նորակառույց հուշարձանի մեջ[5]։

Անթիլիասի այս հուշարձան-մատուռը դարձավ հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին կառուցված առաջին հուշարձաններից մեկն աշխարհում։

Կարևոր է նշել, որ ֆրանսիական Բարձր կոմիսարությունը Ֆրանսիայի ԱԳՆ դրդումով անհանգստանում է հուշարձան-մատուռի շինարարությունով։ Սակայն, Անթիլիասից ստանալով համապատասխան մեկնաբանություն, ֆրանսիացիները

---

[1] «Հասկ», 1939, մարտ, թ. 3, էջ 46։
[2] **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., էջ 266։
[3] **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ., էջ 519։
[4] «Հասկ», 1940, մայիս, թ. 5, էջ 59-60։
[5] «Հասկ», 1939, ապրիլ, թ. 4, էջ 64։ **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., էջ 274-76։

չեն խոչընդոտում հուշարձանի կառուցմանը։ Այդ առումով խիստ հետաքրքրական է Բարձր կոմիսարության պատասխանն ԱԳՆ-ին. «Արտօնեցինք որ անոնք շինեն իրենց Նահատակաց Յուշարձանը, որովհետեւ ազգ մը, որ կը յարգէ իր նահատակները արժանի է յարգանքի»[1]։

Բացի շինարարական աշխատանքը՝ Սարաճյանի ուշադրության կենտրոնում էին նաև բազմաթիվ այլ հարցեր, որոնք ծառացած էին կաթողիկոսության առջև՝ արտաքին հարաբերություններից մինչև հայապահպանության, կրթության կազմակերպման հարցերը, դպրեվանքի գործունեությունը, կաթողիկոսարանի առօրյա գործունեության կազմակերպումը։ Կարևոր հարցերը անպայման քննարկվում և որոշումները կայացվում էին Անթիլիասի եպիսկոպոսական ժողովներում։ Կաթողիկոսական փոխանորդության և կաթողիկոսության շրջանում Պետրոս Սարաճյանը գումարեց ութ եպիսկոպոսական ժողով[2]։

Կիլիկիո կաթողիկոսության հոգածության առարկա էին 1939թ. Ալեքսանդրետի սանջակից տեղահանված և Սիրիայում ու Լիբանանում ապաստանած հայության խնդիրները, որոնց լուծման համար լրացուցիչ ջանքեր էր պահանջվում։ Կիլիկիո կաթողիկոսությունը հսկայական աշխատանք կատարեց, որի հիմնական կազմակերպողը տեղապահ Պետրոս սրբազանն էր։ Կաթողիկոս ընտրվելուց հետո 1940թ. հուլիսին Պետրոս Ա-ն այցելեց հարավային Լիբանանում՝ Սուրի և Այնճարի գաղթականները ծանոթանալու խնդիրներին[3]։ Նա Ռամկավար ազատական կուսակցության կողմից ԱՄՆ-ում ի նպաստ Ալեքսանդրետի սանջակից գաղթած հայերի ցորենի հանգանակություն «քաջալերողն ու կերպով մը գլխաւորողն եղաւ»[4]։ Նրա նախագահությամբ կազմվեց «Նպաստից կենտրոնական

---

[1] **Եղիազեան Բ.**, *նշվ. աշխ., էջ 523։*
[2] *«Հասկ», 1937, մարտ, թ. 3, էջ 32։* **Եղիազեան Բ.**, *նշվ. աշխ., էջ 525։*
[3] **Եղիազեան Բ.**, *նշվ. աշխ, էջ 523։*
[4] *«Զարթոնք», Պէյրութ, 1940, հոկտեմբերի 2։*

հանձնաժողովը», որը հետո փոխանցվեց ՀԲԸՄ-ին, որը շարունակեց հանգանակության կազմակերպումը սանջակի հայերի օգտին։ «Գաղթականաց հանգստեան, պարենաւորման, ապահովութեան եւ քաղաքացիական շահերուն հետապնդումը հովանաւոր Բարձր Գոմիսերութէան եւ տեղական կառավարութեանց առջեւ ղեկավարուեցաւ Անթիլիասէն»[1],- գրում է Բ. Եղիայանը սանջակի հայության աջակցության հարցում Կիլիկիո կաթողիկոսության ունեցած դերակատարման վերաբերյալ։

Կաթողիկոսական փոխանորդության շրջանում բնակվելով Անթիլիասում՝ Պետրոս Սարաճյանը պարբերաբար լինում էր նաև Կիպրոսում, տեղում կարգավորելով թեմի ընթացիկ գործերը, ինչպես նաև մասնակցելու տարբեր միջոցառումների։

Այսպիսով, Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը, դառնալով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ, ձեռնամուխ եղավ կաթողիկոսության վերաշինության գործին։ Նրա ջանքերն հատկապես ուղղված էր Անթիլիասի կաթողիկոսարանի կառուցապատման աշխատանքներին։ Սարաճյան սրբազանի փոխանորդության 4 տարվա ընթացքում ամբողջությամբ վերափոխվեց կաթողիկոսարանը, նախաձեռնվեցին և ավարտին հասցվեցին մի շարք կարևոր շինություններ, որոնց թվում Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարը, դպրեվանքի և վեհարանի նոր շենքերը, Նահատակաց մատուռ-հուշարձանը և այլն[2]։ 1936-1940թթ. Անթիլիասի կաթողիկոսարանի շինությունների կառուցման վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունից պարզ է դառնում, որ այդ նպատակով ծախսված մոտ 83 հազար սիրիական դահեկանից շուրջ 76 հազարը հանդիսացել են նվիրատվություններ

---

[1] **Եղիաեան Բ.**, նշվ. աշխ., էջ 527։

[2] Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի փոխանորդության և կաթողիկոսության շրջանում կատարված շինարարական աշխատանքների, ինչպես նաև Անթիլիասի կալվածքների գնման ամբողջական հաշվեկշիռը մանրամասն տե՛ս «Հասկ», 1940, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10 , էջ 134-144։

և միայն մոտ 7 հազարն է Կիլիկիո կաթողիկոսությունը ծախսել սեփական «սնտուկէն»։ Նվիրատվությունների կեսից ավելին՝ մոտ 49 հազար սիրիական դահեկան կամ անգլիական 6500 ոսկի[1], գոյացել է երկու բարերարների՝ Տեր և Տիկին Գայրգճյանների ու Սարգիս Քընաճյանի կողմից տրամադրած միջոցներից[2]։ Թվերը ցույց են տալիս թե համազգային նվիրատվությունները, որքան կարևոր դեր են խաղացել Կիլիկիո կաթողիկոսության վերակազմավորման գործում։

«Անթիլիաս մտած է արդէն նիւթական բարգաւաճման հոյակապ շրջանի մը մեջ, մասնաւորաբար այն օրէն ասդին, երբ նորընտիր Հայրապետը հոս գործի լծուեցաւ իբրեւ Ընդհանուր Փոխանորդ Երջանկայիշատակ Տ.Սահակ Բ. կաթողիկոսի»[3],- այսպես է ամբողջացնում գնահատականը «Հասկը» Սարաճյան սրբազանի փոխանորդության շրջանի վերաբերյալ։ Իսկ Բյուզանդ Եղիայանը, իրավամբ, այդ ժամանակահատվածը համարում է Պետրոս Սարաճյանի «յաջողագոյն գործունէութեանց» շրջանը[4]։

---

[1] Անգլիական մեկ ոսկին ժամանակի փոխարժեքով հավասար էր 665 սիրիական դահեկան։ Տե՛ս «Հասկ», 1940, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 135։

[2] «Հասկ», 1940, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 134-144։

[3] «Հասկ», 1940, հունիս-օգոստոս, թ. 6-8, էջ 89։

[4] **Եղիաեան Բ.**, նշվ. աշխ., էջ 462։

3.2.Պետրոս Ա. Սարաճյան. Կիլիկիո Աթոռի գահակալը

1939թ. նոյեմբերի 8-ին մահանում է Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ, ով Կիլիկիո աթոռին գահակալեց 37 տարի[1]։ Սահակ վեհափառի մահվանից հետո 1939թ. նոյեմբերի 10-ին կաթողիկոսարանում եպիսկոպոսական և միաբանական ընդհանուր ժողովը կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանին միաձայն հաստատեց կաթողիկոսական տեղապահ[2]։ Սահակ վեհափառի հուղարկավորությունից հետո Անթիլիասն սկսում է նախապատրաստվել կաթողիկոսական ընտրություններին, որը կդառնար առաջինը Կիլիկիայից տարագրվելուց հետո։ Սակայն կաթողիկոսական ընտրությունները կայացան որոշ ձգձգումներից հետո միայն։ Պատճառը էջմիածնից եկող նամակներն էին, որով Մայր Աթոռը ցանկություն էր հայտնում մասնակցել նախատեսվող ընտրություններին։ Սակայն, ցավոք, այդպես էլ Մայր Աթոռը չկարողացավ մասնակցել այդ ընտրություններին։

Ներկայացնենք իրադարձությունների ընթացքը և հարցը դիտարկենք ոչ միայն էջմիածին-Անթիլիաս հարաբերությունների, այլև աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում։

Կիլիկիո կաթողիկոսության եպիսկոպոսական ժողովը 9 նիստ նվիրեց կաթողիկոսական ընտրության հարցը քննարկելու համար։ 1939թ. դեկտեմբերի 18-20-ը կաթողիկոսական տեղապահ Պետրոս արքեպիսկոպոսի հրավերով Անթիլիասում գումարվում է Կիլիկիո թեմերի եպիսկոպոսական ժողով[3]։ Դրա ընթացքում որոշվում է կազմել թեմական պատգամավորական ժողով, որը հանդիսանալու էր կաթողիկոսական ընտրության

---

[1] «Հասկ», 1939, նոյեմբեր-դեկտեմբեր, թ. 11-12, էջ 170-176։

[2] «Հասկ», 1939, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 141, նոյեմբեր-դեկտեմբեր, թ. 11-12, էջ 170։

[3] «Հասկ», 1939, նոյեմբեր-դեկտեմբեր, թ. 11-12, էջ 175։

իրավասու մարմինը։ Հաստատվում է պատգամավորական ժողովի եկեղեցական և աշխարհիկ անդամների թիվը։ 5000 հոգուց պետք է ընտրվեր մեկ աշխարհիկ պատգամավոր։

Այդ շրջանում Սիրիայում և Լիբանանում հայերի թիվը մոտ 120 հազար էր։ Ուստի, ընտրվելու էր 25 աշխարհական պատգամավոր, որոնց ընտրությունը կատարվելու էր թեմերի գավառական ժողովներում։ Այդ 25 աշխարհիկ պատգամավորը պետք է ունենային սիրիական կամ լիբանանյան հպատակություն, լինեին Հայ առաքելական եկեղեցու հետևորդ, ինչպես նաև. «փորձառու և ազգային իրաւանց և օրէնքներուն հմուտ, ինչպէս և ընդհանուրին համակրանքն ու վստահութիւնը վայելող և 30 տարեկանը լրացնող ազգայիններէ»[1]։

Եպիսկոպոսական ժողովի կողմից թեմեր ուղարկված «Ընտրական Հրահանգի» 5-րդ կետի համաձայն պատգամավորների ընտրությունը պետք է կատարվեր «Ազգային Սահմանադրութեան ընտրական հրահանգներուն համաձայն»։ Եկեղեցական պատգամավորների թիվը 15 էր, որը բաշխվեց հետևյալ կերպ՝ 5 թեմական արքեպիսկոպոս, 5 Անթիլիասի միաբան և 5 քահանա։ Վրջիններս աշխարհիկ պատգամավորների նման պետք է ընտրվեին Կիլիկիո կաթողիկոսության 5 թեմերում։ Ընտրովի պատգամավորական տեղերը 5 թեմի վրա բաշխվեց հետևյալ կերպ՝ Հալեպի թեմ՝ 2 եկեղեցական և 11 աշխարհական, Լիբանանի թեմ՝ 3 եկեղեցական և 9 աշխարհական, Դամասկոսի թեմ՝ 3 աշխարհական, Կիպրոսի թեմ՝ 2 աշխարհական։ Նշենք նաև, որ Անտիոքի թեմին հասանելիք 1 եկեղեցական և 4 աշխարհիկ պատգամավորները ընտրվելու էին Լիբանանի և Հալեպի գավառական ժողովներում՝ առանց հատուկ քվոտավորման։ Դրանք այն շրջաններն էին, որտեղ 1939թ. Ալեքսանդրետի սանջակի հայաթափումից հետո[2] հաստատվել էին գաղթական հայերը։ Նշենք նաև, որ եպիսկոպոսական ժողովը որոշեց

---

[1] *«Հասկ», 1939, նոյեմբեր-դեկտեմբեր, թ. 11-12, էջ 177։*

[2] *Մանրամասն տե՛ս* ***Բայրամյան Ա.****, Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936-1939թթ.), Ե., 1998։*

Լաթաքիա-Քեսապի շրջանների հովվությունն առժամանակ միացնել Հալեպի թեմին[1]։ Փաստորեն պատգամավորական ընդհանուր ժողովի թիվը բաղկացած էր 45 պատգամավորներից՝ 25 աշխահիկ և 15 հոգևորական[2]։ Կիլիկիո նոր կաթողիկոսի ընտրության օր նշանակվեց 1940թ. մարտի 7-ը[3]։ Որոշման մասին տեղեկացվում են նաև Մայր Աթոռը և Երուսաղեմի ու Կ. Պոլսո հայոց պատրիարքությունները[4]։

Սակայն 1940թ. փետրվարի 22-ին Էջմիածնից կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը հեռագրեց Երուսաղեմի պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանին՝ խնդրելով, հեղինակությունն օգտագործելով, հետաձգել Կիլիկիո կաթողիկոսի ընտրությունը, քանի որ Գևորգ սրբազանը ևս ցանկանում էր ներկա լինել դրան։ Հեռագրում նշված էր. «Կը փափաքինք Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտրութեան մասնակցիլ. կը խնդրենք որ Ձեր ազդեցութիւնը ի գործ դնէք ընտրութիւնը՝ յետաձգելու մինչ յառաջիկայ Յունիս 30»[5]։

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ Մեսրոպ սրբազանն անձամբ է հեռագիրը բերում Անթիլիաս՝ խորհրդակցելու Պետրոս Սարաճյանի հետ հեռագրին պատասխանելու և որոշում կայացնելու համար։ Փետրվարի 25-ին Սարաճյանի նախաձեռնությամբ և Երուսաղեմի պատրիարքի մասնակցությամբ կրկին հրավիրվում է եպիսկոպոսաց ժողով քննելու համար կաթողիկոսական ընտրությունների հետաձգման հարցը։ Մեսրոպ պատրիարքի վկայությամբ Էջմիածնից ստացված հեռագրին եպիսկոպոսական ժողովի ընթացքում «զանազան մեկնութիւններ տրուեցան»[6]։ Նա Մայր Աթոռի Կիլիկիո կաթողիկոսական ընտրություններին մասնակցության ցանկությունը պայմանավորում է զուտ փոխադարձության սկզբունքով՝

---

[1] «Հասկ», 1939, նոյեմբեր-դեկտեմբեր, թ. 11-12, էջ 175։
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 176-177։
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 175։
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4491, թ. 5։
[5] «Սիոն», 1940, մարտ, թ. 3, էջ 76։ «Հասկ», 1940, մարտ, թ. 3, էջ 45։
[6] «Սիոն», 1940, մարտ, թ. 3, էջ 76։

հիմք ընդունելով, որ Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանը ժամանակին Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչներին հրավիրել էր մասնակցելու Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրություններին։

Նկատի առնելով «խնդրոյն կարեւորութիւնը և օրուան փափուկ կացութիւնը», այսինքն՝ պատերազմական դրությունը, որոշվում է խնդիրը քննարկել նաև ֆրանսիական Բարձր կոմիսարության հետ և վերջինիս կարծիքը իմանալուց հետո կայացնել վերջնական որոշում[1]։ Փետրվարի 26-ին Պետրոս Սարաճյանը Մեսրոպ պատրիարքի, Եղիշե արքեպիսկոպոսի և Զարեհ վարդապետի ուղեկցությամբ, նախապես պայմանավորվածության համաձայն, այցելում են ֆրանսիական բարձր կոմիսար Գաբրիել Պուոյին և ներկայացնում խնդիրը։ Վերջինս լսելով նրանց հայտնած տեղեկությունները Հայոց եկեղեցու նվիրապետության, էջմիածնի-Անթիլիասի փոխհարաբերությունների մասին համաձայնվում է Կիլիկիո կաթողիկոսի ընտրության հետաձգմանը, միաժամանակ հայտնելով, մեր կարծիքով, հեռուն տանող և խիստ վտանգավոր միտք։ Բարձր կոմիսարը հույս է հայտնում, որ կաթողիկոսական ընտրություններով «Կաթողիկոսական երկու Աթոռներուն համաձայնութեամբ կամ միացումով Հայ Եկեղեցւոյ Հոգեւոր Նուիրապետական պատմական և կարեւոր Աթոռը կը հաստատուի Լիբանանի խաղաղ և ապահով երկրին մէջ և՛ տեղական և՛ ֆրանսիական իշխանութեանց հովանաւորութեան տակ»[2]։

Այս խոսքերը պետք է դիտարկել աշխարաքաղաքական գործընթացների համատեքստում և Խորհրդային Միության նկատմամբ Արևմուտքի դիրքորոշումով։ Անշուշտ, փորձառու դիվանագետը Կիլիկիո կաթողիկոսական ընտրություններին էջմիածնի բարձրաստիճան ներկայացուցչի մասնակցության մեջ հնարավորություն էր տեսնում կաթողիկոսական աթոռնե-

---

[1] «Հասկ», 1940, մարտ, թ. 3, էջ 45, **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ., էջ 492։
[2] «Հասկ», 1940, մարտ, թ. 3, էջ 45։

րի միավորման համար, հատկապես այն պարագայում, երբ էջմիածնում շուրջ երկու տարի՝ կաթողիկոս Խորեն Ա. Մուրադբեկյանի եղերական մահվանից հետո, չէր ընտրվել նոր կաթողիկոս և հստակ էլ չէր, թե երբ խորհրդային իշխանությունները կթույլատրեն կազմակերպել Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրություններ։

Եթե սրան էլ գումարենք Խորհրդային Հայաստանում իրականացվող հակաեկեղեցական և հակակրոնական քաղաքականությունը[1], ապա ֆրանսիացի պաշտոնյայի մոտ իրական հույսեր կարող էին արթնանալ երկու աթոռների միավորման համար «Լիբանանի խաղաղ և ապահով երկրին մէջ»։ Հասկանալի է, թե նման սցենարի զարգանալու դեպքում ֆրանսիական իշխանություններն ինչպիսի կարևոր գործոնի էին տիրապետելու նախ հայության հետ տարվող քաղաքականության մեջ, ընդ որում, ոչ միայն Լիբանանում, այլ նաև ողջ աշխարհում ընդհանրապես, ինչպես նաև Խորհրդային Միության դեմ իրականացվող քարոզչական պայքարում։

Ֆրանսիական Բարձր կոմիսարի խիստ քաղաքական ենթատեքստ ունեցող այս ակնարկը կարող էր վտանգել նաև Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգը և հերթական առիթը դառնալ հարաբերությունների սրման համար։ Սակայն հայտնի է, որ իրադարձություններն այլ ուղղությամբ զարգացան։ Ահագնացող համաշխարհային պատերազմը ստեղծեց նոր քաղաքական իրողություններ և նոր իրավիճակներ։

Հետաքրքիր է, որ երկու աթոռների միավորման տրամադրություններ հնչում էին նաև հայկական որոշ շրջանակներում։ Այդ իմաստով խոսուն է Անթիլիասի պաշտոնաթերթ «Հասկ»-ի հռետորական հարցապնդումը. «Ա՛րդեօք, պիտի կրկնուի՞ պատմութիւնը և Հայ Եկեղեցւոյ Նուիրապետութեան Աթոռը որ

---

[1] *Մանրամասն տե՛ս* ***Հովհաննիսյան Է.****, Մարտնչող անաստվածների միության գործունեությունը Խորհրդային Հայաստանում 1920-1930-ական թթ., «Էջմիածին», 2014, հունվար, էջ 100-107։*

արեւմտեան ոտնձգութիւններէ վախնալով, վերադարձած հաստատուած էր ի Վաղարշապատ (1441ին), արդեօք կ՚ուզէ՞ վերադարձ մը ընել եւ միանալ Կիլիկեան Աթոռին, ինչպէս կառաջարկէին ոմանք վերջերս, մամուլին մէջ, միացնել Կաթողիկոսական երկու Աթոռները», կարծիք հայտնելով նաև, որ հավանաբար ճիշտ էր Գրիգոր Օտյանի նախկինում հայտնած հայտնի թեզը թե. «Պէտք է պահել Սիսը, նոյն իսկ էջմիածնի համար»[1]՝ նկատի ունենալով այն, որ ստեղծված քաղաքական իրավիճակն արդարացնում է, հերթական անգամ, Կիլիկիո աթոռի պահպանման անհրաժեշտությունը ընդհանրապես։ Նշված հրապարակումը «Հասկն» ավարտում է մաղթանքով կաթողիկոսական ընտրությունների «բարի եւ բերկրառիթ վախճանի» և «նպաստաւոր պայմաններով» Հայոց եկեղեցու նվիրապետության վերահաստատության և «ամուր Հայրապետական Աթոռին Միութիւնը» վերականգնելու ցանկությամբ։

Ֆրանսիական բարձր կոմիսարի թույլտվությունը ստանալուց հետո Մեսրոպ սրբազանը Կիլիկիո «եպիսկոպոսական ժողովին հետ համախորհուրդ» Ս. էջմիածին կաթողիկոսական տեղապահին է ուղարկում հետևյալ պատասխանը. «Կիլիկիոյ Եպիսկոպոսական ժողովը համաձայն է յետաձգել կաթողիկոսական ընտրութիւնը. կը սպասենք Ձեր անմիջական տեղեկութեանց»[2]։ Եպիսկոպոսական ժողովը որոշում է նաև կաթողիկոսական ընտրությունների հետաձգման պատճառի մասին տեղեկացնել ոչ միայն թեմական առաջնորդություններին և ազգային վարչություններին, այլև մամուլի միջոցով ողջ հայությանը, որի ուշադրությունը սևեռված էր Կիլիկիո կաթողիկոսի առաջիկա ընտրությունների վրա։

1940թ. մարտի 2-ին Պետրոս Սարաճյանը Հալեպի առաջնորդարանի միջոցով ստանում է հերթական հեռագիրը Ս.էջ-

---

[1] «Հասկ», 1940, մարտ, թ. 3, էջ 46։

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4492, թ. 3։ «Հասկ», 1940, մարտ, թ. 3, էջ 46։ «Սիոն», 1940, մարտ, թ. 3, էջ 77։

միածնից Գևորգ Չորեքչյանի ստորագությամբ, որտեղ նա կրկնում էր նախորդ նամակում արված խնդրանքը կաթողիկոսական ընտրությունների հետաձգման մասին։ Այդ հեռագրով տեղեկացվում էր նաև, որ կաթողիկոսական ընտրություններին մասնակցության վերաբերյալ մեկ այլ ընդարձակ նամակ էլ ուղարկվել է փոստի միջոցով։ Սակայն, այդ նամակը ուշանում էր։ Ապրիլի 9-ին Երուսաղեմի պատրիարքը Ս.Էջմիածնից խնդրում է արագացնել ընտրությանը մասնակցության մասին նամակի ուղարկումը[1], ինչն որոշակի հստակություն կմտցներ հետագա անելիքների մեջ։ Սակայն, այս հեռագիրը մնում է անպատասխան[2]։

Շուտով ֆրանսիական Բարձր կոմիսարությունը Անթիլիաս ուղարկած ներկայացուցչի միջոցով կաթողիկոսությանը հորդորում է հնարավորինս արագացնել ընտրությունները[3]։ Նրանք կարծես թե զգուշանալով ինչ-որ բանից փոխել էին նախկին դիրքորոշումը և ցանկանում էին հնարավորինս արագ ավարտին հասցնել կաթողիկոսական ընտրությունը։ Պետրոս Սարաճյանը հարցը քննարկում է ֆրանսիական Բարձր կոմիսարի հետ, ով կրկին հորդորում է ընտրությունները կատարել հնարավորինս շուտ։ Որոշվում է նշանակել կաթողիկոսական ընտրությունների նոր օր՝ մայիսի 30-ը՝ «նկատելով որ Կաթողիկոսական ընտրութիւնը աւելի ուշացնել նպատակայարմար չէ»[4]։ Ընտրության նոր օրվա մասին մայիսի 7-ին «գիտութեամբ եւ հաւանութեամբ Բարձր Գոմիսէրութեան» հեռագրվում է նաև Մայր Աթոռ[5]։ Անթիլիասից Մայր Աթոռ ուղարկված հեռագրերին ուշացումով պատասխանելը ևս իր ազդեցությունը ունեցավ իրավիճակի վրա։ Հասկանալի է, որ Մայր Աթոռն այդ շրջանում նման կարևոր հարցերում ինքնուրույն

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 3861, թ. 6։
[2] «Հասկ», 1940, մայիս, թ. 5, էջ 79։
[3] **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ., էջ 493։
[4] «Հասկ», 1940, մայիս, թ. 5, էջ 79։
[5] ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.4492, թ. 4։ «Հասկ», 1940, հունիս-օգոստոս, թ. 6-8, էջ 92։

որոշումներ կայացնելու հնարավորությունից զրկված էր և հավանաբար խորհրդային պատկան մարմինների համապատասխան միջամտությամբ էր պայմանավորված ձգձգվող նամակագրությունը։ Հետաքրքիր է, որ միայն Կիլիկիո կաթողիկոսական ընտրության օրն է՝ մայիսի 30-ին, Անթիլիաս հասնում Գևորգ Չորեքչյանի հերթական հեռագիրը, որով խնդրվում էր տեղեկացնել թե արդյոք. «Էջմիածնի փափաքը՝ ընտրութիւնը 30 Յունիսին ընելու՝ զեղչուեցա՞ւ»[1]։ Տեղեկացվում էր նաև, որ խորհրդային իշխանություններն արտոնել են անցկացնելու Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրություններ։

Մայր Աթոռի ցանկությունը հնարավորինս հետաձգել ընտրությունը պայմանավորված էր ոչ թե պատգամավորների ժամանման դժվարություններով, այլ նրանով, որ Մայր Աթոռը ցանկանում էր Անթիլիասից շուտ կազմակերպել կաթողիկոսական ընտրություն կամ առնվազը խորհրդային իշխանությունից ստանար համապատասխան հստակեցումներ ընտրությունների անցկացման ժամկետների վերաբերյալ։ Հասկանալի պատճառներով կաթողիկոսական տեղապահ Գևորգ Չորեքչյանը և Գերագույն հոգևոր խորհուրդը փորձում էին հնարավորինս արագացնել Ամենայն հայոց հայրապետի հերթական ընտրության անցկացումը։ Ակնհայտ է, որ ընտրությունների նման ձգձգումը ինչպիսի հավակնություններ կարող էր առաջացնել տարբեր շրջանակների կողմից։ Ֆրանսիական Բարձր կոմիսարի վերը նշված միտքը դրա լավագույն ապացույցն է։ Գևորգ Չորեքչյանը 1940թ. հուլիսին Երուսաղեմի հայոց պատրիարք Մեսրոպ սրբազանին անձնական նամակով Մայր Աթոռի ցանկությունը հետաձգել Կիլիկիո կաթողիկոսական ընտրությունները պայմանավորում է. «մի շատ կարևոր հարցի հետ»[2]՝ հստակ չմանրամասնեցնելով թե խոսքն ինչի մասին է։

---

[1] «Հասկ», 1940, հունիս-օգոստոս, թ. 6-8, էջ 93։
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3861, թ. 19։

1939թ. մայիսին Գևորգ սրբազանը դիմել էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը կաթողիկոսական ընտրություն կազմակերպելու թույլտվության համար: 1940թ. հունիսի 7-ին Գերագույն խորհրդի նախագահությունը թույլատրում է 1940թ. հրավիրել ազգային-եկեղեցական ժողով և անցկացնել կաթողիկոսական ընտրություն: Այդ մասին տեղեկացվել էր Երուսաղեմի պատրիարքությունը[1], որտեղից լուրը հայտնվել էր Կիլիկիո կաթողիկոսությանը, Կ.Պոլսո պատրիարքությանը և մյուս թեմերին[2]: Գևորգ սրբազանը հունիսի 16-ին այդ մասին տեղյակ է պահում նաև Անթիլիասին:

Սակայն, ազգային-եկեղեցական ժողով հրավիրելու թույլտվություն Մայր Աթոռին տրվում է այն ժամանակ, երբ արդեն Անթիլիասում տեղի էր ունեցել կաթողիկոսական ընտրությունը: Ամենայն հայոց կաթողիկոս հնարավոր եղավ ընտրել միայն տարիներ անց՝ 1945թ. հունիսի 16-22-ը Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողովի ժամանակ, երբ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը ընտրվեց կաթողիկոս[3]: Յավոք, տարբեր պատճառներով, պատմական փաստը չկայացավ՝ Ամենայն Հայոց կաթողիկոսության ներկայացուցիչը չկարողացավ մասնակցել 1940թ. Կիլիկիո կաթողիկոսի ընտրություններին:

Կիլիկիո կաթողիկոսի հերթական ընտրությունը և առաջինը Սսից տարագրվելուց հետո՝ տեղի ունեցավ 1940թ. մայիսի 30-ին Անթիլիասում[4]: Նախապես ընտրված 45 պատգամավորներից, որոնցից 30 աշխարհիկ էին, 15 հոգևորական, պատգամավորական ժողովին մասնակցում էին 44-ը, բացակայում էր միայն Լիբանանի շրջանից Ալեքսանդրետի սանջակի հայերի պատգամավոր Մովսես Տեր-Գալուստյանը, ով որպես սպա զինվորական ծառայության մեջ էր[5]:

---

[1] «Սիոն», 1940, հուլիս-օգոստոս, թ. 7-8, էջ 166-169:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 3861, թ. 13:
[3] «Էջմիածին», 1945, հունիս-հուլիս, էջ 2:
[4] «Հասկ», 1940, հունիս-օգոստոս, թ. 6-8, էջ 91-106:
[5] Կիլիկիո կաթողիկոսական ընտրության պատգամավորական ժողովի մասնակիցների ցուցակը տե՛ս «Հասկ», 1940, թ 6-8, էջ 93-94:

Նիստի սկզբում հոգևորականներից ընտրվում է պատգամավորական ժողովի ժամանակավոր դիվան, որից հետո ընտրվում է մնայուն դիվան երկու ատենապետով՝ Եղիշե արքեպիսկոպոս Կարոյանը և Գրիգոր Ազիրյանը: Սակայն, պատգամավոր Խոսրով Թութունջյանի առարկության հիման վրա՝ թե նման համագումարում դիվան, ըստ սովորության, ընտրվում է աշխարհականներից, տեղի են ունենում նոր ընտրություններ և Լևոն Շանթը 38 քվեով ընտրվում է պատգամավորական ժողովի դիվանի նոր ատենապետ Եղիշե սրբազանի փոխարեն[1]:

Քվեարկությամբ կազմվում է թեկնածուների եռանուն ցուցակը հետևյալ կազմով՝ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյան, Եղիշե արքեպիսկոպոս Կարոյան, Խաչ արքեպիսկոպոս Աջապահյան: Պետրոս սրբազանի օգտին քվեարկությանը մասնակից 43 պատգամավորներից 41-ը քվեարկում են կողմ, 2-ը ձեռնպահ: Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը ընտրվում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության նոր կաթողիկոս[2]:

Կիլիկիո գահակալի աթոռին հավակնում էր նաև Բերիո թեմի առաջնորդ Արտավազդ արքեպիսկոպոս Սուրմեյանը, ով Բյուզանդ Եղիայանի բնորոշմամբ միակ եկեղեցականն էր, որ «յայտնօրէն «մրցորդ» կանգնեց»[3]: Նա նման հավակնություններ էր ցույց տալիս դեռևս Բաբկեն աթոռակից կաթողիկոսի մահվանից հետո: Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը 1937թ. մայիսին Ամենյան հայոց կաթողիկոս Խորեն Ա-ին գրած նամակում, խոսելով Արտավազդ սրբազանի մասին, նշում է, որ նա. «լաւ կը գործէ իր վիճակին մէջ», սակայն Պետրոս Սարաճյանի փոխանորդ դառնալուց հետո. «Դժգոհանքի նշաններ կը ցուցանէ եւ աչքը դուրս է: Եթե աթոռակիցի կամ կաթողիկոսի ընտրութեան ատեն գայ եւ ինքը չընտրուի, ավելի պիտի դժգոհի»[4]: Հիրավի այդպես էլ եղավ,

---

[1] «Հասկ», 1940, հունիս-օգոստոս, թ. 6-8, էջ 93-94:
[2] «Արև», 1940, հունիսի 7:
[3] **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 491:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3849, թ. 2:

Պետրոս Սարաճյանի կաթողիկոս ընտրվելուց հետո, Արտավազդ սրբազանը մի քանի տարի ստանձնեց Լիբանանի թեմի առաջնորդությունը, ապա Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից նշանակվեց Եվրոպայում կաթողիկոսական պատվիրակ և 1946թ. մեկնդմիշտ հեռանալով Կիլիկիո կաթողիկոսության շրջանակից՝ հաստատվեց Փարիզում, որտեղ էլ 1951թ. վախճանվեց[1]։

Ընտրության արդյունքների մասին անմիջապես տեղեկացվում են ֆրանսիական Բարձր կոմիսարը, Սիրիայի և Լիբանանի իշխանությունները, տեղական հոգևոր պետերը, հեռագրեր են ուղարկվում Մայր Աթոռ[2], Երուսաղեմ, Կ.Պոլիս, հայոց եկեղեցու մյուս թեմեր։ Կաթողիկոսի ընտրության մասին պատրաստվեց հատուկ հաղորդագրություն, որը տրամադրվեց Սիրիայի և Լիբանանի հայկական, ֆրանսիական ու արաբական պարբերականներին[3]։ Ընտրության հաջորդ օրը Պետրոս կաթողիկոսը բարձրաստիճան հոգևորականների ուղեկցությամբ այցելում է ֆրանսիական Բարձր կոմիսար Գաբրիել Պուոյին և Լիբանանի նախագահ Էմիլ Էտտեին։ Վերջիններս, ընդունված սովորության համաձայն, փոխայցով ժամանում են Անթիլիաս՝ շնորհավորելու նորընտիր կաթողիկոսին[4]։ Անթիլիաս են այցելում նաև այլ բարձրաստիճան պաշտոնյաներ և կրոնական առաջնորդներ։ Ստացվեցին նաև տասնյակ շնորհավորական նամակներ և հեռագրեր աշխարհի տարբեր ծայրերից, ինչպես հայերի, այնպես էլ օտարների կողմից[5]։

Կաթողիկոսական ընտրությունից մեկ ամիս անց շնորհավորական հեռագիր է ստացվում նաև Ս. Էջմիածնից, որտեղ, զարմանալիորեն, կաթողիկոս ընտրվելու առթիվ շնորհավո-

---

[1] **Վարժապետեան Ս.**, Հայերը Լիբանանի մէջ, հտ. Ե., Պէյրութ, 1983, էջ 406-408։

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4493, թ. 1։

[3] «Հասկ», 1940, հունիս-օգոստոս, թ. 6-8, էջ 99-100, 102։

[4] «Արև», 1940, հունիսի 8։

[5] «Հասկ», 1940, հունիս-օգոստոս, թ. 6-8, էջ 108-111։

ռում էին խաղ արքեպիսկոպոս Աջապահյանին[1]։ Սա որոշ տարակուսանք է առաջացնում Անթիլիասում։ Խնդիրը սակայն այն էր, որ 1940թ. հունիսի 3-ին Եղիշե արքեպիսկոպոս Կարոյանի Մայր Աթոռ ուղարկած ֆրանսերեն հեռագիրը թյուրիմացաբար սխալ էր թարգմանվել։ Այդ մասին է վկայում Հայաստանի ազգային արխիվում պահվող հեռագիրն ու հայերեն թարգմանությունը[2]։ Ի պատասխան Գևորգ արքեպիսկոպոսի Զորեքչյանին Երուսաղեմի պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանին ուղղված հեռագրի վերջինս 1940թ. հուլիսի 5-ին կրկին հեռագրով տեղյակ է պահում Պետրոս սրբազանի Կիլիկիո կաթողիկոս ընտրվելու և օծվելու մասին[3]։ Անթիլիասից ևս նոր նամակով Գևորգ սրբազանին տեղեկացվում է կաթողիկոսական ընտրությունների արդյունքների մասին[4]։ 1940թ. նոյեմբերի 12-ին Մայր Աթոռից Անթիլիաս Պետրոս Սարաճյանին է ուղարկվում շնորհավորական հեռագիր[5]։

1940թ. հունիսի 2-ին Անթիլիասի նորակառույց Մայր տաճարում առաջին անգամ տեղի է ունենում Կիլիկիո նորընտիր հայրապետի օծման արարողությունը[6], որ կատարվում է Երուսաղեմի հայոց պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանի ձեռամբ[7]։ Մի քանի օր անց՝ 1940թ. հունիսի 9-ին, Պետրոս Ա-ն Անթիլիասի Մայր տաճարում մատուցում է հայրապետական անդրանիկ պատարագը, որը նվիրվում է «Արեւմտեան Եւրոպայի ռազմաճակատին վերայ ազատութեան, արդարութեան եւ իրաւունքի պաշտպանութեան ի խնդիր կռուող դաշնակից արի բանակներուն վերջնական

---

[1] ***Եղիազեան Բ.***, *նշվ. աշխ., էջ 498։*
[2] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4493, թ. 1։*
[3] *Տե՛ս նույն տեղում, գ. 3861, թ. 10-12։*
[4] *Տե՛ս նույն տեղում, գ. 4493, թ. 2։*
[5] *Տե՛ս նույն տեղում, գ. 4492, թ. 6։*
[6] *«Հասկ», 1940, հունիս-օգոստոս, թ. 6-8, էջ 102-106։*
[7] *«Սիոն», 1940, հուլիս-օգոստոս, թ. 7-8, էջ 204։ «Արև», 1940, հունիսի 15։*

յաղթանակին համար»[1]։ Պատարագին մասնակցում են ինչպես հայկական ազգային կառույցների, այնպես էլ ֆրանսիական և լիբանանյան բարձրագույն իշխանությունների և զինվորականության ներկայացուցիչներ՝ Բարձր կոմիսար Գաբրիել Պուոն, Լիբանանի նախագահ էմիլ էտտեն, Արևելյան Միջերկրականի ֆրանսիական զինված ուժերի ընդհանուր հրամանատար գեներալ Միթթելհոսերը, մի շարք այլ պաշտոնյաներ և հոգևորականներ[2]։

1940թ. հունիսի 15-ին նորընտիր կաթողիկոս Պետրոս Ա-ն հրապարակում է անդրանիկ և միակ կոնդակը։ Շարունակելով նախկինների ավանդույթները Պետրոս Ա օգտագործում է հետևյալ տիտղոսը՝ «Պետրոս Ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստծոյ եպիսկոպոսապետ եւ կաթողիկոս Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ»[3]։

Կոնդակում կատարված հետաքրքիր շեշտադրումները արտացոլում էին այդ շրջանում ստեղծված իրողություններն ու Կիլիկիո կաթողիկոսության վերաբերմունքը դրանց հանդեպ։ Կոնդակում կաթողիկոսը նախ աղոթքն է բարձրացնում «վասն խաղաղութեան»՝ անդրադառնալով բռնկված համաշխարհային պատերազմի բերած անկայուն և անորոշ վիճակին[4]։ Վեհափառը երախտիքի խոսքն է հայտնում նաև հյուրընկալ երկրներին, որոնք ցեղասպանությունից հետո ապաստան էին տվել տարագիր հայությանը՝ հորդորելով հոտին. «որ երկրի զանազան ժողովուրդներու միջեւ բարւոք յարաբերութեանց մշակման հետամուտ ըլլաք և մեզի տրուած ազգային ներքին ազատութեան սահմաններուն մէջ արժեցնէք հայ ինքնուրոյն նկարագրի պահպանումը, ցեղին յատուկ ձիրքի և ոյժի տուրքը բերելով միշտ երկրի բարգաւաճման ի սպաս»[5]։ Նա կոնդա-

---

[1] *«Հասկ», 1940, հունիս-օգոստոս, թ. 6-8, էջ 106։*
[2] *«Հասկ», նույն տեղում, էջ 107։* ***Եղիայան Բ.****, նշվ. աշխ., էջ 496-497։*
[3] *«Հասկ», 1940, հունիս- օգոստոս, թ. 6-8, էջ 82-88։*
[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 83։*
[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 84։*

կում անդրադառնում է Անթիլիասի հարաբերություններին մյուս նվիրապետական աթոռների հետ, մասնավորապես, Ս. էջմիածնի դերակատարությանը և Մայր Աթոռի շուրջ ստեղծված իրավիճակին՝ ողջունելով առաջիկայում Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրություններ կազմակերպելու հանգամանքը և մաղթելով Մայր Աթոռին հաստատունություն. «Տէր Ամենակալ հաստատուն պահէ Ս.Աթոռը բնիկ Հայաստան աշխարհի մէջ. հոգ չէ թէ ինչ քաղաքական հայացքներով կառավարուած, հողը հայուն է և այդ է կարեւորը»[1]: 1920-1930-ականներին կաթողիկոսությունը ուշագրավ վերաբերմունք էր ձևավորել Խորհրդային Հայաստանի նկատմամբ[2]:

Պետրոս Ա անդրանիկ կոնդակը կարևոր շեշտադրումներ է անում հայության միասնականության, հայապահպանության և սփյուռքահայության եկեղեցու շուրջ համախմբվելու վերաբերյալ: Կաթողիկոսը «ցրուած հայութեան» միության հիմքը համարում է Հայոց եկեղեցին՝ նվիրապետական աթոռներով և թեմերով[3]: Խոսվում է նաև Սփյուռքի հայության, հատկապես Սիրիայի և Լիբանանի, Կիլիկիո կաթողիկոսության շուրջ համախմբվելու մասին: Վեհափառն անդրադառնում է առհասարակ հայության միասնության խնդիրներին՝ հանուն հայության հետագա գոյության՝ հորդորելով մի կողմ դնել պառակտում առաջացնող կրոնական և գաղափարական պատճառները, հայության տարբեր շերտերին լինել հանդուրժող իրար նկատմամբ[4]: Կոնդակում ընդգծվում է նաև հայապահպանության կարևորությունը. «Ազգային գոյութիւնը կենսաւորելու և միութիւնը պահպանելու համար մենք ունինք հայ ընտանիքը, հայ դպրոցը, հայ մշակոյթը և հայ եկեղեցին, քառեակ սիւներ որոնցմով կանգուն պիտի մնայ հայութիւնը: Պարտք կը դնենք

---

[1] «Հասկ», 1940, հունիս- օգոստոս, թ. 6-8, էջ 84:

[2] Մանրամասն տե՛ս **Հովհաննիսյան Է.**, Խորհրդային Հայաստանը էջմիածին-Անթիլիաս հարաբերությունների համատեքստում 1920-1940-ական թվականներին,- Խորհրդային Հայաստանը 1920-1930-ական թթ., Գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., 2020, էջ 74-98:

[3] «Հասկ», 1940, հունիս-օգոստոս, թ. 6-8, էջ 84:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 85-87:

ձեր վրայ մասնաւոր սէր տածել ցեղիս այդ հաստատութեանց հանդէպ»։ Պետրոս կաթողիկոսը հորդորում էր ստեղծված իրավիճակում «բոլորուիլ եկեղեցւոյն շուրջ», քանզի. «Հայ Եկեղեցին անգամ մը եւս այս շրջանին կը կոչուի փրկարար դեր կատարել սասանող բոլոր ազգային հաստատութեանց դիմաց։ Այս անսասան վէմի վրայ միայն պիտի կարենանք կազմակերպել ազգային հավաքական կեանքը։ Ազգին ամէն մէկ կազմակերպութիւնը թող կապ հաստատէ կենդրոնական այս հաստատութեան հետ։ Որքան կանգուն կը մնայ այս ժայռը իրեն հետ կանգուն կը պահէ ցեղին գոյութիւնը»[1]։

Պետրոս Ա-ն կաթողիկոսության կարճատև շրջանում փորձեց կարգավորել մի շարք խնդիրներ։ Նա նախ փորձեց վերջնական տեսքի բերել Կիլիկիո կաթողիկոսության կանոնադրությունն ու միաբանական ներքին կանոնագիրքը։ Դեռ 1931թ. եպիսկոպոսական ժողովն ապրիլի 17-ին անդրադարձել էր հարցին և որոշել ստեղծել հատուկ հանձնախումբ «Կաթողիկոսական ընտրութեան եւ գործունէութեան յատուկ Կանոնագիր» մշակելու համար։ 1935թ. հերթական եպիսկոպոսական ժողովն որոշել էր պատրաստել «Կիլիկիոյ Միաբանութեան յատուկ ներքին Կանոնագիր», որի վերջնական խմբագրումը հանձնարարվեց հենց Պետրոս Սարաճյանին։ Սակայն այդ ուղղությամբ երկար ժամանակ աշխատանք չէր կատարվել[2]։

1940թ. օգոստոսի 1-2 հրավիրված հերթական եպիսկոպոսական ժողովի հաստատմանն է ներկայացվում 18 կետից բաղկացած «Միաբանական կանոնագրի ծրագիր մը», որը հեղինակել էր Եղիշե արքեպիսկոպոս Կարոյանը։ Այն մանրակրկտորեն քննարկելուց հետո միաձայնությամբ հաստատվում է և վավերացվում Պետրոս Ա-ի կողմից։ Այն պետք է գործադրվեր նույն թվականի հոկտեմբերի սկզբից[3]։ Պետրոս Ա-ի մահից հետո հոկտեմբերի 3-ին միաբանական ընդհանուր ժողովը՝

---

[1] «Հասկ», 1940, հունիս-օգոստոս, թ. 6-8, էջ 87-88։
[2] «Հասկ», 1940, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 128։
[3] **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ., էջ 525։

Եղիշե արքեպիսկոպոս Կարոյանի նախագահությամբ, գումարվեց արդեն հենց այդ կանոնադրության հիման վրա[1]։

Սակայն չլուծված էր մնում Կիլիկիո կաթողիկոսության կանոնադրության հարցը։ 1940թ. կաթողիկոսական ընտրության համար հրավիրված պատգամավորական ժողովը հերթական անգամ անդրադառնում է խնդրին։ Քննարկվում է Ազգային սահմանադրության հիման վրա «Կաթողիկոսարանի յատուկ Կանոնագրութեան» ստեղծման հարցը։ Միաձայն ընդունվում է բանաձև, որով հրավիրված պատգամավորական ժողովին իրավունք է վերապահվում մշակելու նոր կանոնադրություն։ Այդ նպատակով ընտրվում է 5 հոգանոց հանձնախումբ՝ 2 եկեղեցականի և 3 աշխարհականի մասնակցությամբ[2]։ Հանձնաժողովը պետք է 2 ամսվա ընթացքում մշակեր կանոնադրություն և ներկայացներ նույն պատգամավորական ժողովին վավերացման համար։ Հաստատված կանոնադրության գործադրությունը պետք է «պարտաւորիչ» դառնար Կիլիկիո կաթողիկոսության համար[3]։ Հանձնաժողովը կանոնադրության նախագծի վրա աշխատեց ավելի քան 7 ամիս։ 36 կետից բաղկացած Կիլիկիո կաթողիկոսության կանոնադրությունը վերջնական հաստատվեց 1941թ. հունվարի 19-ին տեղապահ Եղիշե արքեպիսկոպոս Կարոյանի կողմից հերթական եպիսկոպոսական ժողովում քննարկվելուց հետո։ Սույն կանոնադրությունը այսուհետ. «հիմ պիտի ըլլար բոլոր Կանոնագրութեանց եւ ուղեցոյց կաթողիկոսական ընտրութեանց եւ գործունէութեանց»[4]։

Պետրոս Սարաճյանը փորձեց ջերմ հարաբերություններ պահպանել հյուրընկալ երկրի քաղաքական ղեկավարության, ֆրանսիական մանդատային իշխանությունների, Սիրիայի և Լիբանանի մյուս կրոնական կառույցների առաջնորդների, սփյուռքյան կառույցների հետ։ Դեռ կաթողիկոսական փոխա-

---

[1] «Հասկ», 1940, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 128։
[2] **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ., էջ 495, 534։
[3] «Ազդակ», Պէյրութ, 1940, հունիսի 1։
[4] **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ, էջ 535։

նորդության շրջանում Սարաճյան սրբազանը ջերմ շփումներ էր պահպանում Հայոց եկեղեցու մյուս նվիրապետական աթոռների հետ: Նամակագրական կապը տարբեր հարցերի շուրջ մշտապես պահպանվել է նաև Մայր Աթոռի հետ՝ ի դեմս վեհափառ Խորեն Ա-ի՝ սկսած ամանօրյա շնորհավորանքներից մինչև հայոց եկեղեցու տարաբնույթ հարցերի քննարկում[1]: Նա Խորեն Ա-ի հետ նամակագրական կապի մեջ էր նաև Աբգարյան կտակից Անթիլիասի կարիքների համար որոշ գումարներ հատկացնելու հարցով: Մայր Աթոռը, անսալով այդ խնդրանքներին, պարբերաբար որոշ գումարներ էր տրամադրում Անթիլիասի կարքների համար նշված կտակից[2]:

Նշենք նաև, որ Պետրոս Սարաճյանը, կաթողիկոս ընտրվելուց հետո, 1940թ. օգոստոսին Կիպրոսի թեմական ժողովին հորդորում էր, քանի որ Կիպրոսում արդեն 1932թ. գործում էր ընտրված թեմական ժողով, կատարել թեմի առաջնորդի ընտրություն և ունենալ «ընտրեալ» առաջնորդ[3]: Արդեն նշել ենք, որ նախկինում Կիպրոսի թեմը ղեկավարվել է Կիլիկիո կաթողիկոսության, հետագայում նաև Երուսաղեմի կամ Կ.Պոլսո պատրիարքությունների ուղարկած տեսուչ-առաջնորդներով: Սակայն, այդ ընտրությունը մինչև Պետրոս կաթողիկոսի մահը դեռ չէր կատարվել: Նրա մահվանից հետո էլ Կիպրոսի թեմի վարչությունը որոշում է մինչև համաշխարհային պատերազմի ավարտը նոր ընտրություն չկատարել, իսկ թեմի ղեկավարումը հանձնել քահանաներից մեկին[4]: 1940թ. կարճ ժամանակով Կիպրոսի առաջնորդական փոխանորդ է նշանակվում Պարույր վարդապետ Մինասյանը, ով Երուսաղեմի միաբաններից էր: 1940-1946թթ. Կիպրոսի հոգևոր հովվի պարտականություն-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4489, թ. 4:
[2] ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4489, թ. 5-6: Սահակ Բ Խապայեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, էջ 551-553:
[3] Կիպրոսի թեմի հովուական կարգը, էջ 236-237:
[4] «Հասկ», 1941, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 128:

ները ստանձնում է Խորեն քահանա Գուլիկյանը։ 1946թ. Կիպրոսի թեմի կաթողիկոսական փոխանորդ է նշանակվում Անթիլիասի Դպրեվանքի տեսուչ Ղևոնդ ծ.վարդապետ Զեպեյանը, ով 1947թ. ստանում է եպիսկոպոսի աստիճան և Կիպրոսի թեմական ժողովի կողմից 1954թ. առաջնորդ ընտրվում[1]։

Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը, հաջորդելով Սահակ Բ-ին, դարձավ Կիլիկիայից դուրս ընտրված առաջին կաթողիկոսը։ Սակայն, նորընտիր կաթողիկոսը երկար չգահակալեց։ 1940թ. սեպտեմբերի սկզբին Պետրոս Ա-ի առողջությունը կտրուկ վատթարանում է և տեղափոխվում Բեյրութի Ամերիկյան հիվանդանոց[2]։ Այստեղ շուրջ 3 շաբաթ անցկացնելուց հետո 70-ամյա Պետրոս Ա-ն 1940թ. սեպտեմբերի 28-ին կնքում է մահկանացուն[3]։ Անթիլիասի միաբանությունը բոթն արագ հեռագրերով տեղեկացնում է Երուսաղեմի և Կ.Պոլսո պատրիարքություններին, Մայր Աթոռին[4]։ Շուտով ստացվում են հարյուրավոր ցավակցական հեռագրեր աշխարհի տարբեր վայրերից։

Պետրոս Սարաճյանը, շուրջ 4 տարի լինելով կաթողիկոսի տեղապահ, մշտապես մերժում էր Սահակ կաթողիկոսի՝ իրեն աթոռակից կաթողիկոս օծելու առաջարկը՝ պատասխանելով. «Ես չեմ ուզեր Աթոռակից ըլլալ եւ ... մեռնիլ»[5]։ Սակայն կաթողիկոս ընտրվելուց հետո երկար չապրեց։ Նա հասցրեց ստորագրել ընդամենը 1 հայրապետական կոնդակ և 2 անգամ միայն «...բարձրացաւ Կաթողիկէ աթոռին վրայ, զոր իր անձնական դրամով շինել տուած էր՝ իր ճաշակին համաձայն»[6]։

Կաթողիկոսի թաղման արարողությանը մասնակցում էին հազարավոր հայեր, նաև Լիբանանի կրոնական պետերը, Լիբանանի նախագահն ու ֆրանսիական բարձր կոմիսարը։

---

[1] **Զէպէեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 65։
[2] **Եղիազեան Բ.**, նշվ. աշխ., էջ 523։
[3] «Հասկ», 1940, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 114, 124-126։
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4492, թ. 7-8։
[5] «Հասկ», 1940, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 116։
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 116։

Հոգեհանգստի կարգը տեղի է ունենում Բեյրութի Ս. Նշան եկեղեցում, ապա հոկտեմբերի 2-ին աճյունը տեղափոխվում է Անթիլիաս և ամփոփվում Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում Սահակ Բ Խապայանի գերեզմանի մոտ[1]։ Բեյրութից Անթիլիաս ճանապարհին հայկական թաղամասերով անցնելիս ժողովուրդը հրաժեշտի միջոցառումներ էր կազմակերպում՝ հարգանքի տուրքը մատուցելով։ Հատկապես հուզիչ էր Նոր Հաճն թաղամասում կազմակերպված միջոցառումը։ Հաճնցիները մեծ վշտով էին հրաժեշտ տալիս իրենց նախկին առաջնորդին[2]։

Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը գործունեության ողջ ընթացքում կարևոր դերակատարում ունեցավ Կիլիկիո կաթողիկոսության վերակազմության գործում։ Նա 1920-1930-ականներին իր նպաստը բերեց Կիպրոսի թեմի վերաշինության և կիպրահայության կյանքում։ Ապա նա աչքի ընկավ քառամյա կաթողիկոսական ընդհանուր փախանորդության և տեղապահության շրջանում՝ իրագործելով մի շարք կարևոր ձեռնարկներ։ Այդ շրջանում Պետրոս Սարաճյանը «վարեց Կաթողիկոսարանի ներքին եւ արաքին բոլոր գործերը։ Ան միայն օծումէն ետք կաթողիկոս չեղաւ, այլ անկէ ալ չորս-հինգ տարիներէ ի վեր արդէն գործնապէս Կաթողիկոս էր, ինքն ըլլալով ղեկավարն ու հոգին վերաշինուող Անթիլիասին»,- գրում է Բ. Եղիայանը, ավելացնելով. «Իսկ այդ չորս տարիներու նախընթացով ... ամբողջ 42 տարիներ ծառայած էր իբրեւ նուիրեալ եւ բազմարդիւն պաշտօնեայ Հայաստանեայց Եկեղեցւոյ»[3]։

Պետրոս Սարաճյանի պարզ ու գործունյա բնավորությունը լավագույնն է ներկայացրել «Ազդակը» մահվան առթիվ խմբագրականում. «Ուրիշներու նման «գրաբար» չէր, այլ

---

[1] ***Եղիաեան Բ.***, *նշվ. աշխ., էջ 524։*

[2] *Պետրոս Ա-ի թաղման արարողության մանրամասն նկարագրությունը տե՛ս «Հասկ», 1940, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 124-126։*

[3] ***Եղիաեան Բ.***, *նշվ. աշխ., էջ 490։*

կատարեալ «աշխարհաբար»։ Ամէն մարդ, մեծ թէ պզտիկ, դիրքի տէր թէ համեստ, կրնար համարձակօրէն մոտենալ անոր և ազատօրէն բանալ սիրտը»[1]։ «Արև»ը Պետրոս Սարաճյանին համարում էր «բանիբուն, վարչագէտ եւ շինարար եկեղեցական մը»[2]։ «Հասկը» բնութագրում է որպես «առաւելապես գործի մարդ, քան խօսքի եւ ծրագրի, գրչի եւ գրականութեան, եւ մասնաւորապես՝ շինարար, Շինող ու շէնցնող մարդ»[3]։ Նախաձեռնած շինարարական աշխատանքներով աչքի էր ընկնում ոչ միայն Անթիլիասում, այլ նաև Կիպրոսում ու Հաճնում՝ տեղի հոգևոր թեմերը ղեկավարելու շրջանում։ Օրինաչափ է, որ ժամանակակիցների կողմից «Շինող» պատվանունով սկսեց հորջորջվել Պետրոս Ա. Սարաճյանը։ Իրադարձություններին ականատես Բ.Եղիայանը լավագույնս է բնութագրում գործունյա հոգևորականին. «Իր չորս տարիներու շրջանին կատարուեցան կաթողիկոսարանի հիմէն մինչեւ կատար բարեզարդումի գործերը՝ ընդարձակ կալուածներուն գնումը եւ իրարու ետեւէ կառուցումը նոր վեհարանին, նոր Դպրեվանքին, Սբ.Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին, Նահատակաց մատուռին, միաժամանակ նորոգութիւններն ու պատշաճեցումները նախկին շէնքերուն ու վերասարքաւորումը տպարանի ու մատենադարանի, միշտ հայ ժողովուրդի ծանոթ եւ «անծանօթ» բարերարներէն եկող սրտաբուխ նուիրատուութիւններով։ 15.000 քռ. մեթր տարածութիւն ունեցող Անթիլիասի այս գետնին վրայ շէնք կամ հողաշերտ չմնաց, որուն հասած չըլլար Պետրոս կաթողիկոսի նորոգող ու շէնցնող ձեռքը»[4]։ Մի անգամ Պետրոս Ա-ին պատասխանելով շինարարական գործունեության վերաբերյալ ակնարկներին, նշում է. «Ինձ կը վերագրեն այսքան շինութիւններ։ Ես չեմ,

---

[1] *«Ազգակ», 1940, հոկտեմբերի 1։*
[2] *«Արև», 1940, հունիսի 1։*
[3] *«Հասկ», 1940, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 117։*
[4] ***Եղիաեան Բ.**, նշվ. աշխ., էջ 491-492։ «Հասկ», 1940, թ. 9-10, էջ 120։*

Ազգը կը շինէ։ Շինելու գաղափարն ալ երբեմն ուրիշներ թելադրեցին ու ես գործադրել ուզեցի միայն»[1]։

Պետրոս Սարաճյանը զուրկ չէր նաև մահկանացուներին բնորոշ որոշ թերություններից։ Մի փոքր դրվագ կարող է բնութագրական լինել նրա բնավորության փառասիրական կողմի մասին։ Այսպես, նորընտիր Կիլիկիո կաթողիկոսը «փոքրիկ փառասիրութեան մը գոհացում» տալու համար իր վեղարի վրա կրում էր ադամանդակուռ փոքրիկ խաչ, որը Ամենայն հայոց կաթողիկոսների առանձնաշնորհն էր հանդիսանում։ Իսկ նախորդը՝ Սահակ Բ-ն, ըստ «Հասկ»-ի, անդամանդակուռ խաչ կրել է ընդհամենը մեկ անգամ[2]*. «...անգամ մը միայն, կըսեն, գործածելէ վերջը՝ մէկ կողմ ձգած էր զայն իբր անպէտ եւ անպատեհ մի բան»*[3]։

Պետրոս Ա Սարաճյանի մահվանից հետո անմիջապես նույն օրը Անթիլիասի միաբանական ընդհանուր ժողովը Եղիշե արքեպիսկոպոս Կարոյանին ընտրում է կաթողիկոսական տեղապահ[4]։ *1940թ. հոկտեմբերի 3-4-ը հրավիրված միաբանական ընդհանուր ժողովը ներկա միաբանների ստորագրությամբ վավերացնում է Միաբանական նոր կանոնադրությունը, ինչպես նաև կաթողիկոսարանի ընթացիկ գործերը վարելու համար ընտրում է Տնօրեն ժողով, որի մեջ ընդգրկվում են խադ արքեպիսկոպոսը և Խորեն ու Ղևոնդ վարդապետերը*[5]։

Սկսվում է նոր ժամանակաշրջան բազմադարյա Կիլիկիո կաթողիկության պատմության մեջ։

---

[1] ***Եղիազարյան Բ.***, *նշվ. աշխ., էջ 518։*

[2] *Սահակ Բ նախորդ Մկրտիչ Ա. Քեֆսիզյանը, ում օրոք առանձնապես սրված էին էջմիածին-Անթիլիաս հարաբերությունները, մշտապես՝ ի հակադրություն Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի, կրել է ադամանդակուռ խաչ։*

[3] *«Հասկ», 1940, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 9-10, էջ 116։*

[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 124։*

[5] ***Եղիազարյան Բ.***, *նշվ. աշխ., էջ 525։*

ՎԵՐՋԱԲԱՆ

Կիլիկիայից հեռանալուց հետո Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը բախվեց նոր մարտահրավերների, որոնք անգամ սպառնալիք եղան կաթողիկոսության գոյությանն առհասարակ։ 1920-1930-ականներին կաթողիկոսության բարձրաստիճան հոգևորականների, մասնավորապես Սահակ Բ Խապայանի ահռելի ջանքերի շնորհիվ Կիլիկիո աթոռը նոր պայմաններում վերակազմության կարևոր գործընթաց անցավ։ Այդ ճանապարհին խիստ կարևոր էր նոր թեմերի ստեղծումը։

Տարագրությունից հետո Կիլիկիո կաթողիկոսությունը կորցրել էր իր բոլոր թեմերը, բացի Հալեպի թեմից, որը շարունակում էր մնալ իր ենթակայության ներքո։ Սիրիա-Լիբանանում հաստատվելուց հետո, մինչ երուսաղեմապատկան թեմերի Կիլիկիո աթոռին փոխանցելը, առաջինը, որը 1920-ականներին կեսին անցավ Կիլիկիո կաթողիկոսության վարչական իրավասության ներքո՝ Կիպրոսի թեմն էր։ Այս գործընթացում մեծ դերակատարում ունեցավ թեմի առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը, ում համառ ջանքերով են պայմանավորված թեմի պատկանելության հստակեցումը։ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը գրեթե արեց նույնը Կիպրոսի թեմի վերակազմության և վերահաստատման համար, ինչ-որ՝ Կիլիկիո աթոռի համար վահափառ Սահակ Բ. Խապայանը։

Ուսումնասիրելով արխիվային վավերագրերն ու փաստական նյութը տեսնում ենք, որը 1920-ականների սկզբից հիմնականում կիլիկիահայ գաղթականների ներթափանցման արդյունքում Կիպրոսում ստեղծվեց նոր իրավիճակ։ Կղզու գաղթահայությունը թվական գերակշռության հաշվին աստիճանաբար սկսեց թելադրող դառնալ համայնքային կյանքում։ Կիպրոսի թեմի նախաձեռնությամբ և Ազգային սահմանադրության դրույթներին համապատասխան ձևավորվեցին ազգային իշխանության նոր մարմիններ, մշակվեց և Սահակ Բ-ի կողմից

հաստատվեց համայնքի կանոնադրությունը։ Աստիճանաբար Կիպրոսի գլխավոր քաղաքներում սկսեցին կազմավորվել և գործել համայնքային այլ կառույցներ՝ դպրոցներ, մշակութային միություններ, տպագրվել թերթեր և այլն։ Այդ ամենը նախ և առաջ միտված էր համայնքային կյանքի կազմակերպմանն ու գաղթականության առջև ծառացած բազում խնդիրների լուծմանը, որոնց թվում առանցքային էր հայապահպանության խնդիրը։

Ստեղծված նոր պայմաններում տրամաբանական էր Կիպրոսի թեմի կարգավիճակի հստակեցումը հոգևոր-վարչական ենթակայության տեսակետից։ Դեռ մինչ առաջին համաշխարհային պատերազմը սկսված գործընթացը նոր իրավիճակում շարունակվեց 1920-ականներին։ Ծավալված ներքին լարված պայքարի արդյունքում 1920-ականների կեսին խնդիրը ստացավ տրամաբանական հանգուցալուծումը՝ Կիպրոսի թեմն անցավ Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության ներքո։

Վերակազմավորված Կիպրոսի թեմի գլխավոր խնդիրներից է դառնում կղզում հաստատված գաղթականների հայապահպանության հարցերը և կրթական, հոգևոր, մշակութային կյանքի կազմակերպումը։ Հրատապ խնդիր էր նաև անապահով գաղթականների և կղզում հաստատված որբերի կեցության ապահովման ու սոցիալական խնդիրների լուծումը։

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության անմիջական հովանու ներքո Կիպրոսի թեմը կարողացավ կարևոր աշխատանք իրականացնել կղզում հաստատված հայությանը եկեղեցու շուրջ համախմբելու ուղղությամբ։ Վերանորոգվեցին Կիպրոսի թեմի ենթակայության տակ գտնվող եկեղեցիները, կառուցվեցին նորերը։ Թեև մեծ չէր թեմում ծառայող հոգևորականների թիվը, սակայն արվում էր հնարավորը ժողովրդի շրջանում ազգային քրիստոնեական արժեհամակարգի վրա հիմնված բարոյական նորմերի տարածման ուղղությամբ։ Փաստորեն, Կիպրոսում ևս հայոց եկեղեցին էր, ինչպես սփյուռքյան մյուս

համայնքներում, ստանձնել հայության ինքնության պահպանմանն ուղղված հիմնական աշխատանքը։ Մատաղ սերնդին հայեցի դաստիարակության առումով անչափ կարևոր էր ազգային-կրթական կյանքի կազմակերպումը։ Կատարված աշխատանքի շնորհիվ 1920-1930-ականներին ամբողջությամբ փոխվեց Կիպրոսի հայկական ուսումնական հաստատությունների պատկերը։ Բոլոր հայաշատ քաղաքներում բացվեցին նոր վարժարաններ և մանկապարտեզներ։ Սփյուռքացման գործընթաց ապրող կիպրահայ փոքրաթիվ համայնքում քննարկվող ժամանակաշրջանում ակտիվանում է հասարակական-մշակութային կյանքը։ Հատկապես նշանակալի էր բազմաթիվ ակումբների և միությունների գործունեությունը։ 1920-ականներին սկսեցին հրատարակվել թերթեր, որոնց մեծ մասը թեև երկարատև կյանք չունեցան, սակայն կարևոր դեր խաղացին կիպրահայության հասարակական կյանքում։

Կիպրոսի թեմը Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի առաջնորդությամբ հսկայական աշխատանք իրականացրեց ոչ միայն ժամանող գաղթականների համար կղզում հաստատվելու հնարավորություններ ստեղծելու, այլ նաև վերջիններիս սոցիալական խնդիրները լուծելու հարցում։ Թեև Կիպրոս ժամանող ոչ բոլոր գաղթականներն էին սոցիալապես անապահով, սակայն կարիքավորների թիվը բավականին մեծ էր։ Թեմը տեղի ազգային իշխանության մարմինների հետ գործունեության հիմնական ուղղություններից մեկը դարձրեց այդ հարցը։ Ստեղծվեց նաև հատուկ մարմին, որն էլ հիմնականում պատասխանատու էր այդ խնդիրների լուծման հարցում։ Կարևոր էին նաև գործադրված հսկայական ջանքերը Կիպրոսում հաստատված որբերի խնամքի ուղղությամբ։ Կատարված մեծ ծավալի աշխատանքի արդյունքում անապահով գաղթականների զգալի մասը, պահպանելով սեփական ինքնությունը, արագ ինտեգրվեց հյուրընկալ երկրի հասարակական և

տնտեսական կյանքին՝ միաժամանակ բարելավելով սեփական կացությունը։

Կիպրոսի թեմի և տեղի ազգային կառույցների համառ ջանքերի և նպատակաուղղված աշխատանքի շնորհիվ Կիպրոսում հաստատված գաղթականները հաջողությամբ հաղթահարեցին սփյուռքացման գործընթացները։ Արդեն մեկ-երկու տասնամյակ անց Կիպրոսի հայությունը ներկայանում էր, թեև փոքրաթիվ, բայց բավականին կազմակերպված և բարեկեցիկ համայնք։ Կիպրոսի հայոց թեմը մինչ այժմ ունի հսկայական դերակատարում տեղի հայության համայնքային կյանքի կազմակերպման և հայապահպանության հարցերում։

Այս ամենում անգնահատելի էր թեմի առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի դերակատարումը, ով շուրջ 20 տարի՝ մինչ Կիլիկիո կաթողիկոս ընտրվելը, ղեկավարեց թեմը։ 1936 թ. կաթողիկոսական փոխանորդ հաստատվելուց հետո Սարաճյան սրբազանը կազմակերպական ունակություններն օգտագործեց կաթողիկոսության վերակազմության գործում՝ հատկապես կարևոր ներդրում ունենալով Անթիլիասի կաթողիկոսարանի կառուցապատման աշխատանքներում։

1940թ. Պետրոս Սարաճյանի մահվամբ, կարծես թե ավարտվում է Կիլիկիո կաթողիկոսության պատմության մի ժամանակաշրջան, որը համապատասխանում է 1921թ. Կիլիկիո աթոռի Սսից տարագրվելու սկզբին և 1930թ. Անթիլիասում հաստատվելու առաջին տասնամյակի ավարտին։ Սա Կիլիկիո կաթողիկոսության համար կարևոր մի ժամանակաշրջան էր, որի ընթացքում կաթողիկոսությանը հաջողվեց, անցնելով բազում դժվարությունների միջով և հաղթահարելով բազմաթիվ մարտահրավերներ, պահպանել սեփական գոյությունը և կարևոր տեղ գրավել սփյուռքի հոգևոր և ազգային կյանքում՝ փորձելով անընդհատ ամրապնդել դիրքերը։ Այս փուլին հաջորդելու էին տարիներ, որոնց ընթացքում ողջ աշխարհը նետված էր երկրորդ աշխարհամարտի հորձանուտը։

Համաշխարհային պատերազմն ազդեցությունն ունեցավ նաև հայկական համայնքների վրա։ Այդ տարիներին ևս Կիլիկիո կաթողիկոսությունը փորձում էր գործունեությունն իրականացնել՝ հաշվի առնելով ստեղծված աշխարհաքաղաքական իրողություններն ու այն նոր մարտահրավերները, որոնք ծառացել էին հայության առջև։

Սակայն Պետրոս Սարաճյանի մահվանից հետո Կիպրոսի թեմը երկար ժամանակ չունեցավ ընտրյալ առաջնորդ, իսկ Անթիլիասին հուզող թիվ մեկ հարցը կրկին շարունակում էր մնալ նոր կաթողիկոսի ընտրության հարցը, ում անձից և գործունեությունից հետագայում մեծապես կախված կլիներ Կիլիկիո կաթողիկոսության ճակատագիրը։ Եվ պատահական չէ, որ Պետրոս Սարաճյանի մահվան սգի հետ Անթիլիասի հոգևորականների խնդրանքն Աստծուց շարունակում էր մնալ նույնը՝ շնորհել «արժանաւոր Գահակալ մը»:

Summary

THE RECONSTRUCTION OF THE ARMENIAN DIOCESE OF CYPRUS AND THE ARMENIANS OF CYPRUS (1920-1940): ARCHBISHOP PETROS SARAJYAN

Edgar G. Hovhannisyan
PHD, associated professor

The first mentions about Armenians in Cyprus date back to the 6th-7th centuries. During the reign of the Armenian Catholicos Gregory IV at the end of the 12th century the Armenian Diocese of Cyprus was mentioned for the first time. In the following centuries, Cyprus became one of the most important cultural and spiritual centers of the Armenians.

After the genocide, the image of the Armenians of Cyprus completely changed. The number of Armenians in Cyprus was not large before the Armenian Genocide. Several thousand Armenians displaced from a number of settlements of Cilicia and Western Armenia took refuge on the island of Cyprus. However, many Armenian refugees did not find favorable living conditions on the island and left for other countries. In the 1920s and 1930s, the number of Armenians in Cyprus fluctuated between 3,500-4,000.

The Armenian Diocese of Cyprus was mainly under the jurisdiction of the Holy See of Cilicia of the Armenian Church. However, at different times it was also subordinated to the Armenian Patriarchate of Jerusalem and the Armenian Patriarchate of Constantinople. After the Armenian Genocide, the reconstruction of the Armenian Diocese of Cyprus was very important for organizing the community life of the Armenians of Cyprus. It was also very important to clarify the status of the Diocese of Cyprus in terms of subordination. It is worth to mention, that after leaving Cilicia, the Catholicosate of Cilicia lost all its dioceses except the Diocese of Aleppo. A number of obstacles appeared in that pro-

cess. After a persistent struggle, the problem was finally resolved in the mid-1920s and the Diocese of Cyprus came under the jurisdiction of the Catholicosate of Cilicia. The Diocese of Cyprus became the first reconstructed diocese of the Catholicosate of Cilicia.

After all this, the Armenian Diocese of Cyprus made enormous efforts to organize the community life of the Armenian refugees who settled in Cyprus and to preserve their national identity.

The Primate of the Diocese, Archbishop Petros Sarajyan, played a huge role in this issue. He led the Diocese of Cyprus for about twenty years from 1920 until 1940, until he was elected the Catolicos of the Cilician See.

After the death of the co-adjutor Catholicos Babken, the Episcopal Assembly of the Catholicosate of Cilicia convened in July 1936 elected Archbishop Petros Saruյyan as as the Vicar General of the Catholicosate of Cilicia. The latter continued to lead the Armenian Diocese of Cyprus until 1940. During these four years, the latter made great efforts to restore the Catholicosate of Cilicia and a number of other issues. During those years many new buildings were built in Antelias: the Mother Cathedral of Antelias, the new buildings of Dprevank, the monument dedicated to the victims of the Armenian Genocide, etc. In 1940 Archbishop Petros Sarajyan was elected a new Catolicos of Cilician See. The new Catholicos reigns for a very short time, only a few months.

After the death of Petros Sarajyan, it seems, an important period of the history of the Catholicosate of Cilicia was completed, which started from the deportation in 1921 to the establishment in Antelias and the final reorganization of the Catholicosate of Cilicia. This was an important period for the Catholicosate of Cilicia, during which the Catholicosate managed to overcome many challenges, to maintain its own existence, and to occupy its important place in the religious and national life of the Armenian Diaspora.

Резюме

ВОССТАНОВЛЕНИЕ АРМЯНСКОЙ ЕПАРХИИ КИПРА И АРМЯНСТВО КИПРА (1920-1940 ГГ.): АРХИЕПИСКОП ПЕТРОС САРАДЖЯН

Эдгар Г. Оганнесян
Кандидат исторических наук, доцент

Первые упоминания об армянах на Кипре относятся к VI-VII векам. Во время правления армянского католикоса Григория IV в конце XII века Армянская епархия Кипра упоминается впервые. В последующие века Кипр стал одним из важнейших культурных и духовных центров армян.

После Геноцида облик кипрских армян полностью изменился. До Геноцида число армян на Кипре было немного. Несколько тысяч армян, перемещенных из ряда населенных пунктов Киликии и Западной Армении, нашли убежище на острове Кипр. Однако многие армянские беженцы не нашли на острове благоприятных условий жизни и уехали в другие страны. В 1920-1930-е годы численность армян на Кипре колебалась в пределах 3500-4000 человек.

Армянская епархия Кипра находилась в основном под юрисдикцией Святого Престола Киликийской армянской церкви. Однако в разное время она также была подчинена Иерусалимскому патриархату и Константинопольскому патриархату. После Геноцида армян восстановление Армянской епархии Кипра имело большое значение для организации общинной жизни кипрских армян. Было также очень важно уточнить статус кипрской епархии с точки зрения подчиненности. Стоит отметить, что после ухода из Киликии Киликийский католикосат потерял все свои епархии, кроме Алеппской. В этом процессе возник целый ряд препятствий. После упорной борьбы проблема была окончательно решена в сере-

дине 1920-х годов, и Кипрская епархия перешла под юрисдикцию Киликийского католикосата. Кипрская епархия стала первой реконструированной епархией Киликийского католикосата.

После всего этого армянская епархия Кипра приложила огромные усилия для организации общинной жизни армянских беженцев, осевших на Кипре, и сохранения их национальной идентичность. Огромную роль в этом вопросе сыграл Предстоятель епархии архиепископ Петрос Сараджян. Он возглавлял Кипрскую епархию около двадцати лет с 1920 по 1940 год, пока не был избран Католикосом Киликийского престола.

После смерти Католикоса Бабкена епископское собрание Киликийского католикосата, созванное в июле 1936г., избрало архиепископа Петрос Сараджяна главным викарием Католикоса всех армян Католикосата. Последний продолжал руководить армянской епархией Кипра до 1940г. В 1940г. архиепископ Петрос Сараджян был избран новым католикосом Киликийского престола. Новый католикос правит очень недолго, всего несколько месяцев. За эти четыре года последний приложил огромные усилия для восстановления Католикосата Киликии и ряда других вопросов. В те годы в Антилиасе было построено много новых зданий: собор матери Антилиаса, новые здания Дпреванка, памятник жертвам Геноцида армян.

После смерти Петроса Сараджяна, похоже, завершился важный период в истории Католикосата Киликии, который начался с депортации в 1921г. до основания в Антилиасе и окончательной реорганизации Католикосата Киликии. Это был важный период для Католикосата Киликии, в течение которого Католикосат сумел преодолеть множество проблем, сохранить свое существование, занять свое важное место в религиозной и национальной жизни армянской диаспоры.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա.Արխիվային նյութեր

Հայաստանի ազգային արխիվ

1. *ֆ. 409 (Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդ),* ց.1, գգ. 3849, 3855, 3861, 4489, 4490, 4491, 4492, 4493:
2. *ֆ. 430 (Հայ ազգային պատվիրակություն),* ց. 1, գգ. 331, 332, 333, 338, 820, 847, 849, 809, 1416, 1439, 1441, 4493:
3. *ֆ. 1394 (Երիցյան Մաթևոս - սիրիահայ մանկավարժ, հրապարակախոս, հասարակական գործիչ),* ց. 1, գ. 64:

Հայաստանի ազգային գրադարան

4. *Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ի թիվ 116 կոնդակ, 20 հուլիսի 1936։ Անթիլիաս-Լիբանան,* գրանցահամար 25-ԱՀ, պատճեն, էջ 1:

Բ. Փաստաթղթերի ժողովածուներ

1. *Ազգային կրթարան-որբանոց ի Կիպրոս, Տեղեկագիր Ե տարեշրջանի։ Ազգային կրթարան-որբանոցի։* Նիկոսիա, 1902, 39 էջ:
2. *Ատանայի վկաները եւ Սուրբ Ստեփանոս վկայարանը. 1909 Լառնագա։* Խմբագիր՝ Վարուժան արքեպիսկոպոս, Նիկոսիա, 2010, 160 էջ:
3. *Գարեգին Ա. Յովսեփեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ։ Փաստաթուղթերու եւ նիւթերու ժողովածու, հտ. Բ։* Անթիլիաս, «Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 2017, 852 էջ:
4. *Կիպրոսի թեմի հովուական կարգը եւ թեմական կազմաւորումը։* Խմբագիր՝ Վարուժան արքեպիսկոպոս, Հրատարակութիւն՝ Ազգային իշխանութեան Կիպրոս, Նիկոսիա, 2011, 320 էջ:
5. *Թղթակցութիւն Սահակ Բ. եւ Բաբգէն Ա. Կաթողիկոսներու։* Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ, թ. 1, Անթիլիաս, «Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 1999, 350 էջ:

6. *Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէկեանի։* Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ, թ. 3, Անթիլիաս, «Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 2002, 364 էջ։
7. *Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի։* Խմբագիր՝ Վարուժան արքեպիսկոպոս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արխիւներ, թ. 4, Նիկոսիա, Համազգային «Վահէ Սէթեան», 2010, 478 էջ։
8. *Պաշտօնական ամուսնալուծութիւնք եւ վերամուսնութիւնք։* Անթիլիաս, 1936, 128 էջ։
9. *Սահակ Բ Խապայեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ 1891-1940թթ.։* Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Դ, խմբագիր՝ Ս. Բեհբության, Ե., «Ոսկան Երևանցի», 1997, 590 էջ։
10. *Սիւրիոյ երուսաղէմապատկան թեմերուն Կիլիկիոյ կաթողիկոսութեան փոխանցումը։* Երուսաղէմ, «Ս.Յակոբեանց»,1930, 58 էջ։
11. *Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն։* Խմբագիր՝ Վարուժան արքեպիսկոպոս, Նիկոսիա, «Դար» հիմնադրամ, 2011, 320 էջ։

Գ. Հուշագրություններ, ուսումնասիրություններ

1. Ակինեան Ն., *Յուցակ հայերէն ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս*։ Վիեննա, «Մխիթարեան տպարան», 1961, 140 էջ։
2. Բաբգէն Ա. Կիւլէսէրեան, *Հայ Կիպրոս. Հայ գաղութը եւ Սբ. Մակար*։ Անթիլիաս, «Դպրեվանուց Կաթողիկոսութեան Կիլիկիոյ», 1936, 272 էջ։
3. Բաբգէն Ա. Կիւլէսէրեան, *Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը)*։ Անթիլիաս, «Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 1990, 1446 էջ։
4. Բակուրան (Վահան Քիւրճեան), *Կիպրոս կղզի*։ Նիկոսիա, «Ազգ. Կրթարան-որբանոց», 1903, 122 էջ։

5. Բայրամյան Ա., *Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգայ-ին դիվանագիտությունը (1936-1939թթ.)*: Ե., «Նոյան տապան», 1998, 212 էջ:
6. Եղիաեան Բ., *Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972*: Անթիլիաս, «Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 1975, 946 էջ:
7. Եղիաեան Ջաւէն, *Պատրիարքական յուշերս. Վավերագիրներ եւ վկայութիւններ*: Գահիրե, 1947, 424 էջ:
8. *Մելգոնեան կրթական հաստատութիւն (համառօտ ակնարկ)*: Նիկոսիա, 1957, 70 էջ:
9. Մելիքսեթյան Հ., *Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրե-նադարձությունը*: Ե., «Երևանի համալսարան», 1985, 476 էջ:
10. Մելքոնյան Էդ., *Հայկական բարեգործական ընդհանուր միու-թյան պատմություն*: Ե., «Մուղնի», 2005, 582 էջ:
11. Զէպէեան Ղ., *Յիշատակարան կիպրահայ գաղութի*: Անթիլիաս, «Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 1955, 124 էջ:
12. Պօղոսեան Յ., *Հաճընի ընդհանուր պատմութիւնը*: Անթիլիաս, «Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 2014, էջ 868:
13. Սարաճեան Պ., *Կեանքի մը պայքարը*: Անթիլիաս, 1937, 151 էջ:
14. Վարժապետեան Ս., *Հայերը Լիբանանի մէջ, հտ. Բ։* Պէյրութ, «Սևան», 1981, 544 էջ:
15. Վարժապետեան Ս., *Հայերը Լիբանանի մէջ, հտ. Ե։* Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան», 1983, 518 էջ:
16. Hadjilyra Alexander-Michael. *The Armenians of Cyprus*. «Kalaysjian Foundation», 2009, 36 p.
17. Hadjilyra Alexander-Michael. *The Armenians of Cyprus*. «Published by the Press and Information» Office, Republic of Cyprus, 2012, 40 p.

Դ. Հոդվածներ

1. Ալպոյաճեան Ա., *Կիպրոս կղզին*, «Ամէնուն տարեցոյցը», Փարիզ, 1927, էջ 192-239:

2. Ակինեան Ն., *Հայ Կիպրոս*, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1937, թ. 6-8, հունիս-օգոստոս, էջ 378-381:
3. *Բաբգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ*, «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 1936, թ. 7-9, էջ 289-297:
4. Հովհաննիսյան Է., *Խորհրդային Հայաստանը էջմիածին-Անթիլիաս հարաբերությունների համատեքստում 1920-1940-ական թվականներին,*- Խորհրդային Հայաստանը 1920-1930-ական թթ., Գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., 2020,էջ 74-98:
5. Հովհաննիսյան Է., *Կիլիկիահայության հաստատումը Կիպրոսում և Կիպրոսի հայոց թեմի վերակազմավորումը 1920-1930-ական թթ.,* «ՎԷՄ», Ե., 2021, թ. 1, էջ 226-261:
6. Հովհաննիսյան Է., *Մարտնչող անաստվածների միության գործունեությունը Խորհրդային Հայաստանում 1920-1930-ական թթ.,* «էջմիածին», 2014թ., հունվար, 100-107:
7. Հովհաննիսյան Է., *Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կիրակնօրյա դպրոցների հիմնումը և նրանց դերը հայապահպանության գործում,* «Պատմություն և Մշակույթ», 2020, թ. 1, էջ 216-225:
8. Հովհաննիսյան Է., *Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը Կիլիկիո կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ և հայրապետ (1936-1940թթ.),* «էջմիածին», 2020, հոկտեմբեր, էջ 123-138, նոյեմբեր, էջ 116-129:
9. Ղազարոսյան Հ., *Տանն Կիլիկիո Կաթողիկոս Սահակ Բ-ի ազգասիրական գործունեությունը և կիլիկիահայությունը,* «էջմիածին», 1990, մայիս-հուլիս, էջ 93-102:
10. Andrekos Varnava. *Cypriot Emigration*, *1820s-1930s*: Economic Motivations within Local and Global Migration Patterns. Bridging Boundaries in British Migration History: In Memoriam Eric Richards. Edited by Marie Ruiz.- London: Anthem Press, 2020, pp. 95-122.

Ե.Մամուլ

Թերթեր

1. «Ազդակ», Պէյրութ, 1940:
2. «Արաֆս», Լառնակա, 1924-1927:
3. «Արմենիա», Մարսել, 1902:
4. «Արև», Ալէքսանդրիա/Գահիրէ, 1922, 1925-1928, 1930, 1931, 1933, 1934, 1940:
5. «Զարթոնք», Պէյրութ, 1940:
6. «Ժամանակ», Կ.Պոլիս, 1930:
7. «Յուսաբեր», Կահիրե, 1927:

Ամսագրեր, հանդեսներ, տարեգրքեր

1. «Ազատ Յեկեղեցի», Երևան, 1927:
2. «Ամէնուն տարեցոյցը», Փարիզ, 1927:
3. «Էջմիածին», Ս. Էջմիածին, 1945, 1990, 2014:
4. «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1937:
5. «Հասկ», Անթիլիաս, 1934-1944:
6. «Պատմություն և Մշակույթ», Երևան, 2020:
7. «Սիոն», Երուսաղեմ, 1931, 1940:
8. «ՎԷՄ», Երևան, 2020:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբդալլահ Անդրհորդանանի թագավոր – 54
Ազիրյան Գրիգոր – 118
Ալթունյան Մարտիրոս – 97, 100, 104
Ալպոյաճյան Արշակ – *8*, 16, 17, 19
Ակինյան Ներսես – 7
Ասլանյան Հ. – 83
Արտավազդ արքեպիսկոպոս Սուրմեյան – 118, 119
Բաբկեն Ա. Կյուլեսերյան – 4, 7, 9-12, 15, 17, 18, 30, 36, 56, 57, 63-67, 69-71, 73, 74, 77, 81, 82, 93, 98
Բակուրան – 7, 57, 81
Գաբրիել Պուո – 112, 119, 121
Գայլգճյան Մաթիլդ – 96, 97, 108
Գայլգճյան Սիմոն – 96, 97, 99, 108
Գարեգին Ա. Հովսեփյան – 56
Գյուլբենկյան Գալուստ – 102
Գյուլբենկյան Գյուլապի – 98
Գրիգոր Դ. – 4
Գևորգ արքեպիսկոպոս Զորեքչյան – 111, 115-117, 120
Գևորգ Դ -129
Գևորգ Ե Սուրենյանց – 34-36
Գևորգյան Արամ – 41, 45, 67
Եազմճյան Պ. – 75
Եղիայան Բյուզանդ – 7, 94, 104, 107, 108, 118, 127, 128
Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան – 37
Եղիշե արքեպիսկոպոս(եպիսկոպոս) Կարոյան – 22, 27, 58, 59, 118, 120, 123, 124, 129
Եսայան Զապել – 85
Երամյան Խոսրով – 97, 100
Զավեն արքեպիսկոպոս Եղիայան – 30-34, 36, 37, 40

Զարեհ վարդապետ Փայասլյան – 112
Էտտե Էմիլ – 119, 121
Թաշճյան Լևոն – 30
Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան – 37, 88, 90, 94, 118
Թութունջյան Խոսրով – 118
Իրիկյան Նազարեթ – 41
Լևոնյան Վահրամ – 41
Խաղ արքեպիսկոպոս Աջապահյան – *65,* 118, 120, 129
Խաչատրյան Հարություն – 11
Խերյան Մաթևոս – 97, 98
Խորեն Ա. Մուրադբեկյան – 94, 96, 112, 113, 118, 125
Խորեն քահանա Գուլիկյան – 75, 125
Կեպենլյան Ս. – 82
Կյուլպենկյան Պատրիկ – 88, 90
Հովակիմյան Հարություն – 104
Ղևոնդ ծ. վարդապետ Ջեպեյան – 125
Ճամուզյան Լևոն – 101
Ճիվելեկյան Արմենակ – 41
Մագսուտյան Մագսուտ – 82
Մաթևոս եպիսկոպոս Գայլբգճյան – 96
Մալեզյան Վահան – 85, 89
Մանուշակյան Հարություն – 86
Միթթելհոսեր – 121
Հուսեյն իբն Ալի ալ-Հաշիմի – 53, 54
Մելիքյան Հարություն – 71
Մելքոնյան Կարապետ – 30-34, 51, 56, 63, 73, 90
Մելքոնյան Գրիգոր – 63
Մեսրոպ արքեպիսկոպոս Նարոյան – 103
Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյան – 111, 112, 114, 116, 120
Մկրտիչ Ա. Քեֆսիզյան – 129
Մոստիչյան Մարտիրոս – 82, 83

Յություճյան Վահրամ – 105
Նորատունկյան Գաբրիել – 20, 85
Շանթ Լևոն – 118
Պալյան Կարո – 57, 103
Պարույր վարդապետ Մինասյան – 125
Պետելյան Հարություն – 67
Պետրոս Ա. Սարաճյան – 7, 9-12, 15-17, 19-23, 25-33, 35, 39-43, 46-56, 58-63, 69-74, 77, 78, 80, 84-91, 93-101, 103-109, 111, 112, 114, 115, 118-130, 132-134
Պոհճալյան Հարություն – 41, 58
Պողոս Նուբար – 33, 85, 90
Ռոնալդ Սթորս – 23, 48, 51, 53, 61, 92
Սահակ Բ. Խապայան – 3-5, 9, 10, 12, 15, 16, 18, 19, 21-23, 25-36, 40-43, 45, 46, 48, 51, 52, 57-63, 66, 73, 79-81, 86-90, 92-96, 98, 99, 101, 102, 108, 109, 126, 127, 129, 130
Սուլթանյան Սաթենիկ – 59
Տեր-Գալուստյան Մովսես – 117
Ուզունյան Տիգրան – 72
Ուրֆալյան Ստեփան – 22
Փոստոյան Շմավոն – 11
Քասունի Մանուել – 82
Քեշիշյան Կարապետ – 86
Քյուրքճյան Վահան – 90
Քընաճյան Սարգիս – 103, 108
Օհանյան Մեսի – 82
Օտաճյան Պողոս – 55
Օտյան Գրիգոր – 114
Ֆեյսալ Իրաքի թագավոր – 54

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ադանա – 11, 12, 14, 17, 19, 25, 58, 72, 84, 97
Ալեքսանդրետ – 106, 110, 117
Ալեքսանդրիա – 34, 63, 99
Ամիանթոս – 16, 73, 74
Ամերիկա – 17, 18, 72, 90
Անդրհորդանան – 53
Այնճար – 106
Անթիլիաս – 3, 5, 60, 94-113, 115-117, 119-121, 125-129, 133, 134
Արարա – 79
Արևմտյան Հայաստան – 11, 15, 17
Բեյրութ – 10, 37, 81, 95, 97, 98, 100, 126, 127
Դամասկոս – 10, 37, 110
Դեր-Զոր – 104, 105
Եգիպտոս – 37, 88, 90, 99, 101
Երուսաղեմ – 4-6, 9, 10, 33, 34, 36, 37, 95, 96, 111, 115-120, 125, 126, 130
Էջմիածին – 34, 109, 114
Թուրքիա – 15
Իդլիբ – 10
Իրաք – 54
Լաթաքիա – 111
Լառնակա – 8, 16, 22, 27, 42, 55, 58, 70, 72-74, 77, 82-84, 88, 91
Լիբանան – 3, 17, 23, 34, 37, 38, 62, 81, 85, 88, 89, 94, 95, 97, 99, 100, 106, 110, 112, 113, 117, 119, 121, 122, 124, 126, 130
Լիմասոլ – 16, 59, 73, 74, 77, 85, 88
Լոնդոն – 20, 49, 50, 56, 102
Խորհրդային Հայաստան – 18, 36, 78, 81, 113, 122
Կահիրե – 65, 96
Կիլիկիա – 3-11, 14, 17-19, 22-29, 31-39, 43-45, 56-58, 60, 62-66, 68-70, 79-82, 84-88, 90, 93-98, 101, 104-112, 114, 116-131, 133, 134

Կիպրոս – 3-10, 12-53, 55-89, 91-95, 103, 107, 110, 125-128, 130-134
Կիրենե – 16
Կ.Պոլիս – 4-6, 9, 25, 30, 33, 35, 37, 87, 103, 111, 117, 119, 125, 126
Հալեպ – 3, 10, 25, 29, 37, 43, 66, 81, 110, 111, 114, 130
Հաճն – 10-12, 19, 31, 128
Հայաստան – 120, 122
Հիջազ – 53
Հռոմ – 20
Հունաստան – 48-51, 53
Մամըլթեյն – 81
Մանչեսթր – 101
Մեծ Բրիտանիա – 14, 23, 49
Մերձավոր Արևելք – 99
Մերսին – 82, 84, 85
Մեքքա – 53, 54
Նիկոսիա – 14, 16, 21, 30, 41, 53, 55, 56, 65, 69, 71-75, 77-79, 81, 82, 88, 90
Նոր Հաճն – 127
Փարիզ – 20, 90, 119
Սիս – 114
Սիվրիհիսար – 9
Սիրիա – 3, 17, 18, 25, 26, 29, 32, 34, 37, 38, 62, 85, 88, 94, 95, 99, 104, 106, 110, 119, 122, 124, 130
Սուր – 106
Վաշինգտոն – 20
Վաղարշապատ – 114
Տարսոն – 17
Քեսապ – 111
Օսմանյան կայսրություն – 17
Ֆամագուստա – 16, 30, 55, 73, 74, 88
Ֆրանսիա – 105

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

Գլուխ 1.
Կիլիկիահայերի հաստատումը Կիպրոսում և թեմի վերակազմավորումը 1920-1930-ական թվականներին
1.1. Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյան. կենսագրական գծեր 9
1.2.Կիլիկիայի հայ գաղթականների հաստատումը Կիպրոսում 14
1.3. Կիպրոսի թեմի վերակազմավորումը Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության ներքո 25
1.4. Կիպրոսի ազգային իշխանության մարմինների վերակազմավորման գործընթացը 1920-1930-ական թվականներին 39
1.5. Կիպրոսի ազգային մարմինների հարաբերությունները անգլիական իշխանությունների և հույների հետ 48

Գլուխ 2.
Կիպրոսի թեմի ջանքերը հայապահպանության և գաղթականների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ 1920-1930-ական թվականներին
2.1. Հոգևոր-կրոնական կյանքի կազմակերպումը 55
2.2. Կիպրոսի թեմի ջանքերը ազգային կրթության կազմակերպման ուղղությամբ 69
2.3. Կիպրոսի հայկական համայնքի հասարակական-մշակութային կյանքը 77
2.4. Կիպրոսի թեմի ջանքերը որբերի և գաղթականների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ 84

Գլուխ 3.

Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ և կաթողիկոս (1936-1940թթ.)

3.1. Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի ձեռնարկները կաթողիկոսական փոխանորդության շրջանում (1936-1940թթ.) 93

3.2. Պետրոս Ա. Սարաճյան. Կիլիկիո աթոռի գահակալը..... 109

Վերջաբան 130

Summary 135

Резюме 137

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ 139

Անձնանունների ցանկ 144

Տեղանունների ցանկ 147

ԷԴԳԱՐ ԳԱԳԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԻՊՐՈՍԻ ԹԵՄԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՊՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ (1920-1940թթ.). ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԱՃՅԱՆ

Կազմի լուսանկարում Կիպրոսի հայոց Սուրբ Մակար վանքն է:

Ստորագրված է տպագրության՝ 05.06.2021: Չափսը՝ 60x84 1/16:
Տպագրությունը՝ օֆսեթ: 9.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 200:

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ

ՈՒՍԱԿՆ

հրատարակչությունում
Երևան Գր. Լուսավորչի 6
Էլ. Փոստ՝ lusakn@rambler.ru